

ՅԵՐ. ՄԻԱՍԵՐԵԱՆԻ

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ

ԱՆՈՒՆՈՎ. ՏԵՏՐԱԿԻՆ

ՔՆԵԱԿԹԻԿՆԵԼ

ԵԵ

ՀԵՐՔՈՒՄԸ


ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵԱ

— 1873 —

ԳԵՐ + ՄԻԱՍՆԵՐԵԱՆԻ

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ

Ա. ՆՈՒՅՆԱԿ ՏԵՍՐԱԿԻՆ



Ք Ն Ն Ա Խ Թ Ի Կ Ի Ն Ը

ԵՀ

ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԵՐՔՈՒՄԸ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

— 1873 —

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՐՔՈՒՄԸ

ՅՈՒՍԱԾՈՒՅՆ



Թ է կ է լ

Աշուեցաւ 'ի կշիռ և գտաւ պակասեալ
Գոհեւ ե. 27 :

Գեր . Գաղանճեանին — Վերջնահան պատասխան
Ս. ըեւելքայց առ Ս. ըեւեմուայու — անունով տետրա-
կին վրա ասկէց առաջ — Ս. հարէկութիւն ճը — ըրած-
էինք , և ամենուն դիւրամատոյց ըլլալու համար ,
գտնուած տեղերը լրագրոյ միջոցաւ Յարգոյ Հա-
սարակութեան ծանուցինք : Յիշեալ գործոյն գտած-
բարիոք ընդունելութիւնը՝ մեզի պարտք կը հա-
մարինք գոհութեամբ սրտի յայտնի ընել :

Ետքէն լսեցինք որ՝ նոյն Գրուածքին պատաս-
խան մը տրուեր է . բնականապէս հետաքննութիւն
ունեցանք նոյնը աեմնել , բայց բաւական աշխա-
տելու պէտք եղաւ՝ մինչեւ որ յաջողեցանք անկէ
օրինակ մը ձեռք բերել :

Ինչ և իցէ նոր տետրակին մակագիրը այս է
— Քանի ճը խօս՝ Ս. հարէկութեան ուերբակին անառան հեղինակն
դէմ : Խնչո՞ւ արդեօք չեղինակն դէմ , և ոչ անոր
ժրաներան . հոգ չէ , գուցէ այս ալ նոր ոճ մըն է :
Յիշեալ ծետրակին հեղինակն է Վեր . Միա-
սերեան . մեզի համար նոյն է , ով որ կուզէ ըլ-
լայ : Վասն զի մեր գործը հեղինակին անձին հետ
չէ , այլ իբ հեղինակութեանը կամ գրածներուն
հետ : Վեր խնդիրը անձնական չէ , այլ սկզբուն-
քի : Անձանց գատաստանը մեզի չիյնար , այլ զեր -

նագունից, որոնք արդէն իսկ տեսեր են զայն, և
որոնց մտադիւր հպատակիլ է մեր պարտքը:

Յիշեալ դրուածքը երբ ձեռքերնիս հասաւ,
անմիջապէս վերջական Պատահանայն և Ախարիստեան
մէջ յուղուած վէճին ասպարէզն իջանք, և նոյն
վէճին որոշիչ կէտն եղող Փլորենտեան ժողովոյ
մեծահռչակ վճռոյն կողմը ուղղեցինք մեր մտադ-
րութիւնը: Բայց ո'քամի մեծ եղաւ մեր զարման-
քը, երբ տեսանք որ հակառակ կողման ախցան,
այս անառիկ հոչակած դիրքերնին՝ թողեր լքերէ,
և իր փախուստը ծածկելու համար միայն, որոշեր
է ցան և ցիր ժանի օք իտու սփուել:

Սակայն գոնէ ուղենար հետեւիլ ան սկզբանը
զոր ՚ի գլուխ գրուածոյն կարձանացնէ ըսելով՝ — Ո՞ւ
և իշե քիչքանակնենը և քիչքանակն քրուածու՝ ուրիշ վահ-
ան չէ ինար ունենալ, բայց ենէ բնուել որոն զբայ և քիչ-
ունչ առելի եռ պարբել — : Բայց անիկա այն տեղուան-
քը չէ ըսկըզբունք մը դրերէ դիտաւորութեամբ՝
բնաւ անոր չի հետեւելու :

Ապա թէ ոչ եթէ դոնէ իր դրած սկզբուն-
քին հետեւէր, պէտք էր որ՝ Ակնարկութեան մէջ
մեր ըրածին պէս վարուէր, Այսինքն մէջ ըերէր,
ինչ որ մենք ըսած էինք ՚ի հերքումն երկու ուրոյն
ներկայացնելու գերք: Գաղանճեանի, և անոր ստորագրած
Ք Արքաւուն ենթացան, և մի առ մի ցրէր զանոնք,
և ապա հաստատէր վերջական պարագաներն դրութիւնը,
եթէ կլինար:

Կոյնոքս ցուցնէր որ՝ Գեր, Գաղանճեանին

մէջ բերած չոփոխովի և չոփորաց բաշարութիւնն է՝ Փլո-
րենտեան ժողովոյն սահմանած ձեւը, և ոչ եթէ
մեր մէջ բերած վճիռը (Ակնարկութիւն եր. 22
— 24): Վասն զի ինչպէս ամեն ընթերցող յառա-
ջին ակնարկութեան կընայ տեսնել. այս երկու յեւերը,
որ այնչափ իրարմէ հեռու են կազմութեամբ և ի-
մաստիւք՝ որչափ երկինք յերկրէ, այս երկու յեւերը՝
կըսեմ, անհնար է որ միանդամայն կարող ըլլան
ծըլմարիտ ըլլալ: Կամ մէկը և կամ միւսը պէտք
է որ՝ հարկաւ շինծու և խարդախ ըլլայ:

Մենք ցուցինք որ շինծու և խարդախը՝ Ա-
քառական դաշնորութեան յնան է. և թէ Գեր. Գաղանճեան
խանդարեր, այլայլեր, յապաւեր և յաւելցուցեր
է բուն վճիռը: Բնական, ամենապարզ և կարճ
ճամբան այն էր որ՝ ինքն ալ ասոր հակառակը ցը-
ցունէր, Գանի որ ասանկ չըներ (արդէն չի ալ կըր-
նար ընել), կամայ կամ ակամայ կըստիպուի խոս-
տովանիլ մեր ըսածներուն ճշմարտութիւնը և ըն-
դունիլ զայնս իր ամեն հետեւութիւններովը:

Քանի որ ասանկ չըներ՝ կը յաւելունք, պէտք
է ինքն ալ համազուի որ՝ առանց ընտրելու ընդու-
նելի և անընդունելի, յարմար կամ անյարմար՝
քանի մը վկայութիւն խառն ՚ի խուռն ՚ի մի վայր
խճողելէն բնաւ չի կընար ձեռնտուութիւն մը գըտ-
նել իր պաշտպանած գատին, և ոչ իսկ արդարաւ-
թընէլ (եթէ կարելի ըլլայ) Գեր. Գաղանճեանին
պիտի նախադասութիւնը և ըրած խանդամանքը
՚ի վճիռն Փլորենտեան:

Վեր . Միասերեան իր դրօշին հաւատարիմ չէ , և ոչ իր դրօշակրին ետեւէն երթալու հոգ կը տանի : Ինք կուզէ դրել . և ասոր միայն փոյթ կը տանի՝ որ ըստի թէ բան մը դրեց . ուստի և կը նայի ժողովելու ամեն բան՝ ինչ որ գտնէ՝ զշարս և զբարիս , որպէս զի լեցուին իր տետրակին էջերը :

Իսկ մենք համոզուած ըլլալով՝ որ ճշմարտութիւնը ոչ 'ի յուղման կրից և ոչ 'ի շփոթս խառնածայն խօսից կը գտնուի . այլ 'ի յօդ հանդարտ և 'ի ճիշդ պարզութեան : Ասոր համար փոխանակ խառն 'ի խուռն բաղսելու իրեն հետ . ինչպէս ինքն ըրած է առաւել եւո շփոթելով ինդիրը . կուզենք կարգաւ քննել իր խօսքերը , կշռել անոնց արժէքը . և իր հանած հետեւութեանց ծռութիւնը ցուցնելով՝ հերքել զանոնք . բայց յամենայնի այս պիտոր ըլլայ մեր ոճը և ընթացքը , տեռնուիլ նախ մեր ախոյենին հետ վէճին բռն ասպարէզին վրա , և ապա հետամուտ ըլլալ՝ ուր որ գտնենք զինքը :

Խօսքերնիս պարզ և դիւրիմաց ընելու համար՝ 'ի դէպ կը դատենք մեր այս գործքը մասերու բաժնել , որոնք երեքէն աւելի չխպիտոր ըլլան :

Առաջին մասին մէջ պիտոր տեսնենք . ինչ որ վեր . Միասերեանն խօսեր է 'ի հաստատութիւն Առաջասեան բրանտեան , այսինքն երկու սորոյն եկեղեցեաց և գ Առեւելն եկեղեցեաց . և ինչ որ ինքը աւելցուցեր է մէջ բերել Պատրիարքական աթուայ էլեւանութեան սպարագրեւ ընելը համար :

Երկրորդ մասը՝ Փլորենտեան ժողովոյն և անոր

վճռոյն վրա վեր . Միասերեանի ըրած խօսքերուն քննութիւնը կը բովանդակէ :

Երրորդ մասով կուզենք ակնարկութիւն մը ընել իրեն նոր բունած դրեցը վրա :

Այս է ահա մեր առաջիկայ գործոյն բովանդակութիւնը . բայց ասոնց մատչելքն առաջ պատշաճ կը համարինք համառօտիւ մէջ բերել ինդրոյն վիճակը , որ կը յուղէր Անտառիստեան և Վերջնական Պատրասիանոյն մէջ :

ԽՆԴՐՈՅՆ ԲՆԻԿ ՎԱՃԱԿՐ

Պեր . Գազանճեան Ռւզափառութիւն մի
ճանչնալով յէութեան կամ ՚ի հաւատոս (եր . 3. և 4.) .
կը բաժնէր զայն յերկո ուրոյն եկեղեցի , որոնց մէկը Սրբ-
ութեան և միւսը Սրբւայրեան կանուանէր : Այս բաժան-
ման , կամ երկու եկեղեցեաց ծագումը Քրիստո-
նէութեան հետ հասակակից կը գնէր և Սրեւել-
եան անուանած եկեղեցւոյն հետեւեալ յատկու-
թիւնները կուտար . ըսելով՝ թէ Սրեւմտեանէն
տարբեր և զանազան Սրեւելեան եկեղեցին ունի
յատուկ կազմութիւն , կացութիւն , կերպաւորու-
թեան եղանակ , օրէնք , ծեսերէն և արարողու-
թիւններէն աւելի ծանր և կենսական , և իր զո-
յութիւնը կազմող յատկութիւններ , անլուծանելի ,
անընդհատ սովորութիւն , անարատ , անբունաբա-
րելի և անեղծանելի իրաւունք , սեփական եկեղե-
ցական բարեկարգութեամբ ինքնութիւն , անմի-
ջական նուիրապետական դլուխ , և յատուկ և ա-
ռանձին նուիրապետութեամբ լարչութիւն , տար-
բեր (յԱրեւմտեայց և այն էական) կախումն ի Քա-
հանայապետէն չոռվմայ , զոր միայն իբր Պապ և
իբր ընդհանուր եկեղեցւոյ Նախագահ կը ճանչայ
և կը պատուէ : Եւ հուսկ ուրեմն ստոյգ և իրաւա-
ցի է որ՝ այս արեւելեան եկեղեցին կազմեալ և

հաստատեալ է միշտ՝ ՚ի սկզբանէ , ՚Քրիստոնէութեան առջի դարերէն , եկեղեցւոյ հետ սկսելով . և յիշատակեալ յատկութեամբք՝ որոնց ջնջումը պահանջելը՝ ընդդէմ է Աստուծոցն , եկեղեցական և մարդկային օրինաց , և հում պահանջողութիւն (Վերջ . Պիտ .) :

Եւ իր այս դրութիւնը հաստատելու համար բաւական կը համարէր մէջ բերել Փորենտեան ժողովոյն վճիռը՝ իբր բովանդակիչ վճռոց այլ ժողովոց . զոր ինքը համար կանուանէր , որով երկու (Արեւմտեան և Արեւելեան) եկեղեցեաց գլուխները (Պատը և Արեւելեան Պատրիարքունք) իրարու հետ կապուեր են , ինչորով մէկ մէկու իրաւունքները ճանչնալով . Եւ աւելի՝ Պատը ճանչցեր է որ Արեւելեան Աթոռոց իրաւունքները անորոշ և անբարեփորտելի են . և թէ ասիկա՝ Պատերուն կողմանէ վերաբերութեան մը առաջ եկած չէ , այլ ընդհանուր ժողովոց գործքերուն և եկեղեցական կանոնաց մէջ այսպէս աւանդուած ըլլալուն համար . ինչպէս կը բացատրէ եղեր Փլորենտեան ժողովը . ըստ այս առաջնորդ եւայլն բառերով (Վերջ . Պիտ . Եր . 9) :

Ակնարկութեան հեղինակը՝ Ա. կը մերժէր այս դրութիւնը , և կը ցուցնէր որ՝ Գեր . Պաղանձեանին դրութիւնը բոլորովին անդոյ և անհիմն էր : Եւ եթէ ասանկ դրութիւն մը կարող ըլլար տեղի ունենալ , անշուշտ կը վնասուէր և կեղծանէր իր երկու եկեղեցեաց միութիւնը ՚ի հասարաւ , զոր ին-

քըն կարեւոր դատեր և մանաւանդ իր գրուածոյն հիմն առեր էր :

Բ. Կը ցուցնէր որ՝ Եթէ Գեր . Պաղանձեանին նկարած՝ արեւելեան եկեղեցւոյ դաղափարը , Ակակեան , և մանաւանդ՝ Փոտեան և Կերուլարեան հերձուածոց մէջ ծնունդ առած էր :

Գ. Խոկ ուղղափառաց համար , թէ՛ ՚ի սկզբան ՚Քրիստոնէութեան և թէ՛ Եկեղեցւոյ առաջին դարերուն մէջ , այս — Արեւելեան էկէպէցի — . — Արեւելեան էկէպէցի — անուններն անդամ անձանօթ էին :

Դ. Թէ՛ այս յորջուցանց ժաֆունը՝ արտաքոյ Եկեղեցւոյ բնուուելու է : Ծախունը , վասն զի թէեւ ետքէն այս յորջործումները դործածուեցան նաեւ յեկեղեցւոյ , բայց այն միշտ անյատուկ կերպով և ու երբեւ այնու առմամբ և իմացուածով որով կը դործածէ զայն Գեր . Պաղանձեան : Ըստ այսմ Ակնարկութեան հեղինակին մերժածը՝ Աստիասեան արեւելեան եկեղեցին էր . զոր այսօր ալ կը մերժէ նայն էրրուն , ինչպէս կը մերժեն զայն բոլոր ուղղափառք . և չի ճանչնար բնաւ երիս տարբեր և զանազան էկէպէցի . այլ ՚ի հայն կընդունի և կը դաւանի . ըստ այնմ — Հաւատամք ՚ի Մի ՄիԱՅՆ . . . Եկեղինթի — : Հետեւաբար չի ճանչնար գյատուկ Արեւելեան եկեղեցի մը զանազանեալ յԱրեւմտեանէն՝ ինչպէս կըսարադրէ զայն Գեր . Պաղանձեան : Կը հրաւերենք զՎեր . Միասերեան՝ որ նորէն ճարտրութեածք կարդայ Ակնարկութիւնը , և յայտնի կը տեսնէ մեր ըսածներուն ստուգութիւնը :

Վեր . Գաղանճեանին իր դրութիւնը հաստատելու համար՝ Փլորենտեան ժողովը վկայ կոչելուն գալով, Ակնարկութեան հեղինակը նոյն ժողովոյն բուն վճիռը հարազատ թարգմանութեամբ մէջ բերելով ցուցեր էր որ՝ անիկա հիմն ՚ի վեր կը տապալէր Գեր . Գաղանճեանին խարխուլ շէնքը և դրութիւնը, որ և (Գաղանճեանն) չի համարձակելով մէջ բերել ՚ի վկայութիւն կոչած ժողովոյն վճիռը . ձեռնարկեր է խանդարել, այլայլել, յապաւել և յաւելցնել, որպէս զի ՚ի դոյ ելլէ այն երազեալ հոգիութեան ու աշխարհութեան որով գոնէ առ երեսս նեցուկ տրուած համարուի վերը յիշուած անհիմն շէնքին :

Ահա այս էր խնդրոյն բովանդակութիւնը և վիճաբանութեան դիրքը :

Վեր . Միասներեան ուղղակի պատասխանելին կրդդուշանայ . այլ կը ջանայ որչափ հնար խառնակել . գուցէ կը կարծէ ՚ի խառնաձայն խօսից և ՚ի պղտոր մժութենէ բան մը որսալ. անօդուտ աշխատանք, մնութի՛ յոյս . որչափ որ ջանայ այս ճամբով հարկ ՚ի վրա կայ հուսկ ուրեմն խոստովանիլ եթէ զամենայն ժնւր աշխատ եղեաք և աւ նու կալքա : Վասն զի մինչեւ որ ճշմարտութեան Արեգակը չի ծագի՛ անհնար է տուատ որսայ հանդիպիլ :

Ա.

Վեր . Միասներեան պաշտպանել կը կարծէ Սուքիասեան դրութիւնը, երբ կըսէ թէ Գեր . Գաղանճեանին Արեւելքցիները կամ Արեւելեան եկեղեցիները իբր մի յիշատակելը դայթակղեցուցեր է Ակնարկութեան հեղինակը : Ի հաստատութիւն բանից իւրոց վրա կը բերէ որ — եթէ այսպիսի Աստուածաբանական հարազատ բացարութիւն մը դայթակղական է, ալէտք է որ հակառակորդ նախ Պետեղիկոս ԺԴ. Արբազան Պապին վրա դայթակղի ու զանիկայ դատապարտէ — :

Կը պատասխանենք,

Նախ . Վեր . Միասներեանն իր անձէն չափելով, կը կարծէ թերեւս՝ որ մենք ալ Գեր . Գաղանճեանին խօսքերէն դայթակղելու չափ տկարութիւն ունենանք : Եթէ այդ այդպէս ըլլար՝ մենք ալ դուցէ իրեն պէս դայթակղած կը լլայինք, բայց փառք չնորհացն Քրիստոսի, որ զմեզ այդչափ փոքրոդի և տկարամիտ չէ ստեղծեր :

Երկրորդ՝ չունինք դարձեալ իր յանդգնութիւնը որ Քահանայապետի մը, այսինքն՝ երկրիս վրա Քրիստոսի փոխանորդին խօսքը կամ գործքը դատենք, ուր մնաց դատապարտել. ինչպէս ինքը

յանդուգն ժպրհութեամբ կընէ (յեր . 46.) : Վասպն զի գիտենք մեր չափը , և կը ճանչնանք մեր պարտքը :

Երբորդ . արեւելքան եկեղեցի յորջորջումը՝ Աստուածաբանական գիւտ մը չէ , և ոչ Աստուածածաբանական հարազատ բացատրութիւն մը : Բուք եմ և կը կրկնեմ , այս յորջորջան ծագումը ոչ յեւ կեղեցւոյ , այլ արագութառ առաջ եկած է . որ թէեւ Եկեղեցւոյ մէջ ալ գործածուեցաւ բայց անյատուկ կերպով , և ոչ ըստ ճշդութեան բանի : Ետքէն երբոր այն մոլար դարափարը երեւան ելաւ որով կուղուէր չին Հռովմի Աթոռոյն հաւասարեցնել՝ նոր Հռովմի (Կ—Պօլսի) Աթոռը , ան ատեն յիշեալ յորջորջումը չարաչար նշանակութիւն մը ունեցաւ : Յոյնք Արեւմուտքը միայն Քրիստոսի փոխանորդին թողլով , կուղէին որ Արեւելքը իշենց չորս Պատրիարքաց մնայ , կամ մանաւանդ Կ—Պօլսի Պատրիարքին վերին իշխանութեան ներքեւ ըլլայ . ուստի և կը պնդէին որ՝ ինչպէս չին Հռովմի Աթոռը Առաջին էր և մեծամեծ արտօնութիւններ ունէր . պէտք էր որ Նոր Հռովմի (Կ—Պօլսի) Աթոռն ալ հաւասար Անոր պատիւ ընդունէր իբր երկրորդ Աթոռ զինի . նորա . և ըլլալ հրամանատար միւս երեք (Աղեքսանդրիոյ , Անտիոքայ և Երուսաղէմի) Պատրիարքաց վրա . և նաեւ բարբարոսաց մէջ (այսինքն Հռովմէական Խնդրակալութեան սահմաններէն դուրս յԱրեւելք) գտնուած վիճակաց եպիսկոպոսներուն (այսինքն Հայոց , Վրաց , Քաղդէաց ,

Հոգ և Պարսից) վրա գերագոյն դատաւոր : Մէկ խօսքով Արեւելեան Պատղ կամ Տիեզերական Պատրիարք (համօրէն Արեւելքյ) : Եւ որովհեաեւ Յոյնք էին որ ըստ այսմ տարապն օրէնսդիր կուզէին ըլլալ բոլոր Արեւելքի , կամ Արեւելեան Աղջաց և Եկեղեցեաց . ուստի , այս արեւելքան եկեղեցն՝ կանուանէր նաեւ յունիան եկեղեցի , իբր նոյնանշան . անանկ որ Արեւելքան և Յունիան բառերով մի և նոյն բան կիմանային : Եւ այս արեւելքան ըստած եկեղեցայ կընծայէին այն ամեն յատկութիւնները որով կըստուրագրէ զայն Գեր . Գաղանձեան : Յոյնք այս պահանջողութեան յօժարիլ սկսած էին երբ տակաւին կը ճանչնային չին Հռովմի Աթոռոյն գլխաւորութիւնը և Անոր հպատակելու պարտքերնին . բայց ան ատեն մեղմով և իբր նորհք ինդրելով զայն 'ի Ա. Պապից : Նոյն իսկ Քաղկեդոնի ժողովոյն առթիւլ փորձ փորձեցին նոյնը վերոգրեալ կերպով ձեռք բերելու , բայց Մեծն Լէոն Քահանայապետը իրենց դէմ քաջ ախոյեան հանդիսանալով 'ի պաշտպանութիւն միութեան Եկեղեցւոյ , և արտօնութեանց այլոց Եկեղեցեաց , յետս առնելու ստիպուեցան այս իրենց ամբարտաւան պահանջողութիւնը : Վերոյիշեալ Ակակեան , Փոտեան և Կերուլարեան հերձուածոց ժամանակ կարծեցին Յոյնք թէ ստացան զայն , և կը թուէր իմն՝ որ գոնէ 'ի հերձուածի՝ յաջողածըլլան : Բայց աղէկ համոդուեցան երբ տեսան որ բան մը չէին կրցեր շահիլ և իրենք իրենց մնացած էին . վասն զի տեսան Փլորենտիոյ ժողովոյն մէջ ,

որ այս ուշեւէնն բառը հակառակ իրենց յօժարութեանը անձուկ նշանակութեամբ գործածուած է , Յունաց եկեղեցւոյն համար միայն : Եւ Արեւելեան Յունական եկեղեցւոյ քով կար չայկական Արեւելեան եկեղեցի մնալ , որ իրենց պէս ուղղակի բանակցութեան կը մանէր Առաքելական Աթուույն հետ , և ոչ ինչ ընդհատ պատուով ընդունելութիւն կը գտնէր Եւդինէս Դ. Ծայրագոյն Քահանայապետէն , որպէս և չայոցմէ ետքը ուրիշ Աղգերը ըստ կարդի :

Արդ՝ եթէ Յունաց այս մնապարծ կարծիքը , զոր կուղեն նորոգել Գեր . Գաղանճեանն և Աեր . Միասերեան ըստ ամենայն յարկանեանց , արդարեւ հարազար ասուածնեանէն բացարբարնեան մ'ըլլար , անշուշտ անհետ կըլլային մէկալ Արեւելեան Աղղերը և Եկեղեցիները . և մեր հակառակորդաց պաշտանել ուստած ազգային իրաւունքները և արտօնութիւններն ալ ինքնին յօդս կը ցնդէին : Ըսինք պաշտանել ուստած , ըստ որում անանկ կը համարինք որ՝ այս ըլլայ նպատակնին , թէպէտ իրենց ամենայն ճըդամբ պաշտպանածը Յունաց սկզբունքն է , որ կը դառնայ ի բնաբարձ ջնջումն չայոց և այլոց Արեւելեան Աղղաց : Բայց գիտնայ Միասերեան որ Առեւէնն բառը այսու առմամբ , ինչպէս կիմանան Գեր . Գաղանճեանն և ինքը ըստ Յունաց , չէ և չի կընար ասուածնեանէն հարողար բացարբարնեան մը ըլլալ , այլ հերձուածողական , մոլորական և անիրաւիչ իրաւանց և արտօնութեանց այլոց Աղղաց Ա-

ըեւելից : Հոս չատ յարմար կուգայ այն առածը թէ , լաւ է խելացի թշնամին քան զտիմար բարեկամը : Ըստ այսմ ահա ազգային իրաւանց մեր պանծացեալ պաշտպանները՝ մինչդեռ կը կարծեն թէ իրենց պոռոտախոս խառնագոչիւն աղաղակներովը կը բարձրացնեն զԱզգը , երօք և արդեամբք կուրանան նաեւ անոր գոյութիւնը , որպէս զի ընկղմեն զայն Յունականին մէջ :

Իսկ թէ ի՞նչ է Եւանք գործածուելուն բուն նշանակութիւնը . կուղէինք ամբողջ դաս մը աւանդել Վեր . Միասերեանի , բայց որովհետեւ խօսքերնիս երկարեցաւ յայսմ մասին , առ ժամս բաւական կը համարինք համառօտիւ անցնիլ :

Արդ՝ երբ ուղղափառք եղակի կը գործածեն այս Առեւէնն Եկեղեցի յորջորջումը , անով կիմանան այն ազգերը միանդամայն՝ որոնք կը վարուին իրենց սեփական լեզուաւը , ծիսիւը և սովորութեամբքը , որոնք հաւանեալ և կամ թոյլ տրուած են Ս. Աթուէն ՚ի գործադրիւ : Եւ որովհետեւ ասոնք ամենն ալ Արեւելքը կը գտնուին . ուստի փոխանակ ըսելու Արեւելքի մէջ գտնուած կամ Արեւելեան Եկեղեցի Յունաց , կամ Հայոց , կամ Ասորոց , Եւայլն . սովորութիւն եղած է նոյն յորջորջումը ընդարձակ նշանակութեամբ առնուլ՝ նաեւ ամենուն համար միանդամայն , բայց միշտ՝ ոչ ճշգութեամբ բանից և իբր անյատուկ բացարութիւն մը : Աս եղական բացարութենէն այս ալ կիմացուի որ՝ յիշեալ անուան տակ նշանակեալ ազգերը լատին լեզուն և

ծէսը չեն դորձածեր : Ինչպէս լատին լեզուն և ծէսը դորձածող ազգերը մէկ անուան տակ կը նշանակուին . ասանկ սովորութիւն եղած է նոյն լատին լեզուն և ծէսը չի դորձածողներն ալ մէկ անուան տակ ամփոփել : Եւ զի Յոյնք Արեւելքի մէջ միւս ազգերէն աւելի հզօր , ծաղկեալ և հռչակեալ էին . անոր համար սովորութիւն եղած է երբեմն ասոնց անունով նշանակել նաեւ միւսներն ալ . այսպէս կուելով Յունական կամ Արեւելեան եկեղեցի . բայց ոչ երբէք այս յորջորջումը ըստ չարաչար իմացուածոյ Յունաց դորձածուեր է . ինչպէս տեսանք վերը :

Ճշդիւ այսպէս կիմանանամենայն ուղղափառք և մանաւանդ նոյն ինքն Մեծանուն Քահանայապետն թենեղիկոս ՃՊ. որ Վեր . Միասերեանի յիշած տեղը . այսինքն նոյն Քահանայապետին յամի 1755 մարտի 25 ին տուած Աւլու սահմանադրութեան Գ. Յօդուածին մէջ . յորում մէջ կը բերէ նաեւ Փրուականտայի յամի 1702 յունուար 30 ին տուած վճիռը : Ահա սոյն վճիռը — ըստ առաջարկութեան Գ. Հ. Տեառն Կարուսի Օգոստինոսի Ֆապլանօ Քարտուղարի, սուրբ ժողովն հրաման ըրաւ՝ պատուիրել , ինչպէս ներկայ վճուովս կը պատուիրուի ամենայն և իւրաքանչիւր Առաքելական Վերակացուաց (Prefectus) և Քարոզչաց (Missionarius) Յուաց , Առաքելութեանց , որպէս զի այսուհետեւ անոնց մէ մէկը ինչ և իցէ պատճառանքը կամ պատուական ըրաւակաւ չի համարձակի որ և իցէ Արեւելեան

ո. ազգաց ուղղափառներուն տնօրէնութիւն տալ ՚ի ծոմն , յազօթս , յարարողութիւնս (Cerimonia) և ՚ի նմանիս , որոնք կարդեալ են նոյն ազգաց սեփական ծէսերն և հաւանեալ Առաքելական Ս. Աթոռէն : Ասոր համար նոյն Ս. Ժողովքը կը համարի թէ՛ չէր և չէ արժան որ յիշեալ Ուղղափառք՝ Հռովմէական Ս. Եկեղեցիէն վերը նշանակուածին պէս հաւանեալ ծէսերուն պահպանութենէն յետոս կասին : Եւ այս կերպ վճիռը այսպէս հաստատելով և նորոգելով , նոյն Վսեմափառ Հարք պատուիրեցին որ՝ ամենայն վերակացուք և քարոզիչք ամբողջ և առանց խուսափանայի Փրուականտայի վճիռը , որուն անմիջապէս վրա կը բերէ ինքն Քահանայապետն) Այս վճիռը կը պատկանի Արեւելեան Եկեղեցւոյ ուղղափառներուն և անոնց՝ Առաքելական Աթոռէն հաւանեալ ծէսերուն , և Արեւելեան Եկեղեցւոյ անուելէ բազիոնալ ամենայն յայտնի է . (Orientalem autem Ecclesiam omnibus notum est quatuor ritibus constare) . այսինքն են՝ Յունականը , Հայկականը , Ասորին և Ղփտին . և այս ամենքը ընդ միով անուածիր Յունական կամ Արեւելեան Եկեղեցւոյ կը նշանակուին » :

Ահա այս է Բենեղիկոս ՃՊ. Քահանայապետին խօսքը , զոր Վեր . Միասերեանն յապաւմամբ կարեւոր մասին , այլայլութեամբ և փոփոխութեամբ

մէջ բերեր է յեր . Յ . զոր տես վարը (1) : Եւ թէ պէտ երկաթագրով և բոլորագրով շեշտեր է քառ մը բառերը , բայց ինչ օգուտ որ ասոնց ամեն մուն մէջ չեն գտնուիր այն բացուռոյց , հողմակոծ և խրոխտապանծ բառերը և յատկութիւնները , ու բովք Գեր Գաղանճեան յունական իմն ոդւով և

(1) Ահա իր մէջ բերած հասուածը . «Արեւելեան Եկեղեցին , ինչպէս ամենուն յայտնի է , չորս արարողութիւն կը բովանդակէ իր մէջը . Յունարէն , Հայերէն , Արաբերէն և Ղապոց , որոնք ամենքը մէկտեղ՝ Յունական կամ Արեւելեան եկեղեցւոյ անուամբ կը նշանակուին » :

Արդեօք Վեր . Միասերեան այնպէս կը կարծէ որ Բենեդիկտոս Քահանայապետը Յունաց և իրենց առմամբը կը գործածէ . այս Արեւելեան Եկեղեցն յորջորջումը (զոր տեսանք վերը Եր . 6-8) . Եթէ այսպէս կը կարծէ , գիտնայ որ մեծապէս կը սիսակի : Ըստ որում նոյն Մեծանուն Քահանայապետը հաւասար ուղղափառ Յունաց պատուեց միշտ զՀայոց Եկեղեցին և մեծապարեւ մեծարեց զայն . բաւական է ընթեռնուլ միայն անոր ատենաբանութիւնները , զոր առթիւ հաստատութեան և տուչութեան Պալիսնի Պետրոս Ա. Բ. և Գ. Պատրիարքաց Կիլիկիոյ խօսած է . յորս կը փայլի Անոր մեծ համարումը Հայոց Եկեղեցւոյն վրա : Եւ եթէ մէկը չուզեր կոյր և զաշացու ըլլուլ ճշմարտութեան լուսոյն դէմ , անշուշտ կը տեսնէ Ա. Աթոռոյն Հայոց Եկեղեցւոյն ցուցած խնամքը : Վասնորոյ հեռի ըլլալով մեզմէ Քահանայապետաց գործքերը և խօսքերը դաստավարտելու յանդզնութիւնը , զոր (յեր . 5) կուզէ մեզի վերագրել Վեր . Միասերեան , և զոր ինքը արդեամբք և ժպրհութեամբ կընէ (յեր . 12 . և 16.) . երախտագէտ զգացմամբ կը պահենք 'ի մեղ՝ 'ի մասնաւորի նոյն Մեծանուն Քահանայապետին յիշատակը :

փոյթեռանդն յունասիրութեամբ ջանացեր է զարդարել իր Յունական Արեւելեան Եկեղեցն . և զորս կը կարծէ հաստատել Վեր . Միասերեանն :

Բենեդիկտոս ԺԴ . Քահանայապետին խօսքերը ամենայայտնի են , և ամենեւին մեկնութիւն չեն վերցներ : Մեծանուն Քահանայապետը ձեւերու վրա կը խօսի , և կըսէ թէ Արեւելեան մէջ չորս ձեւ կայ , յորոց կը քաղկանայ Արեւելեան Եկեղեցին , որ Յունական կամ Արեւելեան Եկեղեցւոյ մէկ անուանը տակ կը նշանակուի կամ կիմացուի : Բնդ հակառակն Գեր . Գաղանճեանն (վերջ . պի . Եր . 5.) կը զրուցէ որ՝ Արեւելեան Եկեղեցւոյ տարբեր կացութիւնը ձեւերէն և արտօնութեաններէն առեւ ձանր և հնասկան յարկութեաններու վրա կը կայանայ՝ որոնք յատուկ եկեղեցի մը կը կազմեն զայն և կը զանազանեն Արեւելեան Եկեղեցին : Զոր առաւել եւս կը ըացատը և բաղմապատիկ յատկութիւններով կը ճոխացնէ , որոնց ստուերն անգամ չիկայ Մեծանուն Քահանայապետին խօսքերուն մէջ :

Վեր . Միասերեանն փայլան անուն մը յիշելով՝ անշուշտ յոյց մը ընել ուղեր է , բայց ինքն ալ համոզուած ըլլալով որ՝ անկից չի պիտոր կրնայ իրեն ստայօդ խօսքին նպաստ մը դանել , անմիջապէս վրա կը բերէ : — Մէսունիւնը առեւմն , առանց վարչութեան վրա մնան Եանյարացնելու , իրայ այլ և այլ կերպով առնուիլ : Իսէ Քէրնական ուերգուին հեղինակը , և Արեւելեալ Պատրիարքուն ուրանեան մօքինակունեանը համար կը բործածէ : Ի՞նչ արդեօք կուզէ ըսել Վեր . Միասերեան , թերեւս

կը կարծէ որ՝ Բենեդիկտոս Քահանայապետին խօսքէն՝ զոր վերը յիշեցինք, և զոր ինքը յապատմամբ։ Քոփոխութեամբ և այլայլութեամբ մէջ բերերէ։ ասանկ հետեւութիւն կելլէ, օ՞ն անդը։ Ուստի ամփոփենք վերի խօսքերը։ Բենեդիկտոս Փ. Ծէսերու վրա կը խօսի. Վեր. Միասերեան — Միւթիւնը առանց վարչութեան վրա մինակ թանձրացնելու, այլեւայլ կերպով կրնայ առնուիլ — կը սէ։ Իսկ Վերջնական տետրակին հեղինակը — յԱրեւելս պահեալ Պատրիարքական դրութեան միօրինակութեանը համար կը գործածէ — եղեր։ Ուրեմն (ի՞նչ է արդեօք ասոնց հետեւութիւնը) ուրեմն — աւելորդ և ծիծաղական կըլլայ, եղեր, հակառակորդին դարմանքը —։ Այս նշանաւոր տրամաբանութեան խօսք չունինք, և այս մեծ քաջութիւնը Միասերեան մը միայն կրնայ ընել. որ և այս տրամաբանութենէն ետեւ կը կարծէ որ Ակնարկութեան բոլոր խօսածը Պատրիարքայ թուերուն փոփոխութեանցը վրա կը կայանայ եղեր, ուստի և անտեղի կը համարի Ակնարկութեան հեղինակին հանած ճիշդ հետեւութիւնները։ Վեր. Միասերեան թէ որ քիչ մը մտադրութեամբ կարդացած ըլլար Ակնարկութիւնը, կը տեսնէր անշուշտ եթէ անոր մէջ ըսուածները լոկ թուական փոփոխութեանց վրայ չէին էայանար։

Սոյնպէս եթէ մտադրութեամբ կարդացած Ակնարկութեան Պատասխանը կը տեսնէր Առաջաւան Աբեւլը և եկեղեցւոյն և անոր անդը նույնառութեաւու

նէան հանդամանքները, զորս քաղելով հաւատարմութեամբ մէջ բերերէ էր Ակնարկութեան հեղինակը։ Երկու տետրակիները մէջ տեղ են և Յարդոյ Հասարակութիւնն ինքնին կարսով է բաղդատել և ճշմարտութիւնը տեսնել։ Ուստի — իսունաշտին էսուէր — են ըսելով բան մը չի հետեւիր։

Բ.

Վեր Միասերեան Բենեդիկտոս Փ. Քահանայապետին խօսքերը յիշեց. բայց յայտնապէս տեսնուեցաւ վերը, որ անոնք իր պաշտպանած դրութեանը հետ յարաբերութիւն չունին. Կամ այնչափ միայն՝ որչափ որ ունին իրենց մէջ անհանձն և անհանձն բառերը, ան մասնիկով սկսուած ըլլանուն համար։ Ուրեմն ի՞նչ ընէ Վեր. Միասերեան, դրութիւն մը կուզէր հաստատել։ չի յաջողեցաւ. վկայութիւն մը մէջ բերաւ՝ իր պաշտպանել ուղած դրութեանը չի յարմարեցաւ, նա թէ հակառակ իսկ ելաւ։ Ուրեմն ի՞նչ ընէ. կամացուկ մը կը քաշուի վիճաբանութեան բուն ասպարիզէն։ և իր խօսքը ամփոփելով՝ կելլէ — Պատրիարքական անունը սորոնքելեները ննելը։

Լահնք իր խօսքերը. — Պատրիարքական իշխանութիւնը դրեթէ եկեղեցւոյն հետ ակատ — կըսէ։ Եթէ ասով միտքը դարձեալ Առաջաւան դրսնիւնը պաշտպանել

է . անշուշտ հրենէ բառը չի կրնար տեղի ունենալ .
ապա թէ ոչ՝ ի՞նչ կերպով պիտոր կրնայ յարմար .
յընել զայն Գեր . Գաղանճեանի —Եկեղեցու հետ ըստ
հըստ , և մէտ է սկզբանէ հաղետ և հասրատետ — բառեւ
ըուն հետ . և նաեւ իր յաջորդ խօսքին հետ : Թե
ըեւս կուզէ ըսել որ՝ — Սուքիասեան արեւելեան
եկեղեցին — ի սկզբան անդ առանց Պատրիարքա
կան իշխանութեան , այսինքն՝ անդը մէջ տեղել
լեռվ , ետքէն կամաց կամաց գլուխ ունեցեր է ,
Միասերեանի համար ի՞նչ չի կրնար ըլլալ . երբ ըստ
իրեն եկեղեցին մինչեւ անդամ հնչ էլլա կրնայ
ունենալ . ինչպէս պիտոր տեսնենք յառաջ երթա
լով :

Բայց՝ Միասերեան ինչ որ ուղէ հասկնալ այս
իր խօսքովը . պէտք է դիտնալ որ՝ թէ Մետրապօլ
տութիւնը և թէ Պատրիարքութիւնը եկեղեցական
կարգադրութիւն են . և ինքն եկեղեցին է անոնց
հեղինակը : Բայց որովհետեւ Միասերեանն Պատ
րիարքութեան վրա կուզէ խօսիլ , ուստի մենք ալ
անոր վրա միայն ամփոփելով՝ կըսենք որ . Պատ
րիարքութեան ծագման համար չեղինակաց մէջ
չորս կարծիք կը դանենք . Ումանք կըսեն որ Պատրի-
արքութիւնը դիմաւոր Առաքեալն Պետրոս հաստա-
տեց : Այլք՝ Նիկիոյ ժողովքէն քիչ մը առաջ սկը-
սաւ : Ուրիշները՝ թէ Նիկիական սահմանադրու-
թիւն մընէ . կան ալ որ կըսեն թէ Կ. Պօլսի Ա.
ժողովըն ատենը սկզբնաւորած է :

Այս չորս կարծիքէն որն ալ ընդունիլ ուղենք ,

միշտ զԵկեղեցին կը դանենք Պատրիարքութեանց
ծագման և հաստատութեան հեղինակը , այսինքն՝
կամ մինակ (Եկեղեցւոյ) Գլուխը (Պետրոս) և կամ
Գլուխը Անդամոց հետ (Տիեղերական ժողովքը) :
Իսկ եթէ Վեր . Միասիրեան կուզէ ցուց-
նել թէ Եկեղեցւոյ մէջ Պատրիարքութիւն կայ ,
մենք չենք ըսեր երբէք թէ չիկայ . ուստի անօգուտ
կըլլայ իր աշխատանքը , Եւ այս ալ գիտնայ որ ոչ
միայն Պատրիարքութիւն կայ յեկեղեցւով , այլ և
հին մէկ կարգադրութիւն մըն է այն : Որ և ՚ի
սկզբանն՝ Հռովմայ Աթոռէն ետև՝ երկուք էին , Ա-
զեքսանդրիոյ և Անտիոքայ , ետքէն երկուք ալ
աւելցաւ՝ Երուսաղէմի և Կ. Պօլսի . յետոյ ուրիշ-
ներ ալ . անանկ որ հիմակ կաթողիկէ Հռովմէական
եկեղեցւոյ մէջ ինը Պատրիարքական Աթոռ կայ ,
որք են Կ. Պօլսի , Աղեքսանդրիոյ , Անտիոքայ ,
Երուսաղէմի , Կիլիկիոյ , Բաբելոնի , Վենետիկոյ , Լիո-
պոնայ և Արեւելեան Հնդկաստանի , որոնք հետ-
զնետէ ծագումն , վերանորոգութիւն և փո-
խադրութիւն ունեցեր են :

Վեր . Միասերեանն իր խօսքը շարունակելով
կըսէ — Առածեալ յայլ և այլ ուղիս եկեղեցիներ ին հաստատե-
ն և անոնց Քրո հայեւներ և Էրքէն և Էրաւանուէն ին Էր-
ածէն : Նյու ընթացէն եր և անոնց յաջորդացը — : Ուրեմն ,
ի՞նչ է ասոր հետեւութիւնը : Եթէ ասով կուզէ
ինքը հաստատել որ Առաքեալք և իրենց յաջորդ-
ները Պատրիարք էին , կամ թէ Պատրիարքական
իշխանութիւն կը վարէին , ան ատեն հարկ կըլլայ



ըսել որ աշխարհքիս մէջ գտնուած ամեն եպիսկո-
պոսներն ալ Պատրիարք են, այսինքն կարողու-
թիւն ունին Եկեղեցիներ հաստատել և անոնց հո-
վիւներ կարգել և իրաւասութիւն դործածել. ըստ
որում ինչպէս 'ի մասնաւորի Տրիտենդեան սուբք
ժողովը կը սորվեցնէ, ամեն եպիսկոպոսներն
ալ յաջորդ են Առաքելոց: Եւ եթէ ասոնց կար-
գած Հովիւներ ալ եպիսկոպոս են՝ ինչպէս պէտք
է որ ըլլան, այն ատեն Պատրիարքութեանց և ե-
պիսկոպոսութեանց առջեւը չէինք կրնար առնուլ,
ամեն գիւղ և նաեւ տուն Պատրիարք և եպիսկո-
պոսներ պիտոր ունենային, կարողութեամբ առա-
ւել եւս աճելու:

Բայց ըսենք որ ամեն մէկ Առաքելոյ մէյմէկ
յաջորդը Պատրիարք եղած ըլլայ: Հոս ալ շատ մը
անտեղութիւններէ զատ. ուր արդեօք պիտոր դըտ-
նէ ինքը ամեն մէկ Առաքելոյն յաջորդող Պատ-
րիարքական Աթոռները. մինչդեռ նոյն իսկ ին-
ներորդ դարուն հազիւ հինգ Պատրիարքական
Աթոռ դտած է (եր. 6):

Գիտնալ պէտք է որ Քրիստոս իր Եկեղեցին
հաստատելով անոր գլուխ կարգեց դՊետրոս և ը-
րաւ դանիկա կեղծոն միութեան և հովիւ իր բո-
վանդակ Հօտին. Պետրոս իր այս գերագոյն իշ-
խանութեան Աթոռը 'ի Հռովմ հաստատեց, և հօն
մարտիրոսութեամբ կնքեց իր կեանքը: Իրեն ուղ-
ղակի, այսինքն՝ իշխանութեան լրութեանը, յա-
ջորդ եղան Քահանայապետք Հռովմայ. որոնք աշ-

նով որ Պետրոսի տեղը կը յաջորդեն՝ Աստուածա-
յին իրաւամբ կը յանձնուի իրենց Քրիստոսի բո-
վանդակ հօտը. այնպէս որ Եպիսկոպոսութեան հետ
կընդունին աիեղերական վարչութեան իշխանու-
թիւնը: Իսկ միւս առաքեալք թէպէտ ընդ հպա-
տակութեամբ սոյն գերագոյն իշխանութեան գըլ-
խաւորի իւրեանց, ամեն տեղ՝ ուր որ Քրիստոսի
հաւատքը քարողեցին մամնաւոր Եկեղեցիներ հաս-
տատեցին, և հովիւներ կարգեցին, որոնց վրա կը
հսկէին. բայց իրենք սեփական աթոռ չունեցան: Ուստի և ոչ ուղղակի յաջորդութիւն: որ կարող
ըլլանք ըսել թէ, այս ինչ Աթոռը այս անուն Ա-
ռաքելոյն է և այն ինչ միւսին. ինչպէս կըսենք որ
Հռովմ Աթոռ է Գլխաւոր Առաքելոյն Պետրոսի.
այլ այսպէս թէ Եպիսկոպոսունք յաջորդ են Առա-
քելոց յեպիսկոպոսութեան. ըստ այսմ Եկեղեցւոյ
սկիզբէն կը գանենք նախ, զՊետրոս իշխան Առաքե-
լոց և Գլուխ ընտրեալ Հօտին Քրիստոսի և ընդ նովաւ-
զայլ Առաքեալս, և աղա զՔահանայապետն Հռով-
մայ յաջորդ Պետրոսի և ընդ նովաւ զեպիսկոպո-
սունս իւրաքանչիւր թեմից և վիճակաց:

Այս Եպիսկոպոսներէն անոնք որ գլխաւոր քա-
ղաքաց, կամ գաւառաց մայրաքաղաքներուն եպիս-
կոպոսութիւնը կը վարէին, անոնք իրենց գանուած
դրիցը պատճառաւ՝ գաւառին մէջ եղած միւս
եպիսկոպոսաց վրա առաւելութիւններ կըսկսէին
ունենալ, որ և հետզհետէ յեկեղեցւոյ կարգա-
դրուելով և կանոնի առնուելով, այսպէս ամեն

դաւառ իր Մետրապօլիսը ունեցաւ : Ասոնցմէ աւելի ընդարձակ վիճակ ունեցողներ Եքղարք կամ Բուհմաս անուանեցան , որ ըստ մեզ կը թարգմանի Գահերէց կամ Նախագահ :

Իսկ Աղեքսանդրիոյ և Անտիոքայ Եկեղեցիքն իբրեւ ՚ի Պետրոսէ հաստատեալ և մասնաւոր իմաստինակաւ պատստեալ ՚ի նմանէ , թէ ընդարձակ վիճակ և թէ առաւել իրաւասութիւն և պատիւ ունեցան քան զայլ Մետրապօլիս և զԳահերէց իսկ : Այսինքն՝ մէկը (Աղեքսանդրիոյ) յԵղիպտոս , որոյ մասն էին նաեւ Լիբիա և Պեհուարոլիս գաւառները . միւսը (Անտիոքայ) յԱսորիս , որուն իշրաւարանութիւնը կը տարածէր Ասորիքի , Կիլիկիոյ , Միջագետաց , Պաղեստինոյ և Արաբիոյ գաւառաց վրա , որ և մէկ անուամբ Արեւել կամ Արեւելքան կուսականութիւն կանուանէր ըստ բաժանման Հռովմէական ինքնակալութեան : Ասոնք էին բուն Պատրիարքութիւնք , որով պատուեցան Ետքէն ուրիշ քանի մը Եկեղեցիք ալ :

Այն՝ որ կամաց կամաց սովորութեամբ տեղի ունենալ ակսած էր , Նիկույ ժողովքը կանոնի տակ առաւ ըստ տանելոյ պարագայից ժամանակին . և ասոնց ամենուն օրինակ տուաւ Հռովմէական գաւառին բարեկարգութիւնը : Եւ որովհետեւ Մելիտոսիան և Արքասեան հերձուածոց պատճառաւ Եղիպտոս առաւել եւս վրդովեալ էր . վասնորոյ ան մասին վրա աւելի որոշ կը խօսի : այսպէս . Աղեքսանդրիոյ եղիսկոպոսն ունիցի իշխանութիւն

՚ի վերայ Եղիպտոսի , Լիբիայ և Պեհուարոլիայ : Վասն զի և Հռովմայեցւոց եպիսկոպոսին այս սու վորութիւն է . ոոյնպէս և յԱնտիոք և յայլ գաւառու իւրաքանչիւր Եկեղեցի ունիցի զիւր իրաւունս . և իւրաքանչիւր տեղւոյ եպիսկոպոս կարգեցի հաւանութեամբ եպիսկոպոսապետին :

Բայց երբ Վեր . Միասերեան այս կանոնը ըստ մասին մէջ կը բերէ , ի՞նչ արդեօք կուզէ հաստատել , թերեւս կը կարծէ թէ ասկից ան հետեւութիւնը կելէ որ՝ Առաքեալք և անոնց յաջորդները Պատրիարք էին և կամ են . և կամ Հռովմայ Աթոռն ալ մեկանոնց հաւասար մէկ Աթոռ մըն է : Արդարեւ անիմանալի է անոր այս կանոնը մէջ բերելուն վախճանը , որ և ոչ իսկ իր առաջը արած խօսքերուն հետ յարմարութիւն ունի :

Թէպէտ ինքը այս կանոնին առաջին և վերջին մասերը յապաւեալ մէջ բերերէ . բայց պէտք է դիտնալ որ անոնք շատ կարեւոր են . զանց եղած վերջին մասը վերը դրինք . իսկ առաջին մասը՝ որով կըսկզբնաւորի յիշեալ կանոնը՝ այս է . —Եկեղեցին Հռովմայ միշտ կալաւ զգլիսաւորութիւն — (Ղաղէ . Հաւաք . Փող . Հտ . Դ . 813 .) : Որուն ետեւէն կուգայ , —կալցի և Եղիպտոս , որպէս զի Աղեքսանդրիոյ եպիսկոպոսն — Եւայլն (անդ .) : Վկայ է ասոր նախ և առաջ Քաղկեդոնեան ժողովքը , յորում նոյն կանոնը այս կերպով մէջ բերուած և ՚ի հարց անտի միաձայնութեամբ ընդունուած է . (Նիստ ՓԶ .) :

Նոյնը կը հաստատուի յիշեալ կանոնին Արա-
բական թարգմանութենէն :

Նաեւ մեր Հարքը, Սայ Ե. ժողովքին մէջ, զոր
գումարեց Մխիթար Կաթողիկոս յամի 1342 Կոս-
տանդին Գ. Թագաւորին առենք, և ներկայ էին
բաղմաթիւ Արքեպիսկոպոսնք, Եպիսկոպոսնք,
Վահաճարք և այլ Աւագ Եկեղեցականք, կը վկա-
յեն 84. յօդուածին մէջ թէ — Ա. Հարք ժողովեալ
ո՛ի Ա. Սիւնհոգոսն Նիկիական, որոյ սահմանք և
ո կանոնք կարի իմն ընդունելի են առ մեզ, վճիռ
ու ետուն, եթէ ՀՈՂԱՄԽԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԳԼՈՒԽ Ե
» ԱՅ, ԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԵԱՅ, որոյ (Հովմէական
» Եկեղեցոյ) Գլուխ է Պատին : Վասնորոյ (վրա կը
» բերեն մեր Հարքը) վասնորոյ և Կաթողիկոսն
» Հայոց և այլ Պատրիարքունք են ընդ իշխանու-
» թեամբ նորա — : (Մանսի Հա. Խթ. Եր 1222 .):
Նոյն իմաստը կը կրնեն դարձեալ 91. յօդուածին
մէջ, յօրում այսպէս կը խօսին . «Մեք քաջ իսկ
» ունիմք զայս ՚ի ԳՐՈՒԱԾ՝ զի յառաջին և յերկ-
» ուրդու ժողովն Նիկիոյ (այսինքն) . Նիկիոյ և Սար-
» դիկեայ) Հարք վճիռ ետուն, եթէ Եկեղեցին
» Հովմայ գլուխ է այլոց Եկեղեցեաց . Նոյնպէս
» Հովմէական Քահանայապետն գերադոյն է քան
» զայլ Քահանայապետու : Արդ մեք զայս այսպէս
» ասեմք և ունիմք, ոչ վասն այնը միայն՝ զի ՚ի
» սրբոյ ժողովոյն այնպէս է սահմանեալ. այլ զի
» Քրիստոս Պետրոսի յանձն արար զովսարս իւր
» առ ՚ի արածել » :

Այս վարդապետութիւնը յայտնապէս կը
տեսնուի Նիկիական ժողովոյն ուրիշ գործքերէն
ալ: Հոյ մէջ բերենք այն երկու կանոնը, զորս
յիշեալ ժողովքին իբր քան տարի մը ետքը Յու-
լիոս Ա. Արքազան Քահանայապետը իբրեւ կանոնս
Նիկիոյ կը բերէ Արեւելքի Եպիսկոպոսաց գրած
թղթին մէջ : Որք են

Ա. «Զէ արժան առնել ժողովս առանց կամաց
» Քահանայապետին Հովմայ » :

Այս կանոնը կը գտնուի նաեւ մեր Ճառընտ-
ըին մէջ ՚ի վարս սրբոյն Աթանասի, հետեւեալ կեր-
պով. «Յուլիոս Եպիսկոպոսն Հովմայ գայ ՚ի ժո-
» ղովմն Սարդիկեայ (այսինքն իր տեղապահներովը) .
» զի ոչ էր արժան առանց նորա կամացն ժողով
» լինել ըստ սահմանի ուղղափառաց (1) » :

(1) Նոյն բանը կը յիշեցնէ նաեւ Քաղկեդոնի ժողովքին
մէջ հանդիպած այն նշանաւոր գէպքը : Երրոր Հարք ամենը
ըստ կարգի բազմեցան ընդ որս և Դէսոկորոս Աղեքսանդրիոյ
Հայրապետը . Հովմայ Քահանայապետին առաջին փոխա-
նորդը Պատրիարքինս ամենէն առաջ խօսքի սկսելով՝ ըստ «Զե-
» բանեալ և զառաքելաշորհ Եպիսկոպոսին Հովմայ, որ է՝
» գլուխ ամենայն Եկեղեցեաց, առ ձեռն պատրաստ ունիմք
» զհրաման, որով պատուիրէ նա, զի Դէսոկորոս մի նստցի
» ՚ի ժողովի . այլ կացցէ ՚ի միջին վայրի տալ համարս : Ի կա-
» տարումն այսօր հրամանի պարտ է մեզ գութալ » : Երրոր
Հարցուցին թէ ի՞նչ յանցանքի համար կուղեն որ Դէսոկորոս
իր տեղէն ելլայ : Պուկենտիոս Քահանայապետին միւս վո-
խանորդը պատասխան տուաւ . «Զի յանդգնեցաւ ժողով առա-
» նել առանց իշխանութեան Առաքելական Աթոռոյն, որ ոչ

Երկրորդ կանոնը այս է «Զի ամենայն եպիսկոպոսունքը զբուռնք զորոց ծանր ամբաստանութիւն ինչ լինիցից կամ զծանը յանցանաց բանք իցեն . քառանիցու և պէտք լիցին՝ բողոքեսցեն համարձակ (կամ աղատօրէն) առ Առաքելական Աթոռն , և ապաստան լիցին առ նա՝ որպէս առ մայր . զի՞ն նմանէ՝ որպէս միշտն սովորութիւն եղեւ , գթուութեամբ դատեսցին , ջատագովեսցին և զերծ . ցին : Քանզի հնագոյն հեղինակութիւն Առաքելոց և յաջորդաց նոցին և կանոնաց նմա ընծայեն զամենայն ծանր եկեղեցական դատս և զգատաստան եպիսկոպոսաց . վասնօրոյ և յանցաւոր են եպիսկոպոսունք՝ որք այլազդ վարիցին ընդ եզրարս իւրեանց , և ոչ որպէս հաճոյ թուիցի Սրբոյ Աթոռոյն » :

Այս երկու կանոնաց ակնարկութիւնն է Եղիպատոսի եպիսկոպոսաց առ Փելքոք . Բ. (355-365) դրած թղթին սա հետեւեալ խօսքերը . — Գիտեմք՝ եթէ ՚ի մեծ ժողովն Նիկիական 318 եպիսկոպոսաց , ամենեցուն հաւանութեամբ հաստատեցաւ

» եղեալ է և ոչ լինել երբէք կարէ » (Լապէ Հտ . Դ. Հաւաք . 95.) : Վրա բերաւ Պակաղինոս . «Մեզ չեն կամք Հրամանի երանեալ և Առաքելաշնորհ Քահանայապետին , որ զինամս Առաքելական Աթոռոյն յանձին ունի . կամ եկեղեցւոյ կանոնաց , և կամ գարձեալ հարցն սահմանաց ընդ . գէմ զհակառական դործել » : Ուստի և ըսուեցաւ Դէսկոսի ելլել աթոռէն և մէջ տեղ նատիլ իբրեւ դատելի . և հըրամանը ճշգիւ կատարուեցաւ (Նիստ . Ա.) :

» (esse roboratus) թէ չէ արժան անել ժողովն , և ոչ դաստապահել զեպիսկոպոսունս առանց վճռոյ (senitentia) Քահանայապետին Հռովմայ : Սակայն չեւ ըետիկոսք՝ որք հանապազ նեղեն զմեղ , և նիւ . թեն զկորուստ մեր . զայս և զայլ բազում կամ ըեւոր գլուխու սիւնհոդոսականս հրոյ ճարակ . եւ տուն և բարձին առ ՚ի մէնջ . որպէս զի գիւրաւ կարասցեն ըմբռնել զմեղ :

Ետքէն նոյն եպիսկոպոսունք այս ալ կաւելցընեն թէ « Հանգոյն սմին ՚ի նոյն Նիկիական Հարց « համաձայնութեամբ սահմանեցաւ . զի եթէ ոք յեպիսկոպոսաց կամ զգաւառակից եպիսկոպոսունս Մետրոպոլտաց և կամ զգատաւորս հակառակս ինքեան համարեսցի , բողոքեսցէ առ Ա . Աթոռդ Հռովմայ , որում ՚ի նոյն ինքն ՚ի Քրիստոսէ յատկապէս շնորհեցաւ ՚ի վերայ այլոցն իշխանութիւն կապելոյ և արձակելոյ » :

Ցիշենք նաեւ Նիկիական Հարց առ Սուրբն Սեղբեստրոս գրած թղթոյն այն նշանաւոր հատուածը , որով կը խնդրեն , որպէս զի իրեւ Առաքելէն ուսուցիւ հաստատէ էրենց սահմանը . « զի՝ կըսեն , օրէնսդրութիւն մեր միաբանեալ ընդ հրամանի Սրբութեան Քո , մարթասցի ունել զհաստատութիւն » . (առ Բարոնիոսի յամի 325 .) :

Նիկիական վարդապետութիւնը վասն դիմաւորութեան Աթոռոյն Հռովմայ կը հաստատուի և եւս Սարդիկեայ ժողովոյն հետեւեալ երեք կանոններով . որք են

Կանա Գ. Եթէ ՚ի գաւառի ուրեք երկու եպիսա
» կոպոսունք դժութիւն ընդ միմեանս ունիցին,
» մի՛ ոք ՚ի նոցանէ իշխեսցէ կոչել զայլոյ գաւառի
» եպիսկոպոս ՚ի քննութիւն դատի իւրոյ : Այլ Եթէ
» ոք ՚ի նոցանէ բողքեսցէ առ Եպիսկոպոսն Հռով.
» մայ, պահեսցի զոր ինչ Սա սահմանեսցէ :

Կանա Գ. «Եթէ եպիսկոպոս ոք՝ գատաստա-
» նաւ սահմանակից եպիսկոպոսաց ընկեցեալ յիշ-
» խանութենէ իւրմէ՝ դիմեսցէ առ եպիսկոպոսն
» Հռովմայ, մի ոք իշխեսցէ նստիլ յաթոռ նորա,
» մինչեւ իցէ Եպիսկոպոսին Հռովմայ տուեալ վը-
» ճիռ վամն նորա :

Կանա Ե. «Եթէ ամբաստանեալ եպիսկոպոս ոք՝
» դատաստանաւ գաւառակից եպիսկոպոսաց մեր-
» կասցի յիշխանութենէ իւրմէ, և դիմեսցէ առ
» երանելի Եպիսկոպոսն Հռովմայ առնել ինքեան
» իրաւունս . Եթէ արժան դատեսցի Սա՝ զրեսցէ
» առ եպիսկոպոսունս որք ՚ի սահմանս գաւառին
» են՝ վերստին զդուշագոյնս քննել զդատն : Եւ
» Եթէ ամբաստանեալն աղաչեսցէ զԵպիսկոպոսն
» Հռովմայ զի՞ի կողմանէ իւրմէ (e latere suo) առա-
» քեսցէ երիցունս ՚ի նոյն գործ քննութեան, յիշ-
» խանութեան նորին է առնել որպէս և ՚ի դէպ դա-
» տեսցի : Եւ Եթէ հրամայեսցէ Նա (Եպիսկոպոսն
» Հռովմայ) առաքել (զոմանս), զի իշխանութեամբ
» առաքչին իւրեանց առաջիկայ լինելով եպիս-
» կոպոսաց դատ արացեն, եղիցի ՚ի հաճոյս նորին :
» Ապա թէ ՚ի վճարումն իրացն բաւական զեպիս-

» կոպոսունս համարեսցի, արասցէ՝ որպէս զիա՛րդ-
» հաճոյ թուեսցի իմաստուն խորհրդոյ նորա » :

Այս կանոնը ամբողջ կը գտնուի նաև Յովհան-
նու Իմաստասիրին հաւաքած կանոնագրոյն մէջ
(Պ.Ի.Դ.) :

Մէջ բերենք նաեւ նոյն Սարդիկեան Հարց առ
Սուրբն Յուլիոս Քահանայապետ դրած թղթոյն այն
նշանաւոր խօսքը . « Կարի բարիոք և յոյժ ՚ի դէպ
» է զի Քահանայը Տեառն իւրաքանչիւր գաւա-
» ռաց առաջի արացեն զիրմն առ Գլուխն այս է՝
» առ Աթոռ Առաքելոյն Պետրոսի » :

Ահա Նիկիական — Սարդիկան վարդապետու-
թիւնը յաղագոյ գլխաւորութեան Քահանայապետին
Հռովմայ որ հիմնուած է սուրբ Աւետարանին մէջ
Քրիստոսի Տեառն մերոյ խօսքերուն վրա, և որուն
համաձայնած են յաջորդ Տիեզերական ժողովքներն
ալ նոյն կերպով մինչեւ ցայսօր ժամանակի . որոնց
Եթէ յայսմ մասին ամեն խօսքերը և գործքերը
մէջ բերել ուղեինք՝ անշուշտ հարկ կը լլար առան-
ձին հատոր մը յօրինելու : Հոս այս ալ նկատել
արժան է որ՝ մինչդեռ մէկալ Աթոռոց համար,
սահմանաբար կը զուրցուի — և այս առաջին .
Երբ խօսքը Հռովմայ Աթոռոյն կուգայ, բացար-
ձակ և պատմաբար կը յիշուի — անէ, էւլու գլո-
ւայլն : Վասն զի Հռովմայ Աթոռոյն արտօնու-
թիւնքն ՚ի Քրիստոսէ տրուած են իրեն և ոչ ՚ի Տիեզ-
զերական ժողովոց, յորոց միայն հրատարակուած
են և յարգանօք ընդունուած :

Պ.

Վեր . Միասերեանն Նիկիոյ ժողովքը կը ձգէ .
և կը դիմէ Եփեսոսի ժողովըն , յուսալով զոնէ
հոն նպաստաւոր բան մը գտնել . բայց անկից մէջ
բերած դէպքը ոչ երկու ուրիշն էկեղեցն վրա կը խօ-
սի , ոչ արեւէլուն դ էկեղեցն վրա բան մը կըսէ , ոչ
Սուքիասեան քոփիտէն և քոփիտէն բաշնութեան նը-
ղաստ մը կընծայէ , և ոչ իսկ Պատրիարքուն Աթոռաց
էւնասաւնեան առաքէնէներուն հետքը կայ նոյնին մէջ ,
զոր հնեւը ելած է ինքը :

Բոլոր եղածը այս է , Կիպրոսի եպիսկոպոսունք
կը պնդէին որ՝ իրենք հին սովորութեամբ և ՚ի կա-
նոնաց իրաւունք ստացած են իրենց Մետրոպոլիտը
կամ Գահերէցը դնելու , և անորմէ ձեռնադրու-
թիւն առնելու անկախ ՚ի Պատրիարքէն Անտիոքայ :
Ընդհակառակն Անտիոքայ Պատրիարքը կը պնդէր
որ իր Աթոռոյն իրաւունք էր նոյն կղզւոյն եպիս-
կոպոսները ձեռնադրել և անոնց Մետրապոլիտը
հաստատել . և հետեւաբար չէր թողուր որ նոյնը
իրենք իրենցմէ ընեն : Թէ որ կողմն էր իրաւուն-
քը՝ հոս քննելու տեղը չէ , և ոչ մեր խնդրոյն
վերաբերութիւն ունի : Ինչ և իցէ՝ Կիպրոսի եպիս-
կոպոսները Եփեսոսի ժողովըն դիմեցին և բռնած
ընթացքնին պաշտպանելու համար իրենց ունեցած
փաստերը և պատճառները յառաջ մատուցին :
Բայց մէկալ կողմանէ Անտիոքայ Պատրիարքը Յով-

հաննէս , որովհետեւ Նեստոր հերեսիովտապետին
պաշտպանութիւն ընելուն համար ժողովքէն բաժ-
նուած էր . ոչ ինքը կարող ըլլալով յայսմ մասին
իր փաստերն ալ ներկայացնել , և ոչ ժողովքը ի-
րեն հետ բանակցիլ . և միանգամայն դատը մինակ
մէկ կողմէն լոււած ըլլալուն համար՝ չուզելով բա-
ցարձակ կերպով խնդիրը որոշել : Հետեւեալ պայ-
մանական վճիռը տուաւ . այսինքն՝ —Եթէ չիցէ
» հին բան (mos) եպիոկապոսին Անտիոքայ առնել
» ձեռնադրութիւն ՚ի Կիպրոս , զոր օրինակ հաւաս-
» տի առնեն արք երկիւղածք , որք մատեան առ
» ժողովս , առաջնորդք եկեղեցեաց ՚ի Կիպրոս ամ
» բողջ և անվթար կացին զիրաւունս իւրեանց ըստ
» կանոնաց և ըստ վաղեմի սովորութեան — :

Արդ՝ ի՞նչ արդեօք կը կարծէ հետեւցնել
Վեր . Միասերեան . ասիկա Պատրիարքական Աթո-
ռոյ իշխանութեան ստորոգելի մըն է , թէ ապա-
ցոյց մը յեկեղեցւոյ Պատրիարքութիւն ըլլալուն
և կամ անոր գրենէ էկեղեցն հեռ ծագում անենալուն :
Արդարեւ և ոչ մէկը : Անհարկաւոր է առաւել եւս
երկարել մեր խօսքը . ուստի յառաջ անցնինք :

Դ.

Վեր . Միասերեան ուրիշ վկայութիւն մնալ
կը յիշէ . և կընծայէ զայն ութերորդ Տիեզերա-
կան ժողովըն :

Ահա իր խօսքը . — Ուներութ Տէլէրական ժողովն
» ալ որն որ կ. Պօլսոյ առրորդ Տէլէրական ժողովն է, Պատ-
» բէաբառչն էշտանունէնը էրէնէ Ասպառածային հաստարու-
» ննեան իը հասասարեցնէ : —

Այս տեղ ալ կը տարբերի ինքը 'ի Գեր . Գա-
ղանճեանէ . վասն զի անիկա իր արեւելան եկեղեցայն
» առերաբետուննեան ևն . ևն . ջնջումն պահանջելը՝ ընդ-
դէմ ամեայն Ասպառածային էրաւանց կը համարէր (Վերջ.
Պի. եր. 8.) : Ի՞նչ բանէ առաջ կուզայ արդեօք
Միասերեանի այս չափաւորութիւնը, որով կը աէ,
էրէնէ Ասպառածային հասասարուննեան իը հասասարեցնէ : Եթէ
մէջ բերած վկայութեան վաւերականութեանը վրա
վստահութիւն ունի, ինչու բացարձակ կերպով չը-
սեր զայն հանդոյն Գեր . Գաղանճեանի, ըստ որում
բերած վկայութիւնը աւելի անոր ըսածին կը յար-
մարի, քան թէ իր խօսքին : Սակայն մեզի կը թուի
որ՝ ինքն իսկ իր փաստին վրա ապահով չէ (և այն
իրաւամբ) . վասնորոյ և յարմար դատեր է զայն
չափաւորել : Մէջ բերենք նախ իր այս նորակերպ
վկայութիւնը և ապա քննենք անոր արժէքը :

Վեր . Միասերեանն այսպէս կը շարունակէ իր
խօսքը . — Ուստի և այս (Բ. Տիեզերական ժողովքը)
նըսէ էր առներորդ նէստին մէջ 'ի Յ. Նյեքէրէ 869 : « Ասա-
» ուած իր եկեղեցին հինգ Պատրիարքութեանց վրա հաս-
» տամեց, և իր Աւետարանին մէջ որոշեց որ ամենքը մէկէն
» չի խսուորին, ըստ որում անոնք եկեղեցւոյ բլուխէն են,
» ըստ որում դրունք դժոխոց զնա մի յաղթահարեցին ը-
» սածը սա կը յիշեցնէ թէ ուր երկուքնին իյնան՝ մնացած

» երեքին կը դիմուի, և ուր երեքնին իյնան՝ երկուքին կը
» դիմուի, և երր դժբաղդաբար չորսերնին իյնան, մէկը
» որ հասատուն մեայ ՚ի Քրիստոս՝ որ է Աստուած մեր և
» գլուխ ամենեցուն, եկեղեցւոյն միւս մնացեալ մարմինը
» նորէն կը գումարէ » :

Ոհ, կարի է առասպեկլո և առասպեկլաց առաս-
պեկ . ուրեմն եկեղեցին Աստուածմէ հինգ Պատրի-
արքութեանց վրա հաստատուերէ . հապա ի՞նչ է
Քրիստոսի ըսածը առ Պետրոս — Թու ես վէմ, և 'ի
» Վերս. ԱՅԴՐ ՎիՄԻՇԻՆԵՑԻՑ ԶԵԿԵՂԵՑԻ ԻՄ, և դը-
» րունք դժոխոց զնա մի յաղթահարեցին և տայ
» ՔԵԶ զփականու արքայութեան երկնից . և զոր
» կաղեցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և
» զոր արձակիցես յերկրի՝ եղիցի արձակեալ յեր-
» կինս — (Մատթ . ԺԶ. 19) : Ընդունայն է
արդեօք ասիկա, և իրաւ՝ զոր կերազէ Միասեր-
եանն : Ուրեմն եկեղեցին հինգ գլուխունի . թե-
րեւս հինգ գլխեան հրէշ՝ մը կը կարծէ զեկեղեցին,
կամ թէ Քրիստոս հինգ փոխանո՞րդ ունի յերկրի
՚ի կառավարութիւն իր միակ Եկեղեցւոյն, օ՞ն ան-
դըր : Եթէ Վերջնական Պատասխանոյն դրու-
թիւնը ասոր հետ միացնելու ըլլանք, կըլլայ Երկու-
արդյան եկեղեցէ և հինգ գլուխուն : Այսպէս միշտ ըանդա-
դուշեցին ուզզափառ ճշմարտութենէ ամեն շեղող-
ները :

Թէաէտ և Վեր . Միասերեան կը յանդզնի
Տիեզերական Սուրբ Ժողովոյ մը (որպիսի է չոր-
րորդ կ. Պօլսի ժողովը,) ընծայել այսպիսի ան-

հանճար և անարժան վարդապետութիւն մը ,
որ է հակառակ ուղղափառ վարդապետութեան
և ճշմարիտ հաւատոց . սակայն պէտք է դիմնալ
որ՝ ասիկա յիշեալ Տիեզերական ժողովոյն ոչ դաշ-
ւանութիւնն է , ոչ որոշմունքը և ոչ անոր մէկ դոր-
ծը . այլ աշխարհական իշխանի մը խօսքը զոր ըրեր
է ժողովքին դուրս : Թէ արդեօք ի՞նչ է սիւնհո-
դոսին վարդապետութիւնը կամ ստորագրած դա-
ւանութեան ձեւը , պիտու տեսնենք ետքը . բայց
հիմակ 'ի հաստատութիւն մեր ըսածին բերենք ամ-
բողջ այս նշանաւոր դէպքը :

Սոյն սիւնհոդոսին ութերորդ նստին մէջ , որ
Գումարեցաւ 'ի Յ. նոյեմբ . յամի տեառն 869 . ու-
րիշ երեք խնդիր 'ի գլուխ ելլելէն ետեւ՝ Ասիլ
Հայկազն ինքնակալը , որ իր աւագ նախարարնե-
րովը ներկայ էր նոյն ժողովքին մէջ , Հուվմայ
Քահանայապետին փոխանորդներուն (որոնք յա-
նուն Առաքչին իւրեանց ժողովոյն դահերէցներն
էին) դառնալով՝ ըսաց . «Պակերամարտից առաջ-
նորդը Թէսողորոս , որ Քրիմինոս կը կոչուի , Զեր
բարեպաշտութեան հաւանութեանը համեմատ հրա-
ման առաւ դալ 'ի Ա. և Տիեզերական ժողովս . արդ
Զեղի ինչպէս կերեւայ անոր համար : Հուվմէա-
կան փոխանորդները պատասխանեցին , զանիկա
ուղղութեան բերելու համար վսեմափայլ իշխան-
ներէն ոմանք իրեն խրկուին : Ուստի և Վահան ու
Ղեւոնդ աւագ իշխանները խրկուեցան , որոնց հետ
նոյն Հուվմէական փոխանորդները խրատական

թուղթ գրեցին յիշեալ պատկերամարտին , որով
կը յորդորէին զինքը՝ որ զգաստանայ իր մոլորու-
թենէն և յարդէ ուղղափառաց հետ զսուրբ պատ-
կերս , և թղթով յայանէ իր զղջումը և դարձը :
Երբոր անիկա տրուած յորդորանացը բնաւ պա-
տասխան մը չի տուաւ . ան ատեն Վահան փառա-
ւոր իշխանը գրպանէն Վասիլ կայսեր պատկերը
գրոշմուած սակի դահեկան մը հանեց և Թէսողո-
րոսի ցուցնելով՝ հարցուց թէ կլնդունի զայն : Եր-
բոր անիկա պատասխանեց թէ — Այս՝ կընդունիմ
պատուվլ և կը մեծարեմ — . Նախարարը վրա բե-
րաւ . — Մեր Բարեպաշտ Խնքնակալը իմ բերնովն
կըսէ քեզի , թէ որ իմ պատկերս՝ որ մահկանա-
ցու և երկրաւոր թագաւոր մըն եմ , չնս անարգեր
այլ ամենայն մեծալանօք կընդունիս . ի՞նչպէսու-
րեմն կը յանդգնիս մարդացեալ Աստուծոյ Յիսու-
սի Քրիստոսի Տեառն մերոյ , իր Ամենասուրբ մօրը
և ամենայն սրբոց պատկերները անարդել — : Ան-
միտ և տխմար հերձուածողը պատասխան տուաւ
թէ , — Ես ալ կըսեմ որ . դու (ով ինքնակալ)
ինձի քու դահեկանդ խրկեցիր , ես ալ ընդունե-
ցայ՝ ստոյգ զիտանալով որ՝ քուկդէ . արդ եթէ հրա-
ման կընես որ Քրիստոսի պատկերն ալ ընդունիմ ,
թող ինձի ցուցնեն որ՝ իրօք Քրիստոս ասանկ պատ-
ուիրերէ և ասիկա իրեն հաճելի է , ես ալ կըն-
դունիմ — : Այս անհանձար խօսքին պատասխանեց
Վահան , ըսելով թէ — ինքը (Թէսողորոս) չէ կան-
չուած որ վիճաբանի , այլ որպէս զի սիւնհոդոսին

աղդարարութիւնը ընդունի : Որովհետեւ մեզի չիյշնար որ՝ ամեն բանի մէջ Քրիստոսի յայտնի հրամանին սպասենք . այլ հաւանիլ ընդհանուր եկեղեցւոյ , որուն դատաստանը անպակասելի է : Աստուած իր եկեղեցին հինգ Պատրիարքական Աթոռոց վրա դրաւ . . . (տես յեր. 30.) : Բայց հիմակ որ բոլոր սփիւռք աղդայ միաբանած են , բընաւ չունիս տեղի չըմեղանաց , ինչպէս առաջ եղած էր — : Այս վերջին հատուածը զանց եղած է 'ի Միասերեանէ : Վերջապէս տեսնելով իշխանք որ՝ բան մը չեն շահիր , ունայնաձեռն յետո դարձան և պատմեցին ժողովոյն եղածները : Ասոր վրա Հըռովմայ Քահանայապետին փոխանորդները հրաման ըրին , և ըստ այնմ Նիկողայոս Քահանայապետին թղթէն սուրբ պատկերաց յարդութեան վրա դրուած հատուածը կարդացուեցաւ : Եւ անկից վերջը ժողովքը ուրիշ գործքի վրադեցաւ որ մեր խնդրէն դուրս է :

Ինչպէս ամեն ընթերցող կը տեսնէ . այս պատմութենէն ինքնին կը հետեւի որ՝ յիշեալ խօսքը զոր արտաքյ ժողովոյ զուրցած է աշխարհական ահճ մը , չէ և չի կրնար ըլլալ դաւանութիւն կամ վճիռ և կամ գործ Տիեղերական ժողովոյն : Բայց Վեր . Միասերեանն այս առանձնական խօսակցութեան Տիեղերական ժողովքի վճույ զօրութիւն տալով համարձակութեամբ և համգարտութեամբ մը վրա կը բերէ . — Այսպէս էլուանոնին ուրեմն եկեղեցւոյ հիմնական կազմակերպ է վերբերէ : Բայց է որ եկեղեցւոյ հիմնական կազմակերպ անոր հիմնական կազմակերպ

կը վերաբերի : Բայց այսպէս է և ուղղափառ վարդապետութիւնը , քաւ լիցի . ինչպէս Տէր մի է , մէն է և անոր փոխանորդը յերկրի , մի միայն գլուխ միոյ միայնոյ եկեղեցւոյ : (1)

Վեր . Միասերեան այսչափով ալ լի շատանալով , կուզէ այս իր բերած խօսքին համաձայն ցուցնել՝ Ա. Որմիզդ Քահանայապետին տուած այն հոչակատոր ձեւը :

Այս ձեւոյն վրա մեր ընթերցողաց կատարեալ տեղեկութիւն մը տալու համար՝ կուզենք խընդիրը իր ծագմանէն քննութեան աւնուլ և համառօտիւ ժամանակադրական կարգաւ անցնելով իննել մինչ ցութերորդ սէւնհոգոսն . ուր պիտոք տեսնուի այն ժողովոյ բուն դաւանութիւնը , սըրբոյն Որմզդայ ձեւը , և Քազիկեդոնի ժողովոյն ընծայուած այն ի՞ն . կանոնին արժէքը , զոր յանդէպս ընթերէ է Միասերեանն իր աետրակին մէջ (յեր. 9.) :

Ե .

Հոռվմէական Ինքնակալութեան Աթոռը 'ի

(1) Միասերեան թէպետ հինգ զլուխ գտեր է եկեղեցւոյ , բայց զարմանայի ոշտութեամբ մը անոնցմէ և ոչ մէկը եր աղդին կը չնորհէ : Եւ մինչ ինքը միոյն ճշմարիտ և օրինաւոր իշխանութեանը չուզեր հնազանդի , այլ կը հետու Անոր հրամանացը դէմ . կուզէ որ իր խեղճ ազգը հինգ գըրլուխ միանգամայն ճանչնայ . շատ բան : Այսչափ է ահա Միասերեանի աղքասիրութիւնը :

Բիւզանդիոն փոխադրուելէն ետեւ . սոյն քաղաքը՝
որ նշանաւոր անցեալ մը չունէր , այսու պատճառ
ուաւ և յարմար դրիւքը մէկէն 'ի մէկ մեծցաւ ,
ճօխացաւ և փառաւորեցաւ՝ արեւելքի մէջ գըտ-
նուած ամեն քաղաքներէն աւելի , ըլլալով մայ-
րաքաղաք այնպիսի հզօր և լայնածաւալ ինքնա-
կալութեան մը : Եւ այս յանկարծակի փոփոխու-
թիւնը՝ շատ չանցած՝ սկսաւ եկեղեցական կարգին
վրա ալ ազդեցութիւն ընել : Վասն զի հանդոյն
քաղաքականին նաեւ եկեղեցիքն և եկեղեցականք
նոր չքեղութիւն մը և նոր պայծառութիւն մը կըս-
տանային . և մանաւանդ տեղոյն եպիսկոպոսը , որ
ըստ նմին համեմատութեան կառաւելոյր փառօք և
մեծ իմն ազդեցութեամբ . և իրեն այս բարձր դը-
րիցը պատճառաւ՝ Գաւառաց եպիսկոպոները և
Մետրոպոլիտները՝ արքունեաց կամ ինքնակալին
վերաբերեալ գործք կամ ինդիր մը ունենալու ա-
տեննին , անշուշտ շատ անդամ իրեն գիմելու պէտք
կունենային : Բայց սակայն որչափ յայսպիսիս բար-
ձըր էր անոր դիրքը ու մեծ ազդեցութիւնը , ընդ-
հակառակն յեկեղեցականնուիրապետութեան պար-
զապէս թեմական եպիսկոպոս մը ըլլալով՝ հարկադ-
րուած էր՝ նաեւ Գահերիցանց և Մետրապոլտաց
տեղի տալ և անոնցմէ վար նստիլ և կայնիլ : Այս
համեմատաբար ստորնութեան պայմանը՝ ծանր և
անմիասնական կը թուէր . ուստի և նոր մայրաքա-
ղաքին թէ եպիսկոպոսունքը , թէ կղերը , և նոյն
իսկ զուող ինքնակալք և փառասէր իշխանք ետե-

ւէ էին նոյն Աթոռոյն բարձրանալնուն՝ նաեւ ըստ
եկեղեցական կարգի :

Այս պատճառաւ երբ նոյն քաղաքը գումա-
րեցաւ Երկրորդ Տիեզերական ժողովքը (որ է ա-
ռաջին Կ. Պօլսի) , Նեկտարիոս և իրենները ջանա-
ցին որ 'ինպաստ նոյն Աթոռոյն բան մը շնորհուի .
և որովհետեւ հիմն մը չունէին իրաւաբանութեան
առաւելութիւն մը պահանջելու . ուստի և բաւա-
կան դատիցին առ ժամն պատւոյ նախադասու-
թիւն մը ձեռք բերել ուրիշ ամեն աթոռներէն
առաջ և միայն Հռովմի Աթոռէն վերջը : Եւ իրօք
ալ նոյն ժողովոյն կանոնաց մէջ կընթեռնունք հե-
տեւեալը :

— Կանա Գ. Կ. Պօլսի եպիսկոպոսն ունիցի զպա-
սական գլուխութեան դկնի եպիսկոպոսին Հռովմ-
" մայ , զի Կ. Պօլս' նոր Հռովմ է — :

Թէ ասիկա ե՞րբ և ի՞նչ կերպով գրուեցաւ
նոյն ժողովոյն կանոնաց մէջ , պատմութիւնը մեզի
ծանօթութիւն չի տար : Բայց այս հաւասարի է որ՝
անիկա Մելիտոսի Անտիոքայ Հայրապետին մահ-
ուանէն և Տիմոթէոսի Աղեքսանդրիոյ Հայրապե-
տին ժողովքէն մեկնելեն վերջը դրուած է : Դարձ-
եալ՝ այս ալ ստոյդ է որ , Հարք՝ սոյն ժողովոյն մէջ
ամեն գործուածներուն վրա Դամասոս Հռովմայ
Քահանայապետին ճշդիւ համար տալով՝ Անորմէ
իրենց գործոց հաստատութիւնը ինդրելու ատեն-
նին , բնաւ ամեննեւին յիշեալ Գ. Կանոնին խօսքը
չեն ըներ : Եա թէ՝ Հարց ոիւնհոդոսական թղթոյն

մէջ անանկ խօսքեր կան, որ զուրկ ՚ի հիմանց կը յայտնեն զայն և նոյն իսկ անդոյ : Վասն զի կըսեն թէ — իւրաքանչիւր եկեղեցեաց տեսչութեան նրկատմամբ, հին կանոնաց և Նիկիական որոշմանց հետեւեցանք : Հոս անշուշտ տեղն էր ըսելու չ շորհ : Կ. Պօլսէ Եկեղեցոյն ոռ հէ բացառութեան չ չոր . բայց ասանկ իմաստ մը բնաւ շիկայ : Նոյնպէս կը ծանուցանեն Հարք՝ զՆեկտարիոսը Կ. Պօլսի եպիսկոպոս ձեռնադրենին . բայց դարձեալ՝ յիշատաւ կութիւն մը չեն ըներ նոյն կանոնին : Վերջապէս յիշեալ սիւնհոգոսական թուղթը սկիզբէն մինչեւ վերջը անոր վրա բան մը չի խօսիր, և ոչ իսկ ակնարկութիւն մը կընէ :

Նաեւ ոչ ինքն Նեկտարիոս և ոչ անոր յաջորդներէն մէկը մինչեւ ցաւարտ ժողովոյն Քաղկեդոնի՝ բան մը ծանուցած էին Առաքելական Աթոռույն : Ըսել է որ՝ նոյն իսկ այս կանոնին հեղինակները չի համարձակեցան սիւնհոգոսական դորժոց հետ զայն ալ խրկել ՚ի Հռովմ :

Տիմոթէոս Աղեքսանդրիոյ Հայրապետը . որուն մեկնելէն ետեւ նոյն կանոնը գրուած էր . երբորիմացաւ զայն, ծանը կերպով դանդատ զրեց առ Դամասոս Քահանայապետն Հռովմայ : Եւ իր յաջորդը մեծն կիւրեղ Եփեսոսի ժողովրին մէջ, այն կանոնին՝ հակառակ Նիկիական օրէնսդրութեան ըլլալը՝ յայտնեց : Եւ ոչ իսկ Անախոքայ Հայրապետները գոհ գտնուեցան : Եւ այսպէս առ ժամի անիկա մրաց Կ. Պօլսի եպիսկոպոսական դիւանին մէջ :

Այս կանոնին վրա այսպահ խօսելէն ետեւ, գանք հիմակ Քաղկեդոնի ժողովոյն ընծայուած իլ . երբորդ կանոնին որպիսութիւնը և արժէքը տեսնելու, որ իրեն հիմն առած է այն Կ. Պօլսական ըստած երբորդ կանոնը :

Քաղկեդոնի ժողովը հոկտ . 31. հնդեասաներ բորդ գումարում մը ըրաւ, յորում ընթերցաւ ժողովրին կանոնները 27 թուով, և ժողովոյ Հայք միակամ և միաբան հաստատեցին դանոնք :

Անկէց ետքը Կ. Պօլսի եկեղեցւոյն ժառանգաւորները աղաւեցին Հռովմայ Քահանայապետին վիստանորդներուն՝ որ իրենց եկեղեցւոյն վերաբերեալ կարեւոր մէկ զործոյն հոգ տանին : Փոխանորդները անոնց ըլլած առաջարկութեան հաւանութիւն չի տուին ըսելով որ՝ անանկ բաներու նըկատմամբ Առաքելական Քահանայապետէն հրաման չենք առած : Եւ ամեն բան կատարելապէս լմնցած համարելով՝ ժողովրին դուրս ելան, իիրենց հետ նաեւ Կայսեր կողմանէ ներկայ դանուող իշխաններն ալ, նոյնպէս եպիսկոպոսացմէ շատերը . բայց տակաւին ժողովատեղը կը դժնուեէին ոչ սակաւք : Ասանկ երբոր Գահերեցները մեկնած ըլլալով՝ նիստար կամ գումարումը արդէն լուծուած էր, դարձեալ՝ Աղեքսանդրիոյ Աթոռը պարապետ (ըստ ուրում Դէսուկորոս իբրեւ Եւտիքի համախոհ՝ սոյն Քաղկեդոնի ժողովոյն վճռովը գաաապարտուած և աթոռէն վար առնուած էր .) . նոյնպէս պարապետ էր Ասիական վիճակին Եկղարքանիստ Աթոռեալ

ուշ Եփեսոս՝ մահուամբ վիճակաւորին, իսկ Թալասիոս Կեսարիոյ Մետրապոլիտը՝ որ էր միանգամայն էկզարք Պոնտական վիճակին և նաև բազմաթիւ չարք բացակայ էին. նոյնպէս մեր Հարքը : Ա. Պօլսի եպիսկոպոսը Անատոլիոս և իր ժառանգ աւորները իրաց այս վիճակը յամար առիթ սեպելով Ս. յետիոս սարկաւադին ձեռքով ձեւ մը առաջարկեցին ժողովարանը մնացեալ հարց, և կուղէին որ անոր ստորագրեն իբր քսաներորդ ութերորդ կանոնի. շատերը կամայ կամ ակամայ հաւանեցան. բայց և այնպէս ընդ ամենայն 200, ստորագրութիւն միայն կրցան ձեռք բերել Քաղկեդոնեան 630. Հարց մէջէն :

Բանը Քահանայապետին փոխանորդաց ականջը համելով՝ յաջորդ օրը նոյեմբ . 1. երբորդ դարձեալ ժաղովեցան Ժ. երբորդ անգամ, Պատկապինոս եպիսկոպոս՝ Հռովմայ Քահանայապետին փոխանորդաց առաջինը՝ ասանկ սկսաւ խօսիլ. — Մեզի լուր հասաւ որ՝ երէկ մեր և իշխանաց մեկնելէն ետեւ ժողովոյսմէ հակառակ օրինաց և կարգաց եկեղեցւոյ դործք մը դործուերէ . ուստի կազմչենք Զեր բարձրութեանը որ նոյնը կարդացուի, որպէս զի տեսնենք թէ բոլոր մեր աթոռակիցներն ալ իրաւացի կը համարին զայն. Երբոր յիշեալ կանոնը կարդացուեցաւ, Լուկենտիոս եպիսկոպոս Քահանայապետին երկրորդ փոխանորդը՝ դործը մեղմելու համար ըսաց թէ Քի է նուած ո՞ ժողովոյ եռուկաները ակամայ կամատ ժամանեցան էլշաւլ հանոնին, երբոր սամանք (այսինքն՝ նոյն կանոնին ստորագրողները)

ըսին թէ կամատ ժողովնեցան . Լուկենտիոս վրայ բերաւ — Նիկիոյ Ս. ժողովոյն 348 Հարց սահմանները մէկ- ո դի թողլով, 150 եպիսկոպոսաց (կանոնները) կը ո յիշեն, որոնք Առաքելական Հռովմէական Ս. թոռ- ո ռէն, Աղեքսանդրիոյ և ուրիշ շատ եպիսկոպո- ո սացմէ մերժուած սիւնհողոսական կանոններուն ո մէջ իսկ չեն գտնուիր : Եթէ Ա. Պօլսի ժողովքէն ո ՚ի վեր՝ Բիւզանդիոյ եպիսկոպոսները այս զիսա- ո ւորութեան արտօնութիւնները վայելեցին, հիմա ո ի՞նչ կը խնդրեն . ով որ ունի չի խնդրեր, իսկ ո եթէ չի վայելեցին՝ ի՞նչ պատճառաւ կը խնդրեն —

Անատոլիոս լուր կեցած էր և իրեն տեղ կը խօսէր Ս. յետիոս Ա. Պօլսի եկեղեցւոյն սարկաւագապետը : Որ և հարցուց Քահանայապետին փոխանորդաց, թէ այս բանիս վրայ Քահանայապետէն յատուկ յանձնարարութիւն մը ունին : Ս. յն ատեն Բոնիփակիոս երէցը . որ Քահանայապետին երբորդ փոխանորդն էր, սիւնհողոսի խրկուելու ատեննին . Ս. Լէոն Քահանայապետէն իրենց արուած հրահանգը հանելով. անկէց սա հետեւեալ խօսքերը ընթերցաւ . — Բնաւ մի՛ թող տաք, որ յանդգնոււ թեամբ այլոց՝ եղծանին կամ տկարանան Ս. Հարց սահմանքը, պատսպարելով առ ամենայն ոք մեր անձին արժանապատութիւնը, զոր փոխանորդա- բար Զեզի կը յանձնենք . և եթէ պատահի որ ո ոմանք իրենց քաղաքին պայծառութեանը ապաս- տանելով, փորձ փորձեն բան մը յափշտակել (usurpare), դուք վայելուչ հաստատութեամբ դէմ

» կենալով խափանեցէք — : Պասկաղինոս (առաջին Քահանայապետական փոխանորդը) մէջ բերաւ նաեւ Նիկիոյ ժողովոյն Զ. կանոնը , որ կոկի — Եկեղեցին Հռովմայ մշտ կալու Դիլուսորութիւն . էալցի և Եկեղեցու — եւայն . (տես յերես 24.) : Հարք պատասխան տուին թէ իրենք ալ՝ համաձայն նոյն (Նիկիական) կանոնաց՝ գիտէին Հռովմայ Քահանայապետին ամեն գլխաւորութիւն և պատիւ ունենալը :

Քահանայապետական փոխանորդները յայտնի ըրին որ իրենց ձեռքը ունեցած հրահանգնուն համեմատ չեն կրնար բնաւ հաւանիլ անոնց ըրածնորածեւթեանը : Բայց տեսնալով թէ Անատոլեանք հաստատ կը կենան իրենց ըրածին վրայ . Լուկենտինոս Եպիսկոպոս (Քահանայապետական երկրորդ փոխանորդը) այս կերպով յայտարարութիւն բրաւ . — Առաքելական Աթոռը պատուիրեց՝ որ ամեն բան « մեր ներկայութեամբը ըլլայ , ասոր համար ինչ » որ երէկ մեր բացակայութեան ատենք՝ ՚ի բռնա « բարութիւն կանոնաց դործուեցան , կը ինդրենք « Ձեր բարձրութենէն որ՝ ջնջել հրամայէք : Ապա « թէ ոչ մեր ընդդիմութիւնը արձանագրուի այս « դործոց մէջ . որպէս զի դիմաք , ինչ որ պիտի հաղորդենք Առաքելական և ամենայն եկեղեցեաց Գլխաւոր Եպիսկոպոսին , որպէս զի կարենայ վճիռ տալ իր Աթոռին եղած անարգանացը « և կանոնաց կործանմանը — :

Անատոլիոս և իրենները տեսնելով որ՝ չէ հնար Քահանայապետական փոխանորդները իրենց կա-

մայը խոնարհեցնել , և իրենց հետ միաբանել . խոնարհութեամբ Ա. Էէսն Քահանայապետին դիմեցին , ՚ի դիմաց բոլոր ժողովոյն գրելով Անոր ճըշդութեամբ ժողովքին մէջ անցած բոլոր նախընթաց դէպքերը . յետոյ կը յիշեն նաեւ նոյն ժողովոյն իններորդ և եօթնեւտասներորդ կանոնները , որոնց մով Թրակեան , Ասիական և Պոնտական վիճակաց նկատմամբ արտօնութիւն կը չնորհուէր Կ. Պօլսի Եպիսկոպոսին , որպէս զի յիշեալ գաւառաց մէջ եթէ Եպիսկոպոսաց կամ ժառանգաւորաց մէկը իր Աետարութուն դէմ դատ ունենայ , կարող ըլլայ (երբ կարեւոր համարի) բողոքել կամ վիճակին Եկղարքին և կամ Կ. Պօլսի Եպիսկոպոսին , և ապա կը յաւելուն .

» — Հաստատեցինքնաեւ 150. Ա. Հարց կանոնը, որոնք « ժողովեցան Կ. Պօլսի բարեյիշատակ մեծն Թէու « դոսի ատենը , որ (կանոնը) կը պատուիրէ՝ որ Զեր « Ամենասուրը և Առաքելական Աթոռէն ետքը՝ Կ. « Պօլսի Աթոռը պատիւ ունենայ . . . : Զեր սըր « բութեան Տեղակալները Պատկազինոս և Լուկենտ « տիսս Սրբազնն Եպիսկոպոսունք և անոնց հետ « եղող Գերապատիւ Բոնիփակիսս երէցը՝ ասոնց « այսպէս սահմանելուն սաստիկ կերպով դէմ կեցան . առանց երկրայութեան ուղելով որ այս բարիքն ալ Զեր Երանութեան խնամքէն սկսի (1) ,

(1) Քահանայապետական փոխանորդաց ընդդիմութիւնը այս մաքով չէր , ինչպէս կուզեն ձեւացնել . այլ բացարձակ կերպով , այսինքն՝ ՚ի պահպանութիւն կանոնաց և յայտնի հըրամանի Էէսնի Քահանայապետի , որ զիրենք փոխանորդ և տեղակալ իւր կարդեր էր ՚ի նոյն ժողով :

„որպէս զի՝ ինչպէս հաւատոյ , ասանկ ալ բարի
 „կարգաւորութեան արդասիքը Ձեզմով որոշուի :
 „Վասն զի մենք զիջանելով թէ Ամենաբարե-
 „պաշտ և Քրիստոսասէր ինքնակալաց , որոնք շատ
 „կը բաղձան այսբանիս , թէ Ամենապայծառ Ծերա-
 „կուտին և թէ բոլոր ինքնակալութեան քաղաքին ,
 „յարմար տեսանք որ՝ անոր այս պատիւը՝ հանդի-
 „սապէս հաստատուի Տիեզերական ժողովքէն : Եւ
 „ինչպէս որ ասոնք Քու Արբութենէդ սկզբնաւո-
 „րեցան , ըստ որում միշտ փոյթ և պատրաստ ես
 „՚ի նպաստաւորել . մենք ալ համարձակութիւն ա-
 „ռինք զօրացնել , դիտնալով թէ որդւոցմէ գործ-
 „ուած ամեն ուղղութիւնները՝ Հարց կը վերա-
 „դառնան : Արդ՝ կաղաչենք որ քու վճիռներովդ-
 „պատուես մեր գատումը , և ինչպէս մենք ՚ի բա-
 „րիս համաձայն եմք Պլխոյդ , ասանկ Պերակատար
 „Բարձրութիւնդ ալ հաճի զիջանիլ որդւոցդ ՚ի
 „պատշաճականս+ : Պարճեալ այս բառերն ալ կը
 դտնենք գրուած . — Փրկիչն իր այդւոյն պահպա-
 „նութիւնը Քեզի յանձնած է , և թէ՝ թէպէտ
 „Քու անձիդ վրա ժողոված ես առաքելական պայ-
 „ծառութեան լրութիւնը . և այն պայծառութիւ-
 „նը շատ անդամ տարածած ես նաեւ Կ. Պօլու ե-
 „կեղեցւոյն վրա , ինչպէս սովոր ես աննախանձ
 „Քու բարեայդ հաղորդակցութեան կոչել զանոնք՝
 „որոնք սիրով Քեզի հետ միացած են :

Նաեւ Մարկիանոս ինքնակալը և ուրիշներն
 ալ գրեցին նոյն Արբաղան Քահանայապետին , յո-

ըում ՚ի մասնաւորի յիշեալ կանոնին հաստատու-
 թեանը համար խնդիրք կընէին :

Մեծն լէոն Քահանայապետը նոյն ընդ նոյն
 չի պատասխանեց այս սիւնհոգոսական թղթոյն . այլ
 առանձնակի յանդիմանութիւն դրեց Անատոլիոսի՝
 փառասիրութեամբ եկեղեցական կարգաց մէջ նո-
 րաձեւութիւն մոյնել ուղելուն համար . յորում կը
 յաւելու եւս — Քու համոզմանդ ամենեւին չի նը-
 „պաստեր քանի մը եպիսկոպոսաց ասկէց ՅՈ տարի
 „առաջ (ինչպէս մէջ կը բերես) ըրած կարգադ-
 „րութիւնը : Եւ որուն ծանօթութիւնը Քու նախորդ
 „ներէդ ամենեւին տրուած չէ Առաքելական Աթո-
 „ոռյն : Անոր՝ որ յիւրում սկզբան զազփաղփուն
 „է , ցարդ իսկ անզօր , հիմակ անադան և յանօ-
 „դուսունեցուկ տալ ուղեցիր՝ Քու Եղբարցմէ տե-
 „սակ մը հաւանութիւն վիրցնելով , զոր ժաեալ ակ-
 „նածութիւնը ՚ի վսաս իւր պիտոր մատուցանէլ
 „Քեզի — :

Մարկիանոս կայսեր ալ երկայն թուղթ մը գը-
 րեց , յորում բաց յայլոց այս ալ կը յաւելու — Եթէ
 „Անատոլիոս եպիսկոպոսը անպատեհ միջոյներով
 „կուղէ բարձրանալ՝ ծանր թշնամանք կը բերէ նա-
 „և իր պատոյն : Մեր բաղձանքը այս է որ՝ վա-
 „յելէ Կ. Պօլիս քաղաքը , անոր պայծառութիւնը .
 „Վայելէ՝ Աստուծոյ հովանաւորութեամբ՝ շատ
 „տարի՝ Զեր գթութեան կայսերութիւնը : Բայց
 „ուրիշ է աշխարհական իրաց պատճառը , և ու-
 „րիշ Աստուծածային իրաց պատճառը : Զի կընար

“ շինուածք մը ըլլալ արտաքոյ այնը վիմի , զոր Տէր
“ հիմն դրաւ : Կը կորսնցնէ իրենը՝ որ կը գիմէ
“ յանպատեհս : Գոհութեամբ վարէ Անատոլիոս
“ այնպիսի մեծ քաղաքի մը եպիսկոպոսութիւնը՝
“ զոր Զեր բարեպաշտ խնամքովը և Մեր նպաս-
“ տաւորիչ հաւանութեամբը ըստացաւ : Թո՞ղ չար-
“ համարհէ թագաւորական քաղաք մը , եթէ չի կըր-
“ նար զայն Առաքելական Աթոռի փոխել , և ու-
“ րիշին վնասուքը նպաստաւորելու յոյար մէկ կողմ
“ ձգէ — : Կը յայտնէ եւս որ այս նորաձեւութիւնը
հին սովորութեան և Նիկիական կանոնաց հակա-
ռակէ . և թէ իր պարտքն է անոնց վրա հսկել և
փոյթ տանիլ որ՝ չարութեամբ և փառասիրութեամբ
չի վնասուին կամ չփոփոխուին : Աերջապէս կը խնդ-
րէ ինքնակալէն յորդորել զԱնատոլիոս՝ որ 'ի չա-
փու կենայ և փառասիրութեամբ չի խանգարէ եկե-
զեցական կարգերը : (Թուղթ. 104.) :

Թէպէտ և այս թղթերը ինքնին բաւական կը
յայտնէին Քահանայապետին միտքը և որոշմունքը .
բայց Անատոլիոս սիւնհոդոսական թղթոյն նկատ-
մամբ Անոր լուութենէն առիթ առնելով՝ իրեն գըր-
ուած յանդիմանութեան թուղթը ծածկեց , և սկը-
սաւ հրատարակել որ՝ Քահանայապետն ալ հաւա-
նած է եղածին :

Քահանայապետը վերջապէս սիւնհոդոսական
թղթին ալ պատասխան տուաւ , յորում Քաղկե-
դոնեան ժողովոյն վարդապետական որոշմունքները
հանդիսապէս հաստատելէն ետեւ , յայտնեց որ

Նիկիատկան սահմանադրութեան և եկեղեցական
կարգաց դէմ 'ի շնորհս փառասիրութեան եղած
նորաձեւութիւնը բնաւ զօրութիւն չէր կրնար ու-
նենալ , ինչպէս արդէն յայտներ էր առանձին թըլ-
թով Բիւղանդիոյ Անատոլիոս եպիսկոպոսին :

Անատոլիոս տեսնելով որ իր հնարքները 'ի
գերեւ կելլեն , ուրիշ միջոցներու կը գիմէր . բայց
Արիասիրտ Քահանայապետը յայտնապէս ծանոյց
Մարկիանոս ինքնակալին որ՝ յորդորէ զԱնատոլիոս
ի չափու կալ , ապա լժէ ոչ՝ կը հարկադրուի Առա-
քելական իշխանութեամբ վարուիլ անոր հետ :

Բարեպաշտ ինքնակալին յորդորը և կանոնա-
կան պատժոց սպառնալիքը խոնարհեցուցին Անա-
տոլիոսի բարձրամտութիւնը . և ինքնակալն ալ անոր
համար միջնորդ եղաւ առ Քահանայապետն , և
անոր ուղղութեանը խօսք տալով՝ խնդրեց որ 'ի շնոր-
հըս իւր բնդունի զԱնատոլիոս , ինչպէս կը վկայէ
ինքն մեծն լէսն իր 127. թղթին մէջ այսպէս

— Նաեւ ուրիշ թուղթ գրեց մեզի (Մարկի-
ո անոս) , միջնորդ ըլլալով Անատոլ եպիսկոպոսին
“ համար , որ 'ի շնորհս մեր ընդունինք զանիկա ,
“ որովհետեւ կը խոստանայ անոր ուղղութիւնը — :

Քահանայապետը հաւանելով կայսեր միջնոր-
դութեանը խօսք տուաւ ընդունիլ զԱնատոլ 'ի
շնորհո իւր . բայց յայտնի պայման գնելով՝ անոր
ճըմարիտ ուղղութիւնը — Որպէս զի 'ի գործ գնէ՝
“ ինչ որ լեզուաւ կըսէ : Իսկ եթէ՝ Վեհափառ
“ ինքնակալ , ճարտարարուեստ հնարիւք ուղէ յայն-

„պիսիս՝ դիմել՝ որ ոչ Աստուծոյ և ոչ Ձեր բարեպաշ-
„տութեանը հաճոյ է . պահելով Ձեր գթութեան
„յարդը , ամենուն հետ և ամենուն նպաստիւքը՝
„նաեւ միացեալ Ձեր ջանիցը հետ . աւելի որոշ
„խստութեամբ պիտոր դէմ երթամ հպարտի մը՝
„որուն իր բարի գործոցը համար յաւէտ կերթա-
„յի եղբայրական սիրով զի՞նքը ընդդրկելու—
(Թուղթ . 128 . և 134) :

Խնամուտ Քահանայապետին այս արիական հաս-
տառութիւնը և միանդամայն հայրադորով սրտիւ
զզջացեալը ընդունելու պատրաստականութիւնը
տեսնելով Անատոլիոս , խոնարհութեամբ դիմեց ա-
նոր գթութեանը , և առանձինն գրութեամբ ծանոյց
իր հնաղանդութիւնը : Նախ կը յայտնէ իր անմը-
խիթար վիշտը Քահանայապետին թղթերէն զուրկ
մնալուն համար , որոնք եպիսկոպոսական հոգոց և
աշխատութեանց մէջիր միակ սփոփանքն ու քաշալե-
րութիւնն էին . թէ Անոր հրամանին համեմատ Այէ-
տիոս սարկաւագապետը նորէն իր պաշտօնին դար-
ձուց . կը ինդրէ որ՝ պատուէ զանիկա առանձինն
թղթով մը : Գալով Քաղկեդոնեան ըսուած կանոնին .
այսպէս կը խօսի . — Խոկ այն բաներուն համար՝ որոնք
ոքիչ մը յառաջ եղած Քաղկեդոնի ընդհանուր
ժողովքէն կարդագրուեցան ՚ի շնորհս Աթոռոյն
Կ. Պօլսի . Ձեր երանութիւնը ապահով ըլլայ որ՝ ես
ո բնաւ յանցանք մը չունիմ . ինչու որ ՚ի տղայ տիոց
ո հաճելի եղած է ինծի ամփոփեալ ՚ի խոնարհու-
թեան՝ սիրել անդորր և խաղաղ կեանքը . այլ

„Կ. Պօլսի եկեղեցւոյն Գերապատիւ կղերն է այս
„բանիս հոգ տանողը , որոնց հետ միաբանեցան
„այս կողմերու բարեպաշտօն քահանայք և իրենց
„օդնական եղան յայսմ մասին : Սակայն և այնպէս
„գործուածներուն բոլոր զօրութիւնը և հաստա-
„տութիւնը Ձեր երանութեան իշխանութեանը
„վերապահուած է : Արդ՝ Ձեր որբութիւնը յայտ-
„նի գիտնայ որ՝ այն գործքին ես իմ կողմա-
„նէ ամենեւին պատճառ մը տուած չեմ . որովհե-
„տեւ ես ինծի պարտք համարած եմ խորշիլ մնա-
„պարծ թեթեւութենէն և ուրիշի բանին բաղձանք
„ձգելէն— : (Թուղթ . Անատոլ . ՚ի 132. Թղթ . Ա.
Լէսնի) : Եւ ոչ այսչափ միայն , այլեւ յիշեալ քսա-
ներորդ ութերորդ ըսուած կանոնը չնչեցին եկե-
ղեցական դիւանագիւներէն (codice) . ինչպէս յայտ-
նի է Գիւնէսիոս Էկսիկոյի թարգմանութենէն ՚ի
Յունէ ՚ի Լատին , յորում քսանք եօթը կանոն մի-
այն կայ . Թէոդորոս միայնակեցին հաւաքմունքէն
(Գիրք . Գ.) և ուրիշներէն :

Ասոր վրա Քահանայապետը առանձին թղթով
առ Անատոլիոս՝ ընդունեցաւ զանիկա ՚ի շնորհս իւր ,
բայց կարեւոր ազդ-արարութիւններն ալ զանց չը-
րաւ . բոլոր յանցանքը կղերին վրա ձգելը անդէպ
կը համարի , և ազդ կընէ հեռու կենալ ապօրի-
նաւոր կերպով իրաւունք ստանալու ախորժակէն .
(Թուղթ . 135.) :

Այս պատճենագիւն յայտնի կը տեսնուի
Նախ . թէ յիշեալ քսաներորդ ութերորդ կա-
8

Նոնին հիմն առնուած կ. Պօլսի Գ. կանոնը անդօք
և անհաստատ է :

Երկրորդ . թէ նոյն (քսաներորդ ութերորդ
ըսուած) կանոնը՝ օրինաւոր նիստի մէջ չի գրուե-
ցաւ, այլ օրինաւոր նիստը լուծուելէն և եպիսկո-
պոսաց մեծագոյն մասին և նոյն իսկ Գահերիցանց
(Հռովմէական Քահանայապետին փոխանորդաց)
մեկնելէն ետեւ՝ ժողովքին փոքր մասէն յօրինեցաւ:

Երրորդ . թէ Գահերէցները ուրիշ (այսինքն՝
յաջորդ) նիստի մէջ՝ ոչ միայն չընդունեցան զայն,
այլ և յայտնապէս մերժեցին :

Չորրորդ . ոչ միայն բոլոր Հարք, այլ նոյն
իսկ ինքն Անատոլիոս, այնպէս կը խոստովանին, որ
իրենց գործքերը Քահանայապետին իշխանութե-
նէն զօրութիւն և հաստատութիւն պիտօր առնուն,
և ըստ այնմ Անոր (Հռովմայ Քահանայապետին)
իշխանութեանը վերապահեալ են :

Հինգերորդ . թէ Քահանայապետը ոչ միայն
չի հաստատեց այլ և յայտնապէս մերժեց զայն :

Վեցերորդ . թէ նոյն կանոնին հետամուտները
կամ հեղինակներն իսկ՝ ըստ հրամանի Քահանայա-
պետին ջնջեցին զայն ՚ի վաւերական կանոնադրոց :

Ուրեմն ինչ զօրութիւն կրնայ ունենալ այս-
պիսի կանոն մը զոր մէջ կը բերէ Վեր . Միասե-
րեան (յեր . 9.) և կուզէ որ՝ անիկա իրը հիմն առ-
նուած ըլլայ Լատերանեան (Դ.) և Փլորենտեան
ժողովոց վճիռներուն՝ որ վասն Քահանայապետին
Հռովմայ և վասն Արեւելեան Պատրիարքաց :

Մենք նորէն այս խնդրոյն պիտոր գառնանք
գործոյս երկրորդ մասին մէջ. յորում մէջ պիտոր
բերենք յիշեալկանոնը : Ա.յատեղ մէկ խօսք մընալ
կը մնայ ըսելու . այսինքն թէ ինչո՞ւ արդեօք Միա-
սերեան այսպիսի անվաւեր կանոն մը մէջ բերեր է :
Ազգային իրաւունք պաշտպանելո՞ւ համար . —ոչ
բնաւ: Վասն զի այս կանոնը բոլորովին կեղծանէ զայն
և ամեն բան կը յանձնէ կ. Պօլսի եպիսկոպոսին .
ըստ որում նաեւ եպիսկոպոսաց ձեռնադրու-
թիւնը յիշեալ (կ. Պօլսի) եպիսկոպոսին կը վերա-
պահուի : Միասերեան գոհ է ամեն բանի, միայն
թէ Հռովմայ Ա.թոռոյն վնասիչ ըլլայ, անվաւեր՝
իր ազգին վնասակար՝ ինչ որ կուզէ ըլլայ . այս-
չափ է իր ազգափրութիւնը . բայց ի՞նչ պիտոր
ըլլայ արդեօք ասոնց այսափ յունասիրութիւնը .
արդարեւ զարմանալի դադանիք մըն է այս :

—

Զ.

Ինչպէս տեսանք Անատոլիոս Ա. Էւոն Քահա-
նայապետին հրամանին համեմատ ջնջեր էր եկե-
ղեցական կանոնագրքէն այն Քաղկեդոնեան ըսուած
քսաներորդ ութերորդ կանոնը . և թէ ինը և թէ
իր յաջորդը Գեննատիոս աղէկ ընթացքով վար-
ուեր էին մինչեւ ցամն 472.

Բայց յիշեալ թուականին գմբազգաբար կ.

Պօլսի Աթոռը Ելաւ Ակակիոս, որ իրեն օգնական ունենալով մանաւանդ զջենոն ինքնակալը, կը ջանար Արեւելքի մէջ դտնուած բոլոր Եկեղեցեաց վրա իրաւաբանութիւն դործածել իրեւե Երկրորդ Աթոռ զկնի Հռովմէականին . Սիմբլիկիոս Քահանայապեաը քաղցրութեամբ ջանաց զինքը 'ի չափու ունել. բայց տեսնելով որ՝ օր ըստ օրէ կեւելցնէր իր յանդուգն ձեռներիցութիւնը . յայտնի ծանոյց անոր իր գժգոհութիւնը, և հրաւիրեց զանիկա 'ի պահպանութիւն ուղղափառ հաւատոց և կանոնաց և կարգաց Եկեղեցւոյ : Սիմբլիկիոս Քահանայապեաը իր յորդորանաց Ելքը չի տեսած վախճանելով՝ իրեն յաջորդեց Փելիքս Գ. ասիկա դարձեալ զԱկակիոս ուղղութեան բերելու փորձեր ընելով՝ երբ տեսաւ որ օդուտ մը չըներ, յայտնապէս բանադրեց զանիկա և Եկեղեցւոյ հաղորդակցութենէն կտրեց յամի 484 : Եւ այս յունական առաջին հերձուածը երեսուն տարիէն աւելի տեւեց

Ակակիոս Եկեղեցւոյ հետ չի հաշուած իր կեանքը կնքեց, և իրեն յաջորդեցին 'ի նմին հերձուածի Փղաբիգաս, Եւփիմիոս, Մակեդոն Բ. և Տիմոթէոս : Եւ նոյն ժամանակին մէջ իրարու յաջորդեցին Փելիքս երրորդէն վերջը՝ Գեղասիոս, Անաստաս, Արմաքոս և Որմիզդ սուրբ Քահանայապեաները :

Հերձուածը վերցնելու համար շատ ջանքեր եղան . Ակակիոսէն ետեւ նստողները կը դաւանէն Հռովմայ Քահանայապեաին գլխաւորութիւնը

և իրենց անոր հպատակելու պարտքը . բայց որովհետեւ չէին ուզեր անոր դրած պայմանները կատարել՝ որոնց գլխաւորն էր Ակակիոսի անունը դուրս հանել Յայսմաւութքէն (diptyque) իրեւե հերձուածողի . անոր համար Քահանայապեաքառ ալ ոչ հաստատեցին անոնց հայրապետութիւնը՝ զոր կը խնդրէին, և ոչ իսկ ընդունեցան զանոնք 'ի հաղորդակցութիւն ուղղափառաց :

Երբոր այս կերպով ինդիրը կերկարէր Ա. Որմիզդ Քահանայապետը յամի 517 . դաւանութեան ձեւ մը ճամբեց յԱրեւելս, հրաման ընելով որ Արեւելքի եպիսկոպոսները ստորագրեն՝ որպէս զի ընդունուին 'ի հաղորդակցութիւն Ս. Եկեղեցւոյն Հռովմայ : Յետ բանակցութեանց վերջապէս լիովին 'ի դործ դրուեցան Քահանայապետին հրամանները և դրած պայմանները : Յամի 519 Ակակիոսի և անոր՝ արտաքոյ հաղորդակցութեան Հռովմէական Եկեղեցւոյ յաջորդող՝ Փղաբիգասի, Եւփիմիոսի, Մակեդոնի, և Տիմոթէոսի, Եւ Զենոնն և Անաստաս կայսերաց անունները Յայսմաւութքէն դուրս ձգուեցան իբրեւ հերձուածոզաց, և Քահանայապետին խրկած ձեւոյն ամենէն առաջ ստորագրեց Կ. Պօլսի նորընտիր Եպիսկոպոսը Յովհաննէս . որուն հետեւեցան դբեթէ վեց հարիւր Եպիսկոպոսք, Արքեպիսկոպոսք և Պատրիարք Արեւելից : Այս ամեն ուղղութիւնները տեսնելով Ս. Որմիզդ ընդունեցաւ և հաստատեց Յովհաննէսի ընտրութիւնը յԱթոռ Հայրապետութեանն

Կ. Պօլսի : Ես այսպէս հերձուածը վերջացաւ և Ե՞ս կեղեցւոյ իսաղաղութիւնը վերստին հաստատեցաւ . որուն մեծապէս սատար եղաւ նաեւ Յուստինոս ինքնակալը :

Բերենք հոս ամբողջ յիշեալ Որմզդեան ձեւը , որպէս զի տեսնէ Միասերեան թէ անիկա իր դի- աած նպատակին գէմ ինչ ազդեցութիւն կընէ :
— կանոն հաւատոյ .

“ Առաջին փրկութիւն է ուղիղ հաւատոյ կա-
” նոնը պահել , և Հարց սահմաններէն (1) բնաւ չի
” խոտորիլ . և զի չի կրնար ’ի դերեւ ելլել Տեառն
” մերոյ Յիսուսի Քրիստոսի վճիռը՝ որ ըսաւ . Դու է
” չէ , և ’ի վերա այր կէտ շնեցի չեւեւէնէ է , եւայլն .
” և իրայ արդիւնքները ճշդրտեցին այս խօսքը .
” ինչու որ՝ յԱռաքելական Աթուն միշտ անարատ
” պահուեցաւ կըօնքը (immaculata est semper ser-

(1) Այս ձեւը Կ. Պօլսի Յովհ . Եպիսկոպոսէն առ Յ. Որ-
մզդ գրուած թղթոյն մէջ հետեւեալ տարբերութեամբ բեր-
ուած է : — . . . և Հարց աւանդութիւններէն չի խոտորիլ . . .
» Զի յԱթուն Առաքելական անեղծ կը պահպանուի միշտ . . .
» վասնորոյ յամենայնի կը հետեւինք Առաքելական Աթուոյդ ,
» և կը քարոզենք ինչ որ Անորմէ վճռուած են . . . որոնք
» զատուած են կաթողիկէնեղեցւոյ հաղորդակցութենէն , այս
» է՝ որոնք չեն յամենայնէ համաձայն Առաքելական Աթուոյն :
» Եւ եթէ բանի մը մէջ այս իմ դաւանութենէս երկմտելու փորձ
» քարձեմ , կը խօստովանիմ իմ դատապարտութեամբս հա-
» զորդ բլլալ անոնց՝ զորս դատապարտեցի . . . : (Լապէ .
Հա . Պ. Հաւատք . 1488 . և 1487) :

” vata religio) : Արդ՝ այս յայսէն և հաւատքէն չու-
” զելով երբէք բաժնուել , և յամենայնի հարց սահ-
” մանաց հետեւելով՝ կը նզովենք ամեն հերետի-
” կոսները , ’ի մասնաւորի զնեսասոր , եւայլն : Ուս-
” տի՝ ինչպէս առաջ ըսինք , յամենայնի Առաքե-
” լական Աթուոյն հետեւելով , և քարոզելով անոր
” ամեն սահմանադրութիւնքը՝ կը յուսամ որպէս
” զի արժանի ըլլամ մնալ Զեզի հետ այն մի հա-
” զորդութեան մէջ՝ զոր կը քարոզէ Առաքելական
” Աթուուը , յորում է ամբողջ և ճշմարիտ հաստա-
” տութիւն (soliditas) Քրիստոնէական կրօնից : Կը
” խոստանամ չյիշել ’ի կատարման սուրբ խորհր-
” դոց անոնց ամենուն անունները՝ որոնք զատուած
” են կաթողիկէ եկեղեցւոյ հաղորդակցութենէն .
” այս է՝ որոնք չեն համաձայն Առաքելական Աթո-
” ուոյդ : Եւ այս հաւատոյ դաւանութիւնը ես իմ
” սեփական ձեռքովս ստորագրեցի և մատուցի
” Քեզ Որմիզդ սուրբ և պատուական Պապիդ
” Քաղաքին Հռովմայ : Տուեալ ’ի 15 . կաղանդաց
” Ապրիլի . (Լապէ . Հա . Պ. Հաւատք . 1444 .
Տպագը . Բարիսեան 1871.) :

Ետքէն Փոտեան հերձուածը ելաւ . յորում
Փոտ աշխարհական իշխանութեան ձեռքով զՍ. Իգ-
նատիոս Կ. Պօլսի Աթուուէն վար իշեցնելով և աք-
սորել տալով՝ յափշտակեց զայն : Որ եւ թէպէտ
կեղծաւորաբար գիմեց Նիկողայոս Ա. Քահանա-
յապետին , և ձեւացնելով որ՝ Իգնատիոս իր ծե-
րութեանը պատճառաւ կամաւորապէս Աթուուէն

Հրաժարեր և ինքը օրինաւորապէս անոր յաջորդերէ , խնդրեց Անորմէ իր հաստատութիւնը . բայց Քահանայապետը ամեն եղածներուն տեղեկանալով՝ ոչ միայն չի հաստատեց անոր հայրապետութիւնը այլ և յայտնապէս մերժեց , և յայտնեց որ՝ Իգնատիոս էր օրինաւոր Հայրապետ Կ. Պոլսի , և Փռտայ ըմբոստութիւնը տեսնելով՝ նղովեց և բանադրեց զանիկա և իր հետեւողներովը կտրեց 'ի հազորդակցութենէ եկեղեցւոյ : Եւ որովհետեւ հերձուածը երթարով կը սաստկանար , և շատ բարեմիտ հաւատացեալներ շփոթած էին և ինչ ընելիքնին չէին դիտեր , վասնորոյ Նիկողայոս Քահանայապետը այս շփոթութիւնը փարատելու համար Ս. Որմիզդ Քահանայապետին ձեւոյն համեմատ (զոր վերը մէջ բերինք) դաւանութեան ձեւ մը յօրինեց և կը պատրաստէր Արեւելք խրկելու , որպէս զի ով որ անոր ստորագրէ և անոր հետեւի իբր ուղղափառ ճանչցուի և ով որ յանձն չառնու զայն՝ իբր հերձուածող մերժուի . բայց մահը վրա դաւով չի կըցաւ դորձագրել զայն :

Ս. Նիկողայոսի յաջորդեց Ս. Ադրիանոս Բ. որ երբ իր նախորդէն սկսած դորձը յառաջ վարելու վրա էր . Վասիլ Հայկազն բարեպաշտ կայսերմէ պատրամաւորներ հասան թղթով , որով կաղաչէր զՔահանայապետը որ հրաման ընէ Տիեզերական ժողովը գումարելու 'ի դատապարտութիւն և 'ի բարձումն հերձուածոյն և 'ի հաստատութիւն ուղղափառութեան : կը յայտնէր միանգամայն որ՝ իր

նախորդին (Նիկողայոս Քահանայապետին) հրամանին համեմատ , Փռտը մերժելով՝ իզնատիոս օրինաւոր հայրապետը իր Աթոռը դարձուցեր էր : Քահանայապետը կայսեր այս բարի տրամադրութիւնը տեսնելով՝ զիշաւ անոր խնդրանացը , և հաւանեցաւ՝ որ Տիեզերական ժողովք գումարուի 'ի Կ. Պոլսի (որ է Բ. Տիեզերական ժողովքը) : Ուստի և նոյն քաղաքը խրկեց իր փոխանորդները , անոնց հետ ճամբեց՝ նաեւ յանուն իւր՝ յիշեալ Առաքելական թուղթը զոր պատրաստեր էր Ս. Նիկողայոս Քահանայապետը : Պատուէր տուաւ իր փոխանորդաց որ զանոնք միայն յԵպիսկոպոսաց ընդունին 'ի հազորդութիւն իւրեանց և 'ի ժողովն , որոնք յանձն առնուն և ստորագրեն նոյն թուղթը :

Քահանայապետին հրամանը ճշդիւ 'ի դորձ դրուեցաւ և ամեն ուղղափառ Եպիսկոպոսունք յօժարակամ ստորագրելով մտան 'ի ժողովն և բազմեցան իրենց պատշաճեալ աթոռները : Ի հերձեալ եպիսկոպոսաց անոնք՝ որ յանձն առնելով Քահանայապետին իրենց համար սահմանած պայմանները՝ դարձի եկան և ստորագրեցին նոյն թղթոյն , ընդունուեցան 'ի հազորդութիւն ուղղափառաց մացեալ հերձելոց ալ առաջարկուեցաւ նոյնը , բայց երբոր անոնք յամառութեամբ դէմ կեցան , մեր ժուեցան իբրեւ անուղղայ :

Իերենք հօս յիշեալ թղթոյն գլխաւոր մասեւը , որ է այս .

—Առաջին փրկութիւն է ուղիղ հաւատոյ կա-

„ նոնը պահել, և Աստուծոյ ու Հարց սահմաննեւ
 „ բէն չի խոտորիլ: Եւ զի ճշմարիտ է Տեառն մե-
 „ րոյ Յիսուսի Քրիստոսի խօսքը՝ որ ըստ Երանել-
 „ ւոյն Պետրոսի՝ Դու եւ վու և է քրոյ այդ վէ՛ վնեցն
 „ վնեցն է՛, արդիւնք իրաց ճշգրտեցին զայն.
 „ որովհետեւ յԱռաքելական Աթոռն միշտ անա-
 „ րատ պահուեցան կաթողիկէ կրօնքը և սուրբ
 „ վարդապետութիւնը: Արդ՝ անոր հաւատքէն և
 „ վարդապետութենէն չուզելով երբէք բաժնուիլ.
 „ և Հարց՝ մանաւանդ Առաքելական Աթոռոյն
 „ սրբազն Քահանայապետաց սահմաններուն յա-
 „ մենայնի հետեւելով կը նզովենք ամեն հերետի-
 „ կոսութիւնները և միանգամայն պատկերամարտ-
 „ ները. կը նզովենք նաև Փոտը, որ ընդդէմ կա-
 „ նոնաց՝ մէկէն ՚ի մէկ՝ աշխարհական սպասաւորու-
 „ թենէ՝ և զինուորական աստիճանէ, մէկ քանի
 „ հերձուածողաց օգնութեամբը՝ և Խդնատիոս Հայ-
 „ րապետին կենդանութեան ատեն՝ բռնի սպրե-
 „ ցաւ և յափշտակեց Կ. Պօլսի Աթոռը: Կընդու-
 „ նինք Նիկողայոս սուրբ Քահանայա պետին գու-
 „ մարած ժողովքը, որուն Դուն ալ սուրբ Հայրդ
 „ Ադրիանոս մեծ Քահանայապետ՝ հաւանեցար:
 „ Իսկ ինչ սր Առաքելական Աթոռոյդ իշխանու-
 „ թիւնը սահմանեց Յարգելի Խդնատիոս Հայրա-
 „ պետին և անոր հետ միաբան եղողներուն հա-
 „ մար՝ առանց նենդութեան կընդունինք և կը մե-
 „ ծարենք : . . .
 „ Եւ ինչպէս առաջ ըսինք՝ ԱՄԵՆ ԲԱՆԻ ՄԷՋ

„ Հետեւելով Առաքելական Աթոռոյն. և ՊԱՀԵԼՈՒ
 „ ԱՆՈՐ ԱՄԵՆ ՍՍՀՄԱՆԱԾՆԵՐԸ (sequentes in omnibus
 „ Apostolicam Sedem et observantes ejus omnia constituta)
 „ կը յուսանք արժանի ըլլալ մնալու այն մի հաղոր-
 „ դութեան մէջ զոր կը քարոզէ Առաքելական Աթո-
 „ ռը, յորում է ամբողջ և ճշմարիտ հաստատութիւն
 „ Քրիստոնէական կրօնի: Կը խոստանանք եւս չյիշել
 „ ՚ի կատարման սուրբ խորհրդոց անոնց անունները,
 „ որոնք զատուած են ՚ի հաղորդակցութենէ Կաթո-
 „ ղիկէ Եկեղեցւոյ, ԱՅՍ է՛ որոնք ԶԵՆ ՀԱՄԱՅՆՑԵՆ
 „ Առաքելական Աթոռոյն— (Լապէ. Հտ. Բ. Հա-
 „ ւաք. 988. Տպագր. Բարիսեան 1871.) :

Բերենք նաեւ եպիսկոպոսաց ստորագրութեան
 ձեւը — Արդ՝ այս դաւանութիւնը ըրի ես (Ա. Ա.)
 „ Եպիսկոպոս (Ա. Ա.) Եկեղեցւոյ, և իմ կամօքս
 „ ստորագրեցի, և ձեռամբ փոխանորդացդ՝ Պոնատ
 „ և Ստեփան Սրբազն Եպիսկոպոսաց և Մարինոս
 „ սարկաւազի սուրբ, Կաթողիկէ և Առաքելական
 „ Հռովմէական Եկեղեցւոյդ՝ մատուցի Քեզ՝ Ա. մե-
 „ ներջանիկ և Հրեշտակակրօն մեծ Քահանայապե-
 „ տիդ և Տիեղերական Հօրդ Ադրիանոսի — (Լա-
 „ պէ. Անդ.) :

Հասկցա՞ւ հիմակ Միասերեան Ա. Որմզդայ
 ձեւոյն վարդապետութիւնը և ութերորդ Տիեղե-
 րական ժողովոյն դաւանութիւնը: Թո՛ղ մասդրու-
 թեամբ կարդայ ասոնք, և անմիջապէս կը տեսնայ
 որ՝ իր երազած եկեղեց հետքոց գաղափարին հետ-
 քըն անդամ չի կայ և չի կրնար իսկ ըլլալ: Միա-

սերեան Աշխարհական իշխանի մը առանձնական խօսակցութեան մէկ հատուածոյն դաւանութեան կամ ժողովական վճռոյ կերպարանք տալով՝ կուզէր ընծայել զայն Ը. Տիեզերական ժողովոյն ինչպէստեսնք ՚ի Յօդ. Պ. և որ մեծն է Ս. Որմղդի, նաթէ՝ սոյն Ը. ժողովոյն ձեւէն տող մը միայն առնելով կը ջանայր ձեւայնել որ անիկա ալ իր մէջ բերած անվաւեր վկայութեան համաձայն է. բայց ահա յայտնի եղաւ սոյն յօդուածոյս մէջ, թէ ո՞րչափ տարբեր և հեռու է անոր լրւսաւոր վարդապետութիւնը իր բռնագրօսեալ իմաստակութենէն :

Հոս արժանի խորհրդածութեան կէտ մը կայ. այսինքն ինչ առթիւ և ինչ վախճանաւ որ՝ Ս. Որմղդ յամի 517. Ս. Ս.դրիանոս Բ. յամի 869. այս դաւանութեան ձեւերը Արեւելք խրկեցին. նովիմք նաեւ այժմու Մըրբաղան Քահանայապետն Պիոս Թ. ներկայ հերձուածոյն սկիզբը հաւարոյ դառնաւիւն մը ճամբեց. բայց պայծառ դարերուն մէջ յԱրեւելք գործադրուած այն պանծալի օրինակները՝ և ոչ դոյզն տպաւորութիւն կամ աղդեցութիւն ըրին այժմու բռու մի հերձելոց վրա. որոնցմէ մէկ անձ մը միայն գտնուեցաւ որ հուսկուրեմն ստորագրեց սոյն Պիոսեան ձեւը: Ս.յստէս ահա կը խոտորին Արեւելքի հարիւրաւոր հոյակապ Հարց օրինակէն անոնք՝ որ յետս ընդդէմն կը կարծեն հետեւող ըլլալ նախնեաց և պաշտպան արեւելք եան հնաւանդ սովորութեանց: Ա.յսչափս հարեւանցի յիշելով՝ յառաջ վարենք մեր խօսքը:

Ե.

Հա՛րկ է արդեօք խօսիլ նաեւ Բենեդիկտոս ԺՊ. Քահանայապետին՝ Խտալական Յունաց նկատմամք քանի մը ծիսական կանոնադրութիւն տալու ատեն՝ յայանելը, թէ անոնք չէին վերաբերիր միւս Յունաց, և ոչ վսաս մը կը բերէին անոնց օրինաւոր կերպով ունեցած սովորութեանցը: Արդեօք ասկէց զայն կուզէ հանել Միասերեան որ՝ Քահանայապետը չէր կը բարեկարգական օրէնքներ տալ. եթէ այս է իր միտքը՝ արդարեւ մեծ սխալման մէջ կը դտնուի: Մեր նախընթաց յօդուածներուն մէջ բաւական տեսնուեցաւ Հովովմայ Քահանայապետին նաեւ ՚ի բարեկարգականս Արեւելեան եկեղեցեաց վրա գործածած իշխանութիւնը. իսկ եթէ աւելին կուզէ, կը նայ տեսնել — Սուտիսս Գուշնեւն եղիսկողունն Արեւելոց ու Արեւադրեայ Վերջնունն Պատուիւնն մակագրով տարւոյս սկիզբը Գաղղիերէն լեզուաւելած բազմահմուտ տետրակին մէջ, որ և ետքէն Հայերէն ալ թարգմանուեցաւ:

Բայց պէտք է դիմնալ որ՝ Խտալիս բնակսղ Յոյնք շատ բան Լատին ծեսէ առած ըլլալով՝ մեծապէս կը տարբերէին Արեւելքի Յոյներէն, ուստի առանձնակի անոնց համար յայսմ մասին օրէնքներ տալու ատեն՝ Արեւելեան ծիսից նախանձախընդիր Քահանայապետը՝ որոշակի կը յայտ-

նէ իր միտքք՝ որ չուզեր զանոնք Արեւելքի Յու-
նաց վրա ալ տարածել։ Այս է ահա բոլոր եղածը։
Բայց զարմանալին այն է որ՝ Քահանայապետին այս
խնամու զգուշութիւնը՝ Միասերեան կուզէ իրեն
զէնք առնուլ ՚ի նուազութիւն իշխանութեան Քա-
հանայապետաց Հոռվմայ։

քննութիւնը այս կերպով վերջացնելով՝ անմիջապէս
դանդատի կելլէ մեղի դէմ, որպէս թէ Գեր. Գա-
զանձեանի խօսքին ուրիշ իմաստ մը տուած ըլլանք։
և որովհետեւ այս ամբաստանութեամբ կանցնի ՚ի
նիւթ Փլորենտեան ժողովոյ, ուստի մեր բաժանման
համեմատ զանիկա յաջորդ մասին կը թողունք։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

Ա.

Ի վախճան այս առաջին մասին կը յաւելունք
որ՝ Միասերեան ՚ի սկզբան բանից իւրոց իրեն նպա-
տակ առած էր նաեւ Պատրիարքական Ա. Առաջ էնթան-
սուրբելիքները։ և տե՛ս թէ ինչ կերպով կը վերջա-
ցընէ յայսմ մասին իր խօսքը վերոցիշեալ վկայու-
թիւններէն ետքը (որոնց արժէքը տեսանք մի առ-
մի)։ « Ասոնց ամենքը՝ կըսէ, Պատրիարքական իշ-
» խանութեան ապահովութիւններն էին՝ որոնք ՚ի
» սկզբան Տիեզերական ժողովոց միջնորդութեամբ,
» ետքն ալ նոյն ինքն Քահանայապետաց ինքնայոր-
» դոր հաճութեամբ կամ սպառելով կընդունուէր։
Ի՞նչ գեղեցիկ յարմարութիւն բնաբանին և հե-
տեւութեանն։

Բայց Վ. Ե. Ա. Միասերեան, Տիեզերական ժո-
ղովոյն միջնորդութիւնը առ ո՛ էր. և երբ Քահա-
նայապետք իրաւունք ունէին ինքնայորդորշնորհք-
ներ տալու, ստիպմունքն ի՞նչ էր, իրաւացի բա՞ն
մը, թէ անիրաւ բունութիւն մը։

Պատրիարքական Ա. Առաջ էնթան-
սուրբելիքներուն

Փլորենտեան ժողովքին խօսքը սկսելու ատեն,
Վեր. Միասերեան փոխանակ Գազանձեանին նոյն
ժողովքին վճռոյն նկատմամբ ըրած խանդարմունք-
ները պաշտպանելով կամ արդարացնելու (անշուշտ
չի վստահելով յաջողիլ), կելլէ յանկարծ կամբաս-
տանէ Ակնարկութեան հեղինակը, որպէս թէ ու-
զած ըլլայ ուրիշ իմաստ մը ընծայել՝ անոր Փլորեն-
տեան ժողովոյ կանոնին նկատմամբ դաշնակցու-
թիւն ըսելուն։

Ա. յաջախովս կը պաշտպանուի կամ կարդա-
րանայ արդեօք Վեր Գազանձեանին ըրած խան-
դարմունքներն։

Հոս պէտք է դիմնալ որ՝ Վեր. Գազանձեանի
գործածած բառը դաշնակունիւն չէ, այլ դաշնաբառ-
նիւն է, ան ալ ժողովունի և ժողովունի։ և յԱկնարկու-

թեան անոր բառը ճշդիւ մէջ բերուած է . միայն
մէկ տեղ մը (Եր. 31.) տպագրութեան վրիպակով
բանական էն եղած է , զոր և քանի մը օրինակաց
մէջ ուղղագրեր ենք . ասոր համար միայն՝ որ ճշգ-
դութեան դէմ չըլլայ : Բայց թէ այս փոփո-
խութիւնը վեր . Միասերեանի բանին աւելի եկեր
է , (գուցէ ասոր համար որ՝ կարող ըլլայ ետքէն
իր Քինկ ու աստուածաբանին խօսքը մէջ բերել) ,
մեղի համար նշանակութիւն մը չունի , ըստ որում
երկու բառն ալ յայս նիւթ խոտելի են :

Տեսնենք արդ՝ եղած ամբաստանութիւնը և
անոր արժէքը :

Վեր . Միասերեան իր յիշած քանի մը վկա-
յութիւններէն ետեւ՝ որոնց ինչպիսի բան ըլլալը
տեսանք լիովին առաջին մասին մէջ , կը յաւելու :

Ասոնք Պատրիարքական իշխանութեան ասպահովութիւններն
էին որոնք ՚ի սկզբան Տիեզերական ժողովոց միջնորդութեամբ ,
ետքն ալ նոյն ինքն Քահանայապետաց ինքնայորդոր հաճու-
թեամբ կամ ստիպուելովը կընդունուէր . ուստի և այսպիսի
ապահովութիւն դաշտ և ընդունելու գործողութիւնը՝ դաշ-
նականիւն անուանելը , հարկաւ հաւասար իշխանութիւն չէր
ենթադրեր ապահովութիւն տուողներուն և ընդունողներուն
մէջ , ինչպէս Ակնարկութեան հեղինակը ուզեր է այնպիսի ի-
մաստ մը ընծայել Գեր . Սուքիս Արքեպիսկոպոսին Փլորենտ-
եան ժողովոյն կանոնին նկատմամբ դաշնակցութիւն ըսելուն:

Կը պատասխանենք .

Ա. Սխալ է այն՝ թէ Տիեզերական ժողովքները
և Քահանայապետք ապահովութիւններ տուեր են
Պատրիարքական իշխանութեան . այլ Քահանայի և

ժողովքները ինչ որ բարի և եկեղեցւոյ օդ տակալը
սովորութիւն տեսեր են , յօրէնս կարգեր են . և
կամ հարկաւոր ու պատշաճ եղած տեղերը նորեր
սահմաներ են . և կամ ըստ ժամանակին ամփո-
փեր և ընդարձակեր , աւելցուցեր և պակսեցու-
ցեր են ղայնս :

Բ. Սխալ է Տիեզերական ժողովքները Պապե-
րէն զատելը . վասն զի Տիեզերական ժողովք առանց
հաստատութեան Սրբ , Պապից բան մնալ չեն ըրած .
նա թէ՝ առանց այն հաստատութեան Սրբ . Պապից
և ոչ իսկ Տիեզերական ժողովք կընային անուա-
նիլ . Այն գարու եկեղեցական պատմութիւնը՝
յայտնաբարբառ կը վկայէ ասոր : Ասոնք հարեւան-
ցի նշանակելով , կը պատասխանենք՝

Գ. Ակնարկութեան չեղինակը չէր ուզեր և
այժմ իսկ չուզեր ուրիշ իմաստ մը ընծայել Գեր .
Պաղանճեանին բառերուն , անոնց նշանակածէն ա-
ւելի : Եւ Վեր . Միասերեան որչափ ձգձել և
որչափ ծամծմել ուզէ վերջնական Տետրակին բա-
ռերուն , ընդ որս և դաշտութիւն բաւին զօրութիւ-
նը . զանոնք իրմէն շատ աւելի ճիշդ իմացեր է
Ակնարկութեան չեղինակը Խնքն ալ եթէ ուզէ
անկեղծութեամբ խօսիլ՝ անշուշտ պիտոր վկայէ
այս մեր ըսածին : Մանաւանդ թէ մեղի կերեւայ
որ՝ ինքը և ոչ իսկ մտադրութեամբ կարդացեր է
զայն . ապա թէ ոչ անշուշտ տեսած ըլլալով հոն
(Եր. 9.) Գիւռարանիւն բառը՝ primatus բառին դի-
մացը դրուած , զոնէ կը պատկառէր ըսելու , թէ

Ակնարկութեան չեղինակը խարդախելով Գլուխութու-
նէն թարդմաներ է : Նաեւ սոյն խօսքին մէջ ալ
պիտոր տեսնենք այս մեր ըստածին հաստատութիւնը .
թող ուրիշ ասոր նման բազմաթիւ անճշդութիւն-
ներ՝ զորոնք զանց կը լինենք :

Դ. Թէ Գեր . Գաղանճեան զՊապը և զՊատ-
րիարքները հաստատութեան կամ անհաստատ կը ճանչնայ յիշ-
խանութեան , մեզի փոյթ չէ . վասն զի մեր հա-
ւատքը անոր հաւատոց վրա չէ հաստատեալ , և ոչ
անորմէ պիտոր սորվինք զայն : Դարձեալ մենք ա-
սանկ խօսք տեղ մը մեր Ակնարկութեան մէջ չենք
ըրած : Բայց այս ստոյդ է ո՞ր՝ Գեր . Գաղանճեան
դաւանք և ընդունեց խօսք չըներ բնաւ . անոր ըստ-
ները մէջ տեղ են . բայց ընթերցողաց դիւրու-
թիւն ըլլալու համար կը բերենք հոս վարը (1) : Կը

(1) « Բաւական է յառաջ բերել Փլորենտեան ժողովքին
» սիւնհոգոսական մեծահուչակ դաշնադրութիւնը՝ որով փո-
» փոխակի Պապը և Արեւելեան Պատրիարքունք մէկմէկու հետ
» կապուեցան Արեւմտեան ընդհանուր ժողովքի մը մէջ , Արե-
» ւելեան Պատրիարքունք Պապին ընդհանուր եկեղեցւոյն վրա
» ԴիեսլիՈՐՈՒԹԻՒՆԸ ճանչնալով և փոխադարձ Պապերն ալ
» Արեւելեան պատրիարքական աթոռոց սեփական իրաւունք-
» ները անարատ և անբռնաբարելի ըլլալը ճանչնալով : Եւ
» այս ոչ թէ Պապերուն կողմանէ զիշունիքն մը ըլլալով , այլ
» ընդհանուր ժողովոց գործքերուն և եկեղեցական կանոնաց
» մէջ այսպէս աւանդուած ըլլալուն համար . ինչպէս նոյն
» Փլորենտեան ժողովը կը բացատրէ յետագայ խօսքերով .
» ըստ այնմ տարագու՞ որպէս աւանդեալ է 'ի գործս Տիեզե-
» բական ժողովոց և 'ի սուրբ կանոնս » : Եւ այս տարագը և

տեսնե՛ս՝ Վեր . Միասերեան , անիկա և ոչ իսկ
չիշունիքն մը կը լուսավետաց կողմա-
նէ . այլ ընդհանուր ժողովոց գործքերուն և եկե-
ղեցական կանոնաց մէջ այնպէս աւանդուած ըլլա-
լուն համար Քահանայապետք կը ճանչնան որ Արե-
ւելեան Պատրիարքաց իրաւունքները անարատ և
անբռնաբարելի են կը պէտք Գեր . Պաղանճեան իր այս խօսքը եր . 15. տես վա-
րը (1) : Հասկցա՞ր աշէկ մը որ ըստ Գեր . Պաղան-
ճեանին Պատրիարքական իշխանութեան նկատմամբ
ու լ ընդունել չըլլար եղեր , ըստ որում ատիկա
Պատրիարքական իրաւաբանութեան կը վերաբերի
եղեր և հետեւաբար անզօր յարեւելս : Վերջնա-
կան տետրակին խօսքերը ասոնք են , բայց թէ հի-
մակ անոր հեղինակը կարծիքը փոխեր է՝ ատոր
մենք ըսելիք մը չունինք . որովհետեւ նոր բան չէ
որ ուղղափառ ճշմարտութենէ շեղելէն ետեւ՝ մէ-
կը՝ մի և նոյն նիւթի վրա փոփոխ կարծիք յայտնէ :
Ասիկա Վեր . Միասերեան ալ կը նէ այս տետրա-
կին մէջ և նոյն իսկ այս ուղղունիքն բառին իմաս-

» եւս բացատրէ ըսելով . « Այսինքն անարատ պահուելով բո-
» լոր արտօնութիւնները և իրաւունքները Արեւելեան Պատ-
» րիարքաց » :

(1) « Ծէվերսուրուս կոնդակը ենթադրելով իսկ՝ որ փո-
» խանակ Արեւելեան եկեղեցւոյն իրաւունքները սեղմելու՝ ա-
» ւելի եւս ընդարձակէր զանոնք նորանոր արտօնութիւններով ,
» 'ի վերաց այսր ամենայնի նոյն եղանակաւ պիտի մերժուէր
» Արեւելեան եկեղեցիէն :

աին վրայօք, զո՞ւ քիչ մէ վերջը պիտոր ահաս-
նենք :

Արդ՝ Գեր. Գաղանճեան Փլորենտեան վճիռը
գոտիուի գոտարաց բանաբաննեան կ'անուանէ, իսկ Վեր.
Միասերեան կըսէ որ Քահանայապետաց կողմանէ
ապահովութիւն ուշ և (Պատրիարքաց) կողմանէ
ընդունէլու դործողութիւնն է անոր բանահանքն ան-
ուանածը. բայց Գեր. Գաղանճեան անանկ բան
չընդունիր, ինչպէս աեսանք: Ինչ և իցէ թողունք
զասոնք իրարու հետ վիճելու և իրարու խօսք հաս-
կըցնելու. և մենք առաջ անցնինք :

Ե. Փլորենտեան ժողովյն Հռովմայ Քահանա-
յապետին վրայօք ըսածը՝ ասկից 32 ամիս առաջ
նոյն իսկ ըստ Միասերեանի՝ բոլոր իր ընկերաց հետ՝
վճի՛ր կանուանէր. ըստ որում անոնց հետ մեկտեղ
ինքն ալ կընդունէր և կը դաւանէր որ՝ անիկա էր
— Փլորենտեան ժողովյն՝ Հռովմայ (Քահանայապե-
տին) գլխաւորութեան վրայ հաւատոյ վճի՛ր (le dé-
cret dogmatique du concile de Florence sur la primauté
du Pontife Romain) (Թուղթ Քահանայից առ Սուաքե-
լական նուիրակն Բլուիմ): 32 ամիս վերջը ի՞նչ
պատճառաւ արդեօք դէcret, decretum բառը իր նը-
շանակութիւնը փոխեր է. և փոխանակ այն ատեն-
ուան պէս գիտ նշանակելու եղեր է գոտիուի և գո-
տիուրաց բանահանքն ըստ Գեր. Գաղանճեանի. և
բանահանքն ըստ Վեր. Միասերեանի: Բա՞ռը արդեօք
իր նշանակութիւնը, թէ դործածողները իրենց
ըմբռմունքը և միտքը փոխեր են, կամ թէ Փլո-

րենտեան ժողովյն որոշմունքը իր բուն զօրութիւ-
նը և իմաստը կ'արանցնելով, նոր կերպարա՞նք մը
առեր է: Կրնայ ըլլալ նաեւ որ՝ Վեր. Միասեր-
եանի Լատիներէն բառից և տեղեկութենէն ալ
առաջ եկած բլայ, որով (decreto) բառին Հայերէն
հարաշատ թարգմանութիւնը բանահանքն է կամ
բանահանքն գտեր է:

Զ. Լսենք հիմակ բանահանքն բառին ուրիշ
մէկ իմաստն ալ:

Վեր. Միասերեան եր. 8. ըսածները, երբոր
նոյն տետրակին 13. երեսը կը համի, բոլորովին
մտքէն ելած ըլլալով. Գլինկ աստուածաբանին
խօսքը յիշելէն ետքը, որ էկէնցոյ էռուլուն ան-
ուանակութեանց վրա կը խօսի, կը յաւելու թէ
Ակնարկութեան հեղինակը ըստ բանից Գլինկայ
հասկնալու է եղեր Գեր. Գաղանճեանին դաշնակ-
ցութիւն ըսելուն բուն աստածաբանէն էմարք: Փլո-
լինկին խօսքն այս է — Եկեղեցական վարչութիւնը
... Գոտիուրաց եւայլն կառավարութեանց պէս կեր-
պարաները, միտքերը աւետարանին փրկաւէտ յաւե-
տենական շաւղէն կը հեռացնէ: Եւ — Թէ որ ե-
կեղեցական կառավարութիւնը մասնաւոր անուան
մը տակ նշանակել օրէն ըլլայ, կրնայ բանահանքն
անունը տրուիլ —:

Բայց՝ Վեր. Միասերեան, Գլինկին խօսքը
Գաղանճեանին ըսածին հետ վերաբերութիւն չունի.
վասն զի մէկը (Պաղանճեան) Փլորենտեան վճիռը
կանուանէ բանահանքն, և միւսը (Գլինկ) եկե-

զեցւոյ կառավարութեան յորջօրջմանց վրա խօսելով, անոր բանական անուն տալը աւելի յարմար կը դատի: Ի՞նչ գեղեցիկ նմանութիւն. Դաշտադրութիւն և բանական նմանաձայն չեն, ասիկա բաւական է Աեր. Միասերեանի համար. բայց թէ զանաք գործածոլները ուրիշ նիւթի վրա առեր են եղեր նոյն բառերը, վնաս մը չունի: Աւելի զուարծալին կայ. Աեր. Միասերեան ալ նոյն բառը պահպանին բառ և ընդունելու համար կիմանայ, ինչպէս քիչ մը առաջ տեսանք:

Արդ՝ Աեր. Միասերեան և իր առջ աստուածաբանը Քլինկ աւելի յարմար կը դատին բանական անունը տալ եկեղեցական կառավարութեան. (այսինքն 'ի դիպուածի' յորում օրէն ըլլայ զայն անուան մը տակ նշանակել). պատճառն ալ ըստ Քլինկայ է այս Ռուովնետեւ (եկեղեցական կառավարութիւնը) Գունեա վրա հիմնեալ է և առ (միութեան) վրա կը կենայ:

Ուրեմն եկեղեցական կառավարութիւնը գունեա վրա հիմնեալ և միութեան վրա կեցած ըլլալուն համար, աւելի յարմար կը դատուի բանական անունը:

Եւ մասնեան վրա հիմնեալ ըլլալուն համար, անոր մատղերական անուն տալը՝ միտքերը աւետարանին փրկառէտ յաւիտենական շաւղէն կը հեռացնէ: Իրաց տար ասանկ շաղփաղփութիւնը: Եթէ իրօք այս խօսքերը Քլինկին են, արդարեւ խօսք չունինք անոր աստուածաբան ըլլալուն վրա:

Քլինկ այս գեղեցիկ պատճառաբանութենէն ետեւ՝ կաւելցնէ — Եկեղեցւոյ մէջ մատղերական չկայ բայց եթէ Քրիստոսի: Եւ Վեր. Միասերեան մերուշադրութիւնը դրգելու մտքով ժամանական բառ երկաթաղիր ըլլեր է: Բայց մենք բաւական կը համարինք նոտր դրով նշանակել որ այդ նոինութանը, (Թէ և անոր հեղինակը ըլլայ Միասերեան մը, Պազանճեան մը, կամ թէ նոյն ինքն ազատուածաբանն Քլինկ, և կամ ուրիշ ով որ կուղէ ըլլայ) այդ նոինութանը շատոնց դարադրութեան, յանձն Անտոնի Տէտոմինիս, որ կըսէր թէ — չիք յեկեղեցւոջ գլուխ զերագոյն և ժամանական բաց ՚ի Քրիստոսի մատղերական յեկեղեցւոջ: Աեր. Միասերեան աղատ է ժողովելու որչափ դատապարտեալ նախագասութիւններ որ կան. սակայն պէտք է զիտնայ որ՝ ասով ուրիշ բան չի ցուցներ՝ եթէ ոչ այս միայն որ՝ ինքն ուղղափառ վարդապետութեան ուղիղ ճանապարհէն շեղեալ՝ կը յածի առխարիսափ յատուերս մոլորութեանց:

Բ.

Փլորենտեան ժողովքին վճռոյն դալով, Միասերեան կը զգուշանայ զայն ամբողջ մէջ բերել, ինչպէս որ մենք բերած էինք. ասիկա իր բարին չի գար: Ինքը բաւական կը համարի անոր քանի մը հատուածները յիշել. բայց խառն ՚ի խուռն, ետեւ

առաջ . որով կաշող ըլլայ անոր այլ և այլ պարս
բերութեանցը՝ այլ և այլ իմաստ ընծայել , հակա-
ռակ հարազատ իմացուածոյ վճռոյն :

Մենք նախ ժողովենք ՚ի մի անոր այսր անդք
սփռած հատուածները . և ապա տեսնենք ըրած
խանգարմունքները ըստ բառից կամ ըստ շա-
րադրութեան և մանաւանդ ըստ իմաստից : Միա-
սերեանի հատուածները ՚ի մի դումարելով՝ այս
ձեւը կելլէ ճշդիւ իր բառերովը :

Սուրբ Աթոռն Առաքելական և Հայրապետն Հռովմէ-
» ական առաջնութիւն ունին ընդ աշխարհ ամենայն . (1) ըստ
» այնմ տարազու՝ որ բովանդակի եթէ ՚ի գործս Տիեզերական
» ժողովոց և եթէ ՚ի սուրբ կանոնս » :

« Սահմանեմք նորոգելով եւս և զաւանդեալն ՚ի կանոնս
» կարդ այլոց Յարդել Պատրիարքաց , որպէս զի Պատրիարքն
» Կ. Պօլոյ Երկրորդ եղիցի , եւայլն եւայլն (2) : Անարատ մը-
» նալով իմա՛ արտօնութեանցն ամենայնի և իրաւանց նոցա»:

(1) Այս տեղ եւայլն մը չի դնելէն այնպէս կը թուի՝ որ
խօսքը լմացած ըլլայ , բայց իր Եր. 11. և մանաւանդ Եր. 15.
ըստներէն յայտնի է որ ուրիշ հատուած մնալ կայ որ է
—ըստ այն բարագու — եւայլն , զոր կը դրինք վերը :

(2) Այս եւայլն եւայլները անշուշտ ետքը յիշուած — զի՞նէ
Սըմազն Հայրապետին Հասկայ իսութեան պիտոր նշանակեն ,
գուցէ ուրիշ խօսքեր ալ կը ծածկեն : Հարկաւ ետքէն կիմա-
նանք: Դարձեալ՝ Պատրիարքաց մասը մէյ մը ամենէն առաջ յի-
շելէն ետեւ , վերջը ուրիշ պարբերութիւն մը մէջ բերելով՝ կը
յաւելու — ճանաւանդ նոյնը հոյ ու իւ իւնէ՝ «Պատրիարքն Կ.
Պօլոյ Երկրորդ եղիցի — եւայլն . արդեօք վճիռը Երկո՞ւ ան-
դամ կրկնած է՝ որ՝ Կ. Պօլոյ Աթոռը Երկրորդ ըլլայ . բայց
վճռոյն մէջ կրկնութիւն չիկոյ :

Վեր . Միասերեանի առաջին դործը պիտոր
ըլլար անշուշտ՝ պաշտոպանել զԳեր . Պազանճեանը
Տիեզերական ժողովքի մը վճիռը խանգարած , այ-
լայլած , յապաւած և աւելցուցած ըլլալու յանցան-
քէն . բայց բերած հատուածները յառաջին իսկ
ակնարկութեան կը ցուցնեն որ՝ իրօք դործուած է
նոյն յանցանքը ՚ի Պազանճեանէ . Բաւական է որ
մէկը Սուրբութեան և Միասերէն յեւեւը իրարու հետ բաղ-
դատէ , առաջնոյն խօսքերը ամբողջ բերած եմ (Եր.
66. ՚ի ծան .) Երկրորդինը՝ քիչ մը առաջ յիշեցի :

Միասերեան վճռոյն առաջին մասը Առաջնու-
թեան կը վերաբերէ . և անոք կը կցէ ըստ այն բարագու՝
խօսքը (Եր. 45.) : Ետեւէն Երկրորդ մաս մնալ կը
դնէ ՚ի նորոգութիւն կորդի Պատրիարքաց՝ յաւել-
լով այն հատուածն ալ — անարադ հուցէ — եւայլն :

Գեր . Պազանճեան Երկուց մասանց զանազա-
նութիւնը չի ճանչնար . այլ թէ Փլորենտեան ռուսա-
րութեանք գոփութէ Պատրի և Արեւելեան Պատրիար-
քունք մէկմէկու հետ կապուեր են՝ գոփութէն իւ-
րարու իշխանութիւն ճանչնալով ըստ այն բարագու եւ-
այլն . որ Երկու մասանց վրա ալ միօրինակ կը տա-
րածէ :

Միասերեանի տետրակին մէջ՝ Առաջնութիւն և
Երկրորդ կայ :

Վերջնական պատասխանւոյն մէջ՝ Պապ և Պատ-
րիարքունք :

Հոս գրուած է — անարադ հուցէ իմ՝ արտօնութեանցն
ամենայնի և իւստանց նոցա — :

Հան , այսինքն՝ անարտա պահութելով ի՞նչը է բառանձնեցը և
որոնումնեաներ Արեւելքուն Պատրիարքուաց :

Դեռ շատ բաներ , որոնք խիստ յայտնի ըլլա-
լով զանց կընենք յիշելու , և կը թօղունք ընթեր-
ցողաց տեսութեանը :

Գ.

Վեր . Միասերեան ինքն ալ համոզուած ըլ-
լալով՝ որ անհնար որբել զվերջնական պատասխանը
իրեն վրա դրուած ծանր յանցանքէն , որ է Տիե-
զերական ժողովոյ մը մեծահոչակ վճիռը խանգա-
րել , այլայլել , յապաւել և յաւելուլ : Անշուշտնոյն
յանցանաց խոշոր գերանը ծածկելու համար ելեր է
Ակնարկութեան հեղինակին . աշքը շիւղ որոնելու :
Բայց ենթագրելով որ՝ օրինակ իմն՝ իրօք գանայ
մէկ շիւղ մը , արդեօք պիտոր կընայ անոր ստուե-
րին տակը ծածկել վէրջնան պատասխան և ունի ճը իսու-
տետրակիներուն հեղինակաց աչքը դանուած խար-
դախութեանց սոսկալի գերանը :

Բայց ի՞նչ է արդեօք Միասերեանի Ակնար-
կութեան մէջ դտած այն մեծ յանցանքը . լսեցէք
ընթերցողք : ԱԵր հակառակութեան (կըսէ ինքը) , գուհ գէ-
շա առաջնունիւն (primatus) բառաւ ի՞րուելու դլաւորու-
թեան էր գոփէ : Խորրուելու մի՛ շտապեր . Պրի-
մատու գառը գլուխունիւն թարգմանելը՝ խարդա-
խել է Վեր . Միասերեան : Արդարեւ խիստ յա-
ւալի բան է 'ի կըից յուղիլը . բայց ո՞վ կընար երե-

ւակայել այս աստիճան յուղմունիք մը , մինչեւ քիչ
մը յառաջ գործածած բառերն և դաղափարներն
անգամ շփոթել և չի տեսնալ . մենք իրեն միտքը
բերենք , գուցէ արթննայ այս իր թմբրութենէն :

Ա. Վեր . Միասերեան թէ Քահանայ եղած ատենը
և թէ ետքը յամի 1869 Յուլիս 3 Պօլիս գումարուած
միւնհսդուսին ատեն Ուրբանեան դաւանութիւնը
տուեր է : Արդ՝ նոյն դաւանութեան մէջ Փլորենտ
եան վճռոյն (primatus) բառը Պիտառունիւն թարգմանա-
ուած ըլլալով ալ , ինքը հանդարտ խղճիւ և աներ-
կիւղ 'ի կասկածանաց խարդախութեան նոյնը կա-
տարեր էր և կատարեց առաջի ահաւոր խորհր-
դոյն և կը յուսանք որ՝ գոնէ մէկը թէ որ չէ՝ մէ-
կ սլ անդաման մտադրութիւն ըրած պիտոր ըլլայ :

Բ. Յամի 1870. Հոկտ. 14 /26 իրենց առ. Վեր.
Առաքելական նուիրակն Բլուիմ դրած թղթոյն
մէջ՝ յորում ինքն Միասերեան ալ ստորագրած է ,
այսպէս գրուած է . — Տանտերապէս Փլորենտէան ժողովը
Հայոց, Գևոյի Ուրիթեան գրահատուց վէիս հնդունիւն և
հետագանիւն . . . որ Խալկերէնի մէջ այսպէս է . il de-
creto dogmatico del Romano primate , և Պաղպիերէ-
նի մէջ le décret dogmatique du concile de Florence
sur la primauté du Pontife Romain : Այս թարգմա-
նութիւնները մերը չեն այլ ձերը և տպագրու-
թիւնն ալ ձեր կողմէն եղած է . և ամենուն ներ-
քեւ Վեր . Միասերեանի ստորագրութիւնը կայ .
կը յուսանք որ այսափս բաւական է իրեն միտքը
բերելու յիշեալ գործը :

Պ. Թողունք մէջ բերել նոյն լատին բառը
չէնդունիւն թարգմանելու ընդհանուր սովորու-
թիւնը , որ բաւական հին է , և զոր՝ թող զայլո՝
դործածեր են և կը դործածեն ցարդ Հայկաբա-
նութեան մէջ առաջին համբաւ ունեցող Միւ-
թարեանք 'ի Ահենետիկ և 'ի Ախեննա :

Պ. Խոկ առաջուննեան թարգմանելը զայն , այն-
չափ առ է որ՝ Գեր . Գաղանճեան տարւայս սկիզբը
իր Վեշնուկն պատասխանը դրելու ատեն՝ գեռնոյն
բառին ծանօթ չէր . ուստի և Խտալերենի մէջ դոր-
ծածած (primate) բառը , Հայերէն՝ ուրիշներուն պէս
ան ալ Գլուխուննեան կը թարգմանէ . այսպէս (յեր. 9.)
— Պապին ընդհանուր եկեղեցւոյ վրայ Գլուխու-
նիւն :

Ե. Վեր . Միասերեան նոյն խոկ այս տետրա-
կին մէջ թէպէտ (յեր. 8. և 15) primatus բառը
առաջուննեան թարգմաներ է . բայց (յեր. 10. էջ. 7.)
յիշեալ Լատին բառին գիմայը անանի բառ մը կը
դնէ որ աւելի հիւստրունիւն , քանի թէ առաջուննեան
հմաստ կուտայ : Յորում մինչ Լատիներէնն է ծե-
primatu Papae, ինքն Հայերէն այսպէս կը դարձնէ
— Պապին իշխանութեան վրայ — թէպէտ և էիխուննեանը
ճիշդ թարգմանութեան ըրլայ primatus բառին , բայց իմաս-
տը հեռու չէ անոր նշանակութենէն : Խոկ ան վո-
ք որ անճշտութիւնը անշուշտ կը ներուի անոր Լա-
տիներէն լեզուի մէջ ունեցոծ լաւ աեղեկութեան-
ցը : Բայց թէ ինչո՞ւ հսկ իշխանութեան թարգմաներ է
և ոչ առաջուննեան . մոքէն ելած էր տրդեօք այս իր

գեղեցիկ բառը , կամ թէ նոյն ձեւին հետեւեալ
խօսքերուն առաջուննեան չէ կրցեր պատշաճեցուցեր .
չէնդունիւն թարգմանելն ալ բանին չի գար . ուս-
տի մէջ տեղ գլորեր է իշխանութեան բառը . ո՞վ պի-
տոր մտագրութիւն ընէ ըսելով իր մոքին մէջ .
Հասկցաւ հիմո վեր . Միասերեան թէ ի՞նչ է եղեւ
այս մեծ իշխանութեանը , զոր կը յանդդնի անպատ-
կառ մեզի վերագրելու : Կայ արդեօք աւելի յար-
մար տեղ մը կրկնելու աւետարանին խօսքը — հա՛ն
նախ զգերանդ յականէ քումիէ և ապա հայեսցիւ
հանել զգիւղ յականէ եղբօր . քո — :

Դ

Տեսնենք հիմակ Միասերեան յեռ , զոր կուզէ
ինքը Փլորենտեան ժողովոյն ընծայել :

Վերը (եր. 72.) յիշեցինք զայն , որուն հատ-
ուտծները թէեւ լսու մեծի մասին մեր թարգմա-
նութենէն ժողովեր է , սակայն այլայլութեամբ
բառից , և խանդամամբ իմաստից :

Ա. Pontifex բառը հայրապետ ըրեր է , բայց
դործածութիւնը Քահանայապետ է , խոկ Հայրապետ
պatriarca բառին կը համապատասխանէ :

Բ. primatus բառը առաջուննեան թարգմանելը
նուիրական լեզուի մէջ բոլորովին նոր է , և ա-
սանի առթիւ ու պարագայի մը ծագումն առնելուն
համար՝ մեծապէս կատկածելի . Անոր սեփականեալ

(technique) բառը գլուխութեան ըլլալով։ Տես եւս նաև
խընթաց յօդուածոյն մէջ դրուածները։

Պ. նոյն առջի պարբերութեան մէջ՝ տերեւ
(ունել) բայը, որ Լատիներէն աներեւայն ըլլալով,
Հայերէնը պարզութեան համար ուժաւու եղեր է,
չի յոդնակի թարդմանուիր՝ առնի, այլ եղակի առնի.
ինչպէս մինչեւ հիմա ամենքն ալ այնպէս թարդ-
մաներ և այնպէս եղակի իմացեր են. ըստ որում
Առաքելական Սթոռոյն և Անոր վրայ նստող Քա-
հանայապետին գլուխութեան ուրոյն ուրոյն չէ. այլ
մի միայն և մի և նոյն՝ աւանդեալ ՚ի Քըլիստոսէ
Յիսուսէ յանձն երանելոյն Պետրոսի նմա և յա-
ջորդաց նորա Հռովմէական Քահանայապետաց։
Յայտ է նաև վճռոյն շարունակութենէն որ եղա-
կի է մինչեւ վերջը. ինչպէս ինքնին յայտնի կը
աւենայ նոյն վճռոյն Քահանայապետին վրայ ե-
ղած մասը ամբողջ ընթերցողը. (աես զինի)։

Պ. Նոյն ձեւոյն Պատրիարքաց վրա եղած
խօսքին մէջ —Պատրիարքն Կ. Պօլոյ երկրորդ-
եւէքտ — գրուեր է, բայց մենք տպագրութեան
վրիպակ համարելով ուղղագրեցինք և գրինք եւէն։

Ե. Անորու բառը որչափ որ խոշոր դրուլ մէջ
ուղէ բերել, անիկա հոս տեղի չունի։ Եթէ սա-
νիս բառին աւելի իմն նշանակութիւն տալ ուղուէր,
անշնչա Լատիներէնի մէջ բառ չէր պակսիր, կըր-
նային գնել intactus, immunis ածականները, որ ա-
գնեա, ուրեւ կը նշանակեն. և կամ եթէ առբարի նշա-
նակութիւնը տալ ուղէնի կընային դնել immacula-

tus, illibatus : Քանի որ ասանկ չեն ըրած Փլորեն-
տեան Հարք, մենք ոչ Լատիներէնը այնչափ աղ-
քատ ենթադրելով՝ որ չի կրնայ մէկ ածական մը
յաւելուլ, և ոչ մեր Հայկական բառերը այնչափ
տկար, որ ուրիշ լեզուի բառ մը՝ երկու բառերով
բացատրելու պէտք ունենայ, մէկ բառին գիմայը
մէկ նոյնազօր բառ դրինք՝ և կը յուսանք որ վրի-
պակ բան մը չենք ըրած . որովհետեւ մեզմէ շատ
առաջ՝ սոյն սիւնհոգոսական վճռոյն թէ առաջին
թարգմանը, և թէ Հայրն Միքայէլ Զամշեան (Հտ.
Գ. Եր. 481.) կարեւոր չեն տեսեր այս յաւելուա-
ծը, որոնց առաջինը պահելով և երկրորդը պահելով
կը թարգմանեն՝ առանց աւելցնելու Միասերեանին
երկաթադիր ԱնԱՐԱԾ բառը :

Զ. Նոյն պարբերութեան վերջին մասը՝ չէ գըր-
ուած ըստ այն բարակու եւայլն . (Juxta eum modum
qui). այլ որպէս նոեւ ՚ի հորժու Տէնէրական ժողովու եւայլն.
(quemadmodum etiam in gestis). ինչպէս յայտնի է
՚ի բնագրէն, որ և նոյն կերպով մէջ բերուած է յա-
մենայն երեւելի հաւաքմանո յայլ և այլ լեզուս,
յամենայն ականաւոր հեղինակաց, և մանաւանդ ՚ի
Վատիկանեան ժողովոյ (Նիստ. Պ. Գ. Գ.).

Ասոնք ըստ բառից և ըստ շարագրութեան այ-
լայլութիւնք են, որք մեծապէս կը մնասեն նաեւ
իմաստից՝ այլայլելով անոնց պարզութիւնը և նշա-
նակածները :

Իմաստից այլայլութիւնքն ու խանդարմունքը խիստ ծանր են : Խնչես առաջ ալ ըսեր ենք , թէ Գեր . Գաղանճեանն և թէ Վեր . Միասերեան չեն համարձակիր նոյն Փլորենտեան ժողովյն այս նիւթիս վրա տուած վճիռը ամեւող մէջ բերել , ասիկա իքենց բանին չի գար . վասն դի կըստիպուին ընդունիլ զայն , յորմէ կուզեն խուսափիլ : Աւտի կը ջանան վեր ՚ի վայր ընել , խանդարել , յապաւել և յաւելուլ , որ գուցէ կարող ըլլան պըշտորութեան մէջ բան մը որսալ : Թէ այս ընթացքը որուն կը պատկանի , ցուցեր ենք Զ . Տիեզերական ժողովյն խօսքերովը՝ յԱկնարկութեան (եր . 32) : Սրդ :

Ա . Միասերեան՝ Փլորենտեան վճռոյն Հըռովմայ Քահանայապետին գլխաւորութեան վրա եղած մասը բոլորովին վերջնելով , տեղը տուիտակէ և հոփարայ բաշտուահան յեւ մը չի զետեղեր , ինչպէս որ ըրած էր Գեր . Գաղանճեան իր . վերջնական տետրակին մէջ (եր . 8 . 9.) . նա թէ կը խոստովանի որ նոյն վերը Եկեղեցոյ Թունեան հոգ որոնելով իւսեր եր Հռովմէական Աթոռոյն և անոր առաջնորդեան (այսինքն գլխաւորութեան) հր : Բայց մե՛զք որ՝ ինքը նոյն գլխաւորութեան վրա ժողովյն խօսածէն՝ միայն տող ու կէս մէջ կը բերէ , և ետեւէն եւայն մեալ չի գերավագ՝ այնպէս կուզէ իմացնել որ՝ այնչափ

միայն է նոյն վճռոյն խօսածը . Որչափ խարդախութիւն և ինչ անպատկառ համարձակութիւն . Բ . Միասերեան Հռովմայ Քահանայապետին գլխաւորութեան վրայ Փլորենտեան վճռոյն խօսածէն միայն տող ու կէս մէջ բերելով , ետեւէն կաւելցնէ — մանաւանդ թէ նոյնը հոս ալ կը կըկնէ . Պարբերութեան կ . Պօլսոյ Երեւուր եւեցէ , կըսէ , չնէ Սրբաւ Հայրապետին Հռովմայ — յորմէ կուզէ ասանկ իմաստ մը հանել — Հայրապետին Հռովմային ուղղական թիւ անէ ընդ աշխարհ ամենայն — և — Պարբերութեան կ . Պօլսոյ Երեւուր եւեցէ չնէ Սրբաւ Հայրապետին Հռովմայ — Պարվ Փլորենտեան ժողովը ուրիշ բան մը ըրած ըլլար , բայց եթէ հրատարակել որ՝ Հռովմայ Աթոռը և Քահանայապետը Առաջն է յաշխարհի . և վճռել որ՝ կ . Պօլսի Աթոռը և Պատրիարքը Երեւուր ըլլայ՝ Անորմէ ետքը : Իր բառից զօրութիւնը ճշդիւ այսպէս կը հնչէ , թէ և ինքը ըստ սովորութեան՝ ուզերէ մթին և շփոթ իմն եղանակաւ առագաստել զայն :

Ո՛հ , ո՞րչափ հեռու է այս մոլար բացատրութիւնը՝ Փլորենտեան վճռոյն հարազատ իմացուածէն : Թէպէտ Ակնարկութեան մէջ (եր . 23) բերած ենք նոյնը . բայց ՚ի դէպ կը դատինք հոս ալ դնել՝ որպէս զի ընթերցողք հաւաստեաւ իմանան մեր խօսքին ստուգութիւնը , բաւական է միայն մտադրութեամբ ընթեռնուուլ զայն , և անդէն և անդ կը տեսնուի՝ թէ Միասերեանի բանդադուշանց ստուերն անդամ չի կայ անոր մէջ :

Ահա Փլորենտեան վճռոյն խօսքերը :

— Սահմանեմք դարձեալ՝ թէ Ա. Աթոռն Ա.
» ուաքելական և Հռովմէական Քահանայապեան
» ունի զղվաւորութիւն ընդ աշխարհ համորէն,
» թէ նոյն Քահանայապեան Հռովմայ է Յաջորդ
» Երանելոյն Պետրոսի իշխանին Առաքելոց և փո-
» խանորդ Քրիստոսի և ՀԱՅՈՐէն եկեղեցին Դիմիկ
» (totiusque Ecclesiæ caput), և տմենայն Քրիստո-
» նէից Հայր և Վարդապետ, և ՆՄՅ. յանձն Ե-
» րանելոյն Պետրոսի ԱԿԱՆԴԵՍԱԼ է ի ՏԵՂԹՆԵՐ ԱԲՔ-
» ՄՃ ՅԻՍՐԻՒՅէ ՔՐԻՍՏՈՅԻ ԼԻՌՈՎԻ ԽՇԱԼՆՈՒԹԻՒՆ. (a
» Domino nostro Jesu Cristo plenam potestatem traditam
» esse) արածելոյ, ուղղելոյ և կառավարելոյ զընդ-
» հանուր Եկեղեցին. որպէս նաև ՚ի գործո Տիեզե-
» րական Ժողովոց և ՚ի սուրբ կանոնս բովանդակի :

« Նորոգելով ևս և զաւանդեալն ՚ի Կանոնս
» ԿԱՐԴ այլոց Պատրիարքաց (սահմանեմք) ՈՐՊէՍ
» Զի Պատրիարք Ա. Պօլէ ԵՐԵՎՈՐ ԵՂԵՑԻ զինի Ա.
» մենասուրբ Քահանայապետին Հռովմայ, և Եր-
» րորդ Աղեքսանդրիոյն, և չորրորդ Անտիոքայն,
» և հինգերորդ Երուսաղէմին, պահմամբ իմա՝ ար-
» տօնութեանցն ամենայնի և իրաւանց իւրեանց -- :

Ալ յորդորենք զՊեր. Միասերեանն որ մը-
տադրութեամբ կարդայ, և անշուշտ ինքն ալ կը
համոզուի՝ թէ որչափ մեծ զիհ կայ իր իսան-
դարմանցը և Փլորենտեան սիւնհողոսական վըճ-
ռոյն իմաստից մէջ։ Խեք դեռ յամի 1869. հա-
մոզուած էր ասոր, երբոր Գերերջանիկ Անտոն

Պետրոս Թ. Պատրիարքին առջեւը ծունկ չողած
՚ի ներկայութեան այնչափ Արքեպիսկոպոսաց և
Եպիսկոպոսաց, ուխտի եկեղեցւոյ և բազմութեան
ժողովրդեան արտասանեց սոյն վճիռը ՚ի ձեւն
Ուրբանեան. և նոյն իսկ յամի 1870. Հոկտեմբեր 14/ 26. կը վկայէր ըսելով՝ « Ուրբանեան Յաջ
» ՔՄ Շաբաթեցան և յանձնառու եղան, և բնաւ չէ մեր-
» ու ժեղնան ։ (թուղթ քահանայից առ Առաքելական
նուիրակն Բլուկիմ) :

Գ. Միասերեան բաւական չի համարելով
Փլորենտեան վճռոյն եղած այլայլութիւնը և ա-
նարդանքը, կը յաւելու խանգարել անոր հետ
նաև Լատերանեան Պ. ժողովոյն վճիռն ալ. որուն
վրայէն գաղտագողի անցնելով կուզէ ցուցնել՝ թէ
Փլորենտեան և թէ Լատերանեան ժողովոց վճիռ-
ները նոյնիմաստ ըլլան՝ այն Քաղկեդոնեան ըսուած
իլ. երրորդ կանոնին հետ, մանաւանդ թէ նոյնին
կրկնութիւնը. բայց և ոչ բառ մէջ կը բերէ
յիշեալ Լատերանեան ժողովոյն վճռէն, այն իր
բանին չի դար :

Յիշատակեալ Քաղկեդոնեան ըսուած կանո-
նին արժէքը, և Հռովմէական Քահանայապետաց
ցուցած ընդդիմութեան և մերժման զօրութիւնն
ու աղդեցութիւնը՝ տեսանք գործոյս Առաջին մա-
սին մէջ (Յօդ. Ե.). հս կուզենք համառօտքազ-
գատութիւն մը ընել, որպէս զի յայտնի ըլլայ
թէ որչափ տարբերութիւն, և մանաւանդ ի՞նչ
անդունդներ կանչըսպետն այդ կանոնը՝ Լատե-

բանեան ու Փլորենտեան ժողովոց վճիռներէն՝
Փլորենտեան վճիռը քիչ մը յառաջ տեսանք. բերենք հոս նաև Լատերանեան Պ. ժողովոյն վճիռն ալ, որ է այս “Նորոգեալ (rinnovantes) զի՞ն արտօնութիւնս Պատրիարքական Աթոռոց (ասէ Ին. “նովիկենտիոս Պ.) հաւանելով որբոյ Տիեզերական ժողովոյ՝ վճռեմք, որպէս զի զկնի Եկեղեցւոյն Հռովմայ, որ ըստ ասհանելոյ Տեառն կալու ՚ի Արքայ աշխատութիւններուն (disponente domino super omnes alias ordinariae potestatis obtinuit principatum) էբեւ այդ և ասուցիւ անեւ ՚ի Քրիստոս հաւանացելոց, Կ. Պօլսին զառալինն, Աղեքսանդրիայն զերկըորդն, Անտիոքայն զերբորդն և Երուսաղէմին զօրբորդն կալցին տեղի, պահեալ մէն միոյ զի՞րն արժանապատութիւն (dignitate): Այսպէս ևս Հայրապետք այնոցիկ (Եկեղեցեայ) յետ ընդունելոյ ՚ի Հռովմէական Քահանայապետաց ՂՊալիոնն՝ որ է նշանակ լրութեան պոշտամանն, և յետ բայց Նոց վերտունն հաւատաբանութիւն և զննացնեան համարձակ շը նորհեցեն Աիծակակցաց իւրեանց զՊալիոն, ընդունելով ՚ի նշանէ առ ինքեանս զկանոնական դաւանութիւն, և առ Նկեղեցին Հռովմէական զհանդանունն ՚ի հն: Իսկ Միասերեանի յիշած Ի՞երուորդ կանոնը տես վարը (1):

(1) «Յամենայնի սրբոց հարց որոշողութեանց հետեւեան լով և բարեկալազոն 150 Եպիսկոպոսաց կանոնին՝ որն որ հիմու կարդացուեցաւ նորէն ծանօթանալով, սրբադան քու-

Այս Քաղկեդանեան ըսուած կանոնը՝ ինչպէս ամեն մարդ յառաջին իսկ ակնարկութեան կը տեսնէ, այնչափ հեռի է միւս երկու վճիռներէն՝ որ չոփակի երկինք յերկրէ:

Միասերեանի կանոնը կերպէ որ՝ Հռովմայ Աթոռոյն արտօնութիւնքը ՚ի Հարց չնորհուած են՝ կայսերական քաղաք ըլլալուն համար:

Ընդ հակառակին Լատերանեան և Փլորենտեան ժողովոց վճիռները կը հոչակեն որ՝ Հռովմէական Եկեղեցին և Քահանայապետը ըստ ասհանելոյ Տեառն (և ոչ եթէ ՚ի չնորհմանէ Հարց վասն քաղաքական առաւելութեանց նորա) կալու Դւր ՚ի Արքայ այլն ամրողաքին Կ. Պօլսոյ նորոյն Հռովմայ արտօնութեանց վրայօք նոյնը կորոշենք և կը սահմանենք: Հին Հռովմայ Աթոռոյն համար՝ որն որ հայերէտիոն առաջ էր, արդարութեամբ Հայէտ արքծաններ նորհուն էին, նոյն պատճառաւ նոր Հռովմայու Սրբազնն Աթոռոյն համար ալ նայն ըրէն 150 բարեկարկից Եպիսկոպոսունք, որովհետեւ ուղղութեամբ գատեցին թէ քաղաք մը որ կայսերէն և ծերակուտէն պատուած էր, և հին թագաւորեալ Հռովմայ հաւասար (քաղաքական) արտօնութիւններ ստացած, պէտք էր անոր պէս բարձրանալ և փառաւորիլ ևս և ըստ Եկեղեցական կարգի, Հռովմային ետքը երկորդ քաղաք ըլլալով»: (Միասերեան եր. 8.)

Գետ շատ երկայն է այս կանոնը, բայց Միասերեանի մէջ բերածը այսչափ միայն է, մատեալ մասէն մտադրութեան արժանի են հետեւեալ տողերն ալ: «Եւ բարբարոս» սաց մէջ հաստատուած վիճակաց Եպիսկոպոսունք Կ. Պօլսի Աթոռէն ձեռնադրուին. անոր տրուած կանոնական ընտառ թեան տեղեկադրէն համեմատ »:

Նեցան զբությունիւն է արքայու էլեւ առաջնորդուն : Եւ թէ Քահանայապետին Հայովոյ յանյան երանելոյն Պետքոսի առաջեւուն է 'ի Տեղանէ Թբիլսու Բրիգոսու (և ոչ եթէ 'ի Հայոց ինչպէս կուղէ հաստատել Միասներեան) Լեռնէ էլեւ առնիւն արածելոյ, ուղելոյ և կառավելոյ զնորհանուոր Եկեղեցին : Եւ թէ Քահանայապետոյ Հայովոյ Գլուխ է հաճօքն Եկեղեցոյ (և ոչ եթէ առաջն յակեցն ինչպէս կը շաղիազփէ ինքը) :

Ուրեմն ի՞նչ համեմատութիւն կամ ի՞նչ յարագերութիւն կրնան ունենալ ասոնք մէկզմէկու հետ : Բայց ի՞նչ կրնան ըլլալ արգեօք այն արտօնութիւնները զոր Հարք շնորհած ըլլան Հռովմայ Քահանայապետին 'ի շնորհս կայսերական քաղաքին : Քանի ոչ՝ Քրիստոս Անոր լիուլի իշխանութիւն տուեր և Գլուխ, Հայր, վարդապետ, ուղղիչ և կառավար կարգեր է զԱնիկա համօրէն եկեղեցւոյ և ամենայն Քրիստոնէց : Արգեօք Քրիստոսի տուածայս ձիրքերը անբաւական, կամ թերի՞ կը համարի ինքը, որ պէտք ունենայ լրանալու Հարց շնորհքներովը :

Կայսերական քարաք ըլլալը, ծերակոյտ ունենալը, և ուրիշ աշխարհական մեծութիւնները ըստ ինքնան պատճառ մը չեն եկեղեցական կարգին մէջ բարձրանալու և փառաւորուելու : Պասն զի մեծն Լէսն Քահանայապետին գեղեցիկ խօսքին համեմատ — Ուրիշ է աշխարհային իրաց պատճառը, և ուրիշ Աստուածային իրաց պատճառը — : Աղա թէ ոչ՝ այսօրուան օրս Բարիսի և ուրիշ մայրագաղաքաց եպիսկոպոսները աւելի բարձր դիրք

մը ունենալու էին եկեղեցական կարդին մէջ բայց ընդ հակառակին տեսնուեցաւ նոյն իսկ Վատիկանեան ժողովքին մէջ որ՝ անսնք տռանց նայելու իրենց քաղաքայ արտօնքին պոյժառութեանը և քաղաքական շըեղութեանցը, եկեղեցական նուիրապետութեան մէջ իրենց ունեցած դրիցը համեմատ տեղ կամ աթոռ ունեցան . այսինքն՝ ոչ միայն Պատրիարքներէն, այլ նաև Գահերիցանցմէ վերջը, Արքեպիսկոպոսաց, կամ Եպիսկոպոսաց մէջ ըստ կարգի ձեռնադրութեան իւրեանց :

Ա. Պօլսի եկեղեցւոյն համար՝ Լատերանեան և Փլորենտեան վճիռներուն շնորհածը Հռովմայ Քահանայապետէն ետքը և միւս Պատրիարքներէն առաջ նստելու պատիւ մըն էր, բայց պահեալ մէն միոյ զիւր սեպհական արժանապատութիւն : Ինչպէս յայտնի է յիշեալ ժողովոց խօսքերէն — Նորոգեալ զիին արտօնութիւն Պատրիարքական Աթոռուոց վճռեմք՝ որպէս զի զինի եկեղեցւոյն Հռովմայ . . . Ա. Պօլսին ԿՈԼՅԻ զառաջին տեղին — : — Նորոգեալ զաւանդեալն 'ի կանոնս կարգ այլոց Յարգելի Պատրիարքայ (սահմանեմք)՝ որպէս զի Պատրիարքն Ա. Պօլսի երկրորդ ԵՂԻՑԻ զինի Ամենասուրբ Քահանայապետին Հռովմայ — : Կացի, Եպիսկոպութեանին կը յայտնին որ՝ 'ի նորոյ նոյն պատիւը կը շնորհուէր Ա. Պօլսի Պատրիարքին . և ոչ ենէ հառաջ 'ի վարժածութեան եր ըստ Ի՞ն. ըսուած կանոնին, ինչպէս կուղէ ըսել Միասներեան : Եւ հետեւաբար պէս կուղէ ըսել Միասներեան և Փլորենտեան ժողովքները

Պատրիարքաց կանոնական կարգը նորոգելով, չըռովիայ Քահանայապետէն ետեւ՝ երկրորդ տեղը կ. Պօլսի. Պատրիարքին կը չնորհեն, անով ամենեւին չեն նորոգեր Քաղկեդոնեան ըստած այն ի՞ն. երրորդ կանոնը, որուն անհիմն, անզօր և անվաւեր ըլլալը՝ ցուցինք (Յօդ. Ե.): Ուստի և Փլութենտեան ժողովայն՝ —Պահմամբ իմա՝ արտօնութեանցն ամենայնի և իրաւանց իւրեանց— խօսքը. նոյն կանոնին հետքնաւ յարաբերութիւն մը չունի։ Պատրիարքաց քանի մը արտօնութիւնները կը յիշէ Լատերանեան ժողովքը, որք են

Ա. Հռովմայ Քահանայապետէն Պալիոն ընդունելէն, և Սնոր հաւատարմութեան և հնազանդութեան երդումն տալէն ետեւ, իրենց Վիճակակցաց Պալիոն (1) տալ՝ ընդունելով անոնցմէ կանոնական դաւանութիւն առ ինքեանս և խօստումն հնազանդութեան առ Հռովմէական Եկեղեցին։

Բ. Խաչ տանիլ իրենց առջեւէն (Հռովմ քաղքէն դուրս, և Քահանայապետին, ու Առաքելական Աղժանապատութեան նշանը կրող Անոր նուիբակին ներկայ գտնուած տեղերը՝ ի բաց առեալ)։

Գ. Պատրիարքական դաւառներնուն մէջ գըտնուղները՝ հարկաւոր եղած ժամանակ՝ կարող ըլլան իրենց դիմել. (բաց այն գէպքերէն որ կը բու-

(1) Ա.յս Պալիոնը՝ ըստ Բենեդիկտոսի ԺԴ. ի տարբեր է Քահանայապետին տուած Պալիոնէն, ըլլալով լայն, երկայն և կարմրագոյն, ոսկեճամուկ և ոսկեթել և նկարեալ պատկերօք. տարբեր է նաեւ Եմիփորոնէն։

զոքուի առ Ա. Աթոռն, զոր պէտք են ամենքը խոնարհաբար յարդել խոնարհաբար յարդել)։

Արդեօք ասսնք էին այն Քաղկեդոնեան անուանեալ կանոնով կ. Պօլսի Աթոռոյն չնորհել ուղուած արտօնութիւնները. ո՛րչափ հեռու ըան։

Դարձեալ յիշեալ կանոնը միայն 'ի չնորհս կ. Պօլսի Աթոռոյն նուիբուած է. և կը ճգնի որ՝ զայն ալ հաւասար Հին Հռովմայ Աթոռոյն բարձրացնէ և փառաւորէ. միւս Աթոռներուն անուններն անգամ չի յիշատակեր։

Ընդ հակառակն միւս երկու ժողովոց վճիռները Հռովմայ Քահանայապետին Պլաւառութեան վրա հաւատոյ լարդապետութիւնը յայտնելէն ետեւ, կը յաւելուն նորոգել միւս Պատրիարքաց կանոնական կարգն ալ, ամեն մէկը իր արտօնութիւններովը, իրաւունքովը և արժանապատուութեամբը՝ որպէս զի՞ այս (նորոգեալ) կարգը (որով կ. Պօլսի Պատրիարքին առաջ նստելու պատիւ կը չնորհուի) առիթ առնելով՝ մէկը մէկանոնց վրա առաւելութիւն չի պահանջէ։

Զ.

Վեր. Միասերեան ինքն ալ համոզուած ըլլալով որ, ըսածները՝ խառնաշփոթութենէ զատ ուրիշ արդիւնք մը չեն կրնար մէջ բերել. այսինքն՝ ոչ Ակնարկութեան հեղինակին ըստած ճշմարտութիւնները հերքել, ոչ Պեր. Գաղանճեանին իր Վերջ-

նական Տեսրակով Փլորենտեան վճռոյն նկառմամբ
ըրած խանգարմունքները և այլայլութիւնները
պաշտպանել կամ արդարացնել, և ոչ իսկ բան մը
հաստատել. խօսքը աւելի բացատրելու պատճա-
ռանքով կը ձգէ ժողովոյն վճիռը և կը դիմէ վճի-
ռէն առաջ եղած վիճաբանութեանց : Երանի՞ թէ
գոնէ այս մասին մէջ հաւատարմութիւն պահէր .
բայց 'ի զուր :

Վեր Միասերեանի նոյն վիճաբանութեան վրա
ըրած խօսքերուն բավանդակութիւնը այս է :

Երկար առեն վիճաբանելէն յետոյ , Յոյնք ձեւ մը առա-
ջարկեցին 'ի 23. Յունիս 1459. իբր վերջնական ձեւ , որ է —Պա-
» պին էլիտարական վրա խօսելով՝ ժայրագոյն Քահանայապետ կը
» խոստովանինք զայն , և խնամատար տեղակալ և փոխանորդ
» Քրիստոսի և վարդապետ ամենայն Քրիստոնէից , ուղղիչ և
» կառավար եկեղեցւոյ Աստուծոյ , անարատ մնալով Արեւել-
» եան Պատրիարքաց իրաւունքները և արտօնութիւնները , և
» թէ Կ. Պոլոսյ (Պատրիարքութիւնը) Պատէն ետքը՝ առաջին է,
» յետոյ — եւայլն :

Եւգինէոս Պապն ալ առանց ընդդիմութեան կընդունի
կըսէ և ժողովոյն կանոնը կը պատրաստուի , բայց Յունաց ձեւը
փոփոխելով , Յոյնք կը դժկամակին , մանաւանդ այն յաւելուա-
ծին վրա որ կըսէր թէ Պապու եր արքանունիւնները ունի ըստ
սահմանէլց Աստուծածաշնուշ Պրոց և ըստ սասցուածոյ սրբոց » :

Յոյնք «սասցուածոյ սրբոց» խօսքը իբր հիմն Քահանայա-
պետական արտօնութեանց չեն ուզեր ընդունիլ . ժողովքը ցըր-
ուելու վրա կըլլաց : Ուստի և սասցուածոյ սրբոցը կը վեցցուի
և տեղը Տիեզերական ժողովը ժաբժէր և սրբուածն էնանները կը
դրուին , որով և կանոնին այս մասին վերջին սրբագրեալ ձեւ-

ը որուն Յոյնք ստորագրեցին ըստ Յունական բնադրին կըլլա-
ցար այն դարձան եւայլն :

Հոս քանի մը հարցմանք ունինք ընելու Վեր .
Միասերեանի :

Ա. Յունաց իբր վերջնական մատուցած ձե-
ւը իբր հաւատայ վարդապետութիւն ընդուն-
ուեցաւ , եթէ իբր պատշաճական առաջարկութիւն
մը : Եթէ առաջին կերպով էր , սրբադրութիւն չէր
կընար ըլլալ , ինչպէս իրօք եղաւ և երեւելի փո-
փոխութիւն կրեց նոյն վերջնական ըստած ձեւը :
Իսկ եթէ ըլլ առաջարկութիւն մնէր , ինչու արքի մն
իսկ եթէ ըլլ առաջարկութիւն մնէր , ինչու արքի մն
կը զարմանայ Միասերեան եղած փոփոխութեանցը
համար : Վատիկանեան ժողովքին մէջ ալ չոռվմայ
Քահանայապետին Պլիաւուութեան և անմոլար
վարդապետութեան վրա շատ մը առաջարկութիւն-
ներ եղան , որոնց մէջ կային նաև ընտիր և ըն-
դունելի ձեւեր . բայց և ոչ մէկը իբր վարդապե-
տական (dogmatique) վճիռ համարուեցաւ , և կամ
աղատ 'ի սրբադրութեանց : Միայն այն ձեւն
պատառովիչ , որ 'ի չորրորդ նստին վրձ-
եղաւ պարտաւորիչ , որ է չորրորդ նստին վրձ-
եղաւ և հաստատուեցաւ : Ինքն ալ կը խոստու-
վանի որ՝ ետքէն քրէնական սրբուածներն եղած է
նաև ըստ Յոյնք բնադրին :

Բ. Երբոր Յոյնք ընդդիմացան սասցուածոյ սը-
րոց խօսքին , ըստ սահմանէլց Աստուծածաշնուշ Պրոց խօսքին
ալ ընդդիմացան արդեօք . Միասերեան անոր
համար բան մը չըսեր . ըսել է որ՝ Յոյնք կընդու-
նէին , թէ չոռվմայ Քահանայապետը իր արտօ-
նէին , թէ չոռվմայ Քահանայապետը իր արտօ-

Նութիւնները ունի ըստ առհմանելոյ Աստուածաշանկար, և ոչ եթէ ՚ է Շորհմանէ Հուց՝ ՚ ի պատիւ կայսերական քաղաքին։ Եւ արդարեւ Յոյնք ետքէն ոչ միայն զայս՝ այլ նաև ըստ առաջուածոյ սբուց խօսքն ալ ընդունեցան ինչպէս պիտոր տեսնենք։

Գ. Եթէ կամոնին յետին մասին վերջին արքաւ էրեւլ յեւը եղեր է ըստ այս առարարու են, առջի մասերուն վերջն արքաւը յեւն ինչպէս եղեր է։ Արդեօք իր 8. գ և 9. դ երեսները ըւածին պէս, թէ Պեր. Գաղանճեանին հնարած փառիսկի և փառարարչ բանաւուն ձեւոյն պէս, աս երկուքն ո՞րն է։

Դ. Աւրեմի իր տետրակին 10. դ երեսին մէջ յիշուած 1439 Յունիս 23 ին՝ Յունացմէ իբր վերջնական առաջարկուած ձեւն ինչ եղաւ. Միասերեան բոլորովին անյիշատակ կը թողու զայն։

Ե. Ի՞նչ և ո՞րն էր այն պատրաստուած ձեւը. բուն հարազատ ձեւը, զոր Ակնարկութեան հեղինակը մէջ բերեր էր (եր. 83-24). թէ Առաջուեան կամ Միասերեան խանդարեալ և այլայլեալ յեւը։

Վ. Կ. Միասերեանի թողլով ասոնց պատասխանը, համառօտիւ յիշենք նոյն վիճաբանութեան ընթացքը։

Ե.

Յոյնք ինչպէս միւս (այսինքն Հոգուոյն Սըր.)

բոյ բիսման, ՚ Քաւարանին են .) ինդրոց, ՚ նոյնպէս այս (Հռովմայ ՚ Քահանայապետին գլխաւորութիւն) ինդրոյն վրա ալ ամենայն աղասութեամբ վիճեցան, իրենց ունեցած առարկութիւններն առաջարկելէն և ճիշդ պատասխաններն ընդունելէն ետեւ, համոզութեանը, անանկ տեղի տուին և միաբանեցան անոնց հետ։

Ի սկզբան Հռովմայ Աթոռոյն գլխաւորութեան վրա ալ շատ ընդդիմութիւններ յարուցին։ Յունիս 9 ին Կ. Պօլսի Պատրիարքը Յովսէփ վախճանեցաւ տալով իր դաւանութիւնը, զոր մէջ բերած եմ յԱկնարկութեան (եր. 24.)։

Պատրիարքին մահուանէն ետքը Յոյնք չէին ուղեր գործքը ալ առաջ տանիլ, բայց ետքէն հաւանեցան և Կոյսեր հրամանաւ նորէն սկսաւ բանակցութիւնը և վիճաբանութիւնը։

Յոյնք զկնի խորհրդակցութեան ընդունեցան Հռովմայ ՚ Քահանայապետին արտօնութիւնները երկու բան ՚ի բաց առեալ. այսինքն նախ ՚ որ ՚ Տիեղերական ժողովք չի գումարուի առանց ինք ՚ նակալին (Յունաց) և Պատրիարքաց, եթէ գան. ՚ իսկ եթէ կոչուելով չի դան. ասոր համար ժողք զովք ըլլալու արգելք չըլլան։ Երկրորդ եթէ ՚ մէկը Պատրիարքաց մէկէն անիբաւութիւն կրած ՚ համարելով՝ պատահի որ բողոք ընէ. Պատրիարք ՚ ները դատուելու համար ինքնին չի ներկայա ՚ նան. այլ ինքը Պապը քննիչներ խրկէ գաւառ-

» ները , և հմա անոնց առջեւ իրողութիւնը տես-
» նուելով , անիրաւութիւն կրողը իր իրաւունքը
» բատանայ » : Երբոր այս Առաջարկութիւնը Քա-
» հանայապետին հաջորդուեցաւ , Անիկա ասովլ գոհ
չեղաւ . այլ կուզէր որ դրուի թէ «Քահանայապե-
» տը իր արտօնութիւնները ունի բոլոր եկեղեցւոյ
» վրա բողոքը իրեն կըլլայ , և Անիկա (Պապը)
» կարածէ և կուզէր Քրիստոսի Եկեղեցին՝ իր-
» բեւ Հովիւ զհօտ . ուստի և իշխանութիւն և
» կարողութիւն ունի Տիեղերական ժողովք հրա-
» տարակելու (կամ դումարելու) երբոր կարեւոր
» ըլլայ , և կը հնազանդին իր որոշմանը Պատրի-
» արքունիք — : Կայսրը ըստ թելագրութեանց ոմանց
հակառակասէր Յունաց և մանաւանդ Մարկոս Ե-
փեսացւոյն՝ (որ միշտ հակառակ կը կենար միու-
թեան ընդ եկեղեցւոյն Հռովմայ , երկայն բարակ
վիճաբանելին և ճշմարտութիւնը տեսնալին ետքն
ալ .) պատասխանեց , եթէ այդ այդպէս է մեր աս-
կէց մեկնելուն հոգ տարէք :

Միութեան յոյսը դրեթէ կտրուելու վրա
էր : Քայց Ուութէնաց , Նիկիոյ , Միտիլինայ Յոյն
Արքեպիսկոպոսները միջնորդ եղան , որպէս զի
այս բանիս վրա նորէն խորհուրդ ընեն : Եւ եր-
կու (Յունաց և Լատինաց) կողմէն չորս անձինք
ընտրուեցան որ այս նիւթիս վրա վիճեն : Ետքը
երբոր Յոյնք իրենց բնակարանը դարձան , համա-
ձայնութեամբ որոշմունք ընելով՝ ստորագրեցին
հետեւեալ Յայտարարութիւնը . — Պապին դիմա-

» ւորութեան նկատմամբ (de primatu Papaes) կը
» խոստավանինք որ անիկա (Պապը) է ծայրադոյն
» Քահանայապետ և դործակալ , տեղակալ և փո-
» խանորդ Քրիստոսի , Հովիւ և ուսուցիչ ամե-
» նայն Քրիստոնէից . ուղղիչ և կառավար Եկե-
» ղեցւոյն Աստուծոյ , պահուելով (salvis) Արքեւել-
» եան Պատրիարքաց արտօնութիւնները և իրա-
» ւունքները : Նաեւ Կ. Պօլսի Պատրիարքը՝ Պապէն
» ետքը երկրորդ ըլլայ , յետոյ Աղեքսանդրիա-
» յինը , անկէց ետքը Սնտիոքայն , և վերջին Երու-
» սալէմին — : Անիկա դլելէն ետեւ որոշեցին որ
անկէց ընդարձակ բան մը ոչ գրեն և ոչ առնեն :
Եւ թէ որ այս ալ Պապը ընդունի անկէց անդին
բան մը չընեն : Յունիս 25 ին ուրբաթ օրը այս որոշ-
մունքը ըրին Յոյնք և շաբաթ օրը Ուութէնաց
և Միտիլինայ Մետրոպոլիտները Արքալան Պապին
եկան և յայտնեցին որ՝ — ահա ամեն բանի՝ զոր
Զեր Երանութիւնը ինդրեց , համաձայնեցանք և
մենք ամենքնիս ինչ որ ուզեց ըրինք . և ուրիշ
բան չենք ուզեր , բայց եթէ ինչչափ որ հնարէ
շուտով դորձը վերջանայ Եւ որովհետեւ մին-
չեւ հիմա շատ տօներ անցան . և խաղաղութիւն մը
չեղաւ . հիմակ կը յուսանք որ՝ գլխաւոր Առաքե-
լոց Տօնին առթիւը մեզի տայ այս պարգեւը : Այս
ալ ոչ առանց կամացն Աստուծոյ . որովհետեւ դուք
էք Անոնց (Գլխաւոր Առաքելոց) Յաշորդը , պէտք
է որ նոյն օրը առատաձեռնեն Զեզի այս պսակը ,
ըստ որում իրենք անեղծանելի պտակին հասած են .

ուրեմն շուտով, որպէս զի անոնց տօնին օրուան պատարագներուն հանդիսութիւնները՝ ՚ի միասին կատարենք :

Քահանայապետը ասոնք լսելով՝ ուրախացաւ և դովեց իրենց ջանքը, խօսք ալ տուաւ որ՝ նոյն օրը խորհուրդ ընելով՝ եղած որոշումը ընդունելու հոգ կը տանի, և զիրենք ապահովցուց գործքին յաջող ելիցը : Ասոնք լսելէն ետեւ Մետրոպոլիտները տեղերնին դարձան և ամեն բան իրենց ժողովոյն և կայսեր ծանուցին :

Ետքէն երկու կողմէն ընսրուած անձինք վրձույն ձեւը պատրաստեցին : Կայսրը (ըստ թելադրութեան վերոյիշեալ հակառակասիրաց)՝ երկու կողման համաձայնութեամբ պատրաստեալ ձեւոյն վրա դժուարութիւններ կը հանէր : Յառաջաբանութեան մէջ՝ կուզէր որ՝ այն — Եւդինէս ծառայ ծառայիցն Աստուծոյ ՚ի յիշատակ յաւէրժական — . սկզբնաւորութիւնը՝ կամ բոլորովին վերցուի և կամ հետեւեալ յաւելուածովը — համաձայնելով վեհափառ Խնքնակալին, Պատրիարքին Կ. Պօլսի և այլոց Պատրիարքաց — դրուի :

Երկրորդ դժուարութիւնն էր՝ Քահանայապետին արտօնութեանց համար դրուած այն խօսքը, թէ Պապը իր արտօնութիւնները ունի ըստ առհանելու առելք էրոց և առաջուածոյն Սբոց : Կայսրը, կամ վերոյիշեալ հակառակասէրք՝ բերանով նորա՝ ըսին, — թէ սրբոց մէկը իր թղթերուն մէջ պատուէ շՊապը, արդեօք արտօնութեանց տեղ պիտոր

առնուին — : Ուստի և կը ծանուցանէին որ կամ անիշ կա ուղղագրել տրուի, և կամ իրենց դարձին հոգտարուի : Այս բանը երբոր լսեց Սրբազն Քահանայապետը խոսվեցաւ և յայտնեց իր զարմանքը : Բայց կարդինալաց միջնորդութեամբ դարձեալ խօսքի սկսուելով Յառաջաբանութեան սկզբնաւորութեան համար խնդրուած յաւելուածոյն վրա դիւրաւ համաձայնեցան . և առ ժամն զրուեցաւ համայնչելով վէճական բնուակալին և Պարքիսրաց, թէ մէկ ետքէն վերջնական ձեւոյն մէջ քիչ մը տարբեր ձեւով դրուեցաւ : Իսկ ըստ առաջուածոյն սրբ խօսքը Լամակինք չէին ուղեր փոխել, և կըսէին թէ սուրբերուն ըսածներէն աւելի որ տեղաց կրնանք ունենալ գլխաւորութեան վարդապետութիւնը :

Բայց ինքնակալն ալ կը մտածէր որ հան բան մը դնելու է, ուստի և կը խնդրէր որ՝ ըստ առաջուածոյն սրբաց վերցուի և տեղը դրուի ըստ զբութեան հանուաց . կարդինալները բնաւ չի հաւանեցան և եւան գնացին :

Երկու օր վերջը կարդինալը նորէն եկան ինքնակալին քով, ուր ժողովուած էին Արքեպիսկոպոսունք (Յունաց) և այլք, Յուլիանոս կարդինալը յորդոր մը ըրաւ և ըսաւ որ՝ — ըստ առաջուածոյն սրբոց յապաղելու չէ միութիւնը, վասն զի սրբոց ասացուածներէն բաղկացեալ է հաւատայ հանդանակն ալ, պատարագն ալ, կանոններն ալ, և սրբոց ասացուածներէն դուրս՝ բան մնալ չէ եղած — , Այս և ասոր նման խօսքերէն եաեւ լոեց :

Իսկ ինքնակալը ժամանակ ուղեց խորհրդակակալու : Եւ կարգինալները դուրս ելածին պէս, Յոյնք իրենց մէջ ժողովելով և խորհուրդ ընելով՝ վճռեցին որ — Պառը էք արտօնութեաները առնի ըստ կանոնաց և առաջարկութոյ աբբոց և առուբ էր էրոց և դործոց ժողովը — Եւ այս իրենց որոշմունքը դրուած կարդինալաց յանձնեցին, որոնք՝ մենք ինքնին բան մը չենք կրնար պատասխանել — ըսին, և խօսք տուին վաղուի օրը պատասխան բերելու :

Երկրորդ օրը կարդինալները նորէն ինքնակալին եկան, որոնց առաջինը Յուլիանոս յայտնեց որ՝ Քահանայապետը հարկաւոր չէր տեսած չորսը մէկն դնել, այլ երկուքը միայն ընտրած էր . ինչ պէս դրած եմք (յեր. 82.) : Կարդինալը հետեւնին բերած էին ուղղագրեալ ամբողջ ձեւն ալ : Յետ ընթեռնելոյ և առանձին խորհրդակցելոյ, կայսրը ՚ի դիմաց ամենեցուն (Յունաց) յայտնեց իրենց համաձայնութիւնը : Ասոր վրա երկու կողմէն վեց անձինք որոշուեցան, որպէս զի վճիռը Յունարէն և Լատիներէն դրեն Յայսմաւուրքին (in diptycis) մէջ, աջ կողմը Լատիներէն, որպէս զի Լատինք ստորագրեն և դնեն Պապին կնիքը, իսկ միւս կողմը Յունարէն, որպէս զի Յոյնք ստորագրեն և դնեն ինքնակալին ոսկի կնիքը :

Վերջապէս Յուլիոս Յին Լատինք և Յոյնք միանգամայն ժողովեցան Փլորենտիոյ մեծ եկեղեցին՝ որ յանուն Մարիամու, Եւգինէոս Պ. Զայնաւոր Պատարագ մատոյց՝ որուն Յոյնք ալ եկեղեցական

զգեստուք ընթերակաց գտնուեցան . պատարագէն վերջը միարան լիթանիա երգեցին, և ետեւէն ՚ի հանդիսական նստի ժողովոյն վճիռը կարդացուեցաւ . Լատիներէնը ընթերցաւ Յուլիանոս Ս. Սաբինայ կարդինալը, իսկ Յունարէնը Բեսարիոն Նիկիոյ Արքեպիսկոպոսը : Եւ ՚ի բաց առեալ զՄարկոս Եփեսացին, թէ Լատինք և թէ Յոյնք ամենքն ալ յօժարակամ ստորագրեցին : Այս վճռոյն Հռովմայ Քահանայապետին գլխաւորութեան վրա եղած մասը, ինչպէս Պատրիարքաց համար ըստածներն ալ, ամբողջ մէջ բերած եմք (յեր. 82.) : Հոս կուղենք յիշել նաեւ որ՝ թէ Եւ 18 Մետրոպոլիտ ներկայ էին Յունացմէ (լիդ որս էր և ամենայն Ռուսաց Մետրապոլիտը), բայց ասոնցմէ ոմանք Աղեքսանդրիոյ, Անափոքայ և Երուսաղէմի Պատրիարքաց, նաեւ ուրիշ վեց բացակայ Մետրապոլտաց տեղապահութիւն կընէին, որք և թէ իրենց և թէ նոյն բացակայից անուամբը՝ յիշեալ վճռոյն հանունքունք (contentus subscripsi) : Իսկ Քահանայապետը այս ձեւով ստորագրեց — Ես Եսէն Եպիսկոպոս կանոնէի եկեղեցոյ այսպէս առնանեալ ստորագրեց : Ետեւէն կուղան Լատին հարց ստորագրութիւնքը :

Ահա այս է Հռովմայ Քահանայապետին գըլ խաւորութեան վրա Փլորենտիոյ ժողովքին մէջ եղած վիճից համառօտ քաղուածքը և վերջին հանդիսաւոր նստին պատմութիւնը՝ յորում եկեղեցեաց միութիւնը ՚ի գլուխ ելաւ կատարեալ համաձայնութեամբ երկուստեք, ինչպէս կը սորվեցնեն մե-

զի նոյն Փլորենտեան ժողովոյն պատմիչները , յո-
րոց իսկ քաղեցինք վերոյիշեալ համառօտութիւնը:
Ընթերցողին թողլով համեմատել դայս — Քա-
նի մը խօսք — տետրակին եր . 10 և 11 . դրածնե-
րուն հետ . մենք կանցնինք նկատելու վեր . Միա-
սերեանի ներկայացուցած մէկ բոլորովին նոր տե-
սարանը :

Ը.

Վեր . Միասերեանն փոխանակ իր խոստմանը
համեմատ՝ պատմութեամբ անցից ժողովոյն բացա-
տրելու՝ վճռոյն վրա ըրած իր շփոթ խօսքերը : Ա-
ռանց ամբողջ բան մը հասկցնելու՝ աճապարանօր
կը վագէ պատմութեան վրայէն . և երբոր կը թէ
թէ — կանոնին այս մասին վերջին սրբագրեալ
ձեւը՝ որուն Յոյնք ստորագրեցին , ըստ Յունական
բնադրին կը լլայ այսպէս ըստ այն բաղադրամուն — ևն ,
հօն ալ Բնաւ կանկ չառներ , կարծես որ՝ էռու մէրու
ոռու առաջնն համեմատ կը վախնայ՝ չը լլայ թէ մէ կը
բան մը հարցնէ . և կամ ուզէ գիտնալ թէ կանո-
նին միւս մասերուն վերջին սրբագրեալ ձեւը ինչ-
պէս եղեր է . ալ Վեր . Միասերեան չի գտնուիր
՚ի Փլորենտիա , արդէն տագնապառ և խուճապ-
մամբ մեկներ է անկէց : Լոենք Միասերեանի նոր
զիւտը :

Վերոյիշեալ խօսքը հաղիւ լմեցուցած անմիշ-
չապէս վրա կը բերէ Վեր . Միասերեան , « Մանա-

» ւանդ թէ լսոտ ոմանց Եւգինէսս ՚ի . ին ձեռօք տարածուած
» ժողովոյս օրինակներէն չառերական ըլլալով՝ ՚ի Գայն Անդ-
» զիական լեզուաւ եղած օրինակը պահուած է , և այս օրի-
» նակիս մէջ ԱՄԲՈՂՋ Քրոնչւալ էաննը կը պակսի . և մի-
» այն մնացեալ կանոնները կը յիշատակուին , այսինքն Հոգ-
» ուոյն Սրբոյ բղիմոն վրա ևն . ևն . ևն . »

Երեք տարիէ ՚ի վեր Փլորենտեան վճիռը ի-
րենց ձեռքը զործիք ըրած , ամենուն ականջը
խլայննելէն և օդը թնդայնելէն ետեւ , արդարեւ
առանց զարմանքի չի կրնար ընթերցողը ակնարկել
վերոյիշեալ տողերը , այսպէս ահա յառաջին բաղխ-
ման ասպարընկէց կը փափչին ասպարիզէն . բայց
թէ ու՞ր , պիտոր տեսնենք երրորդ մասին մէջ :
Ճշմարտութեան սուրն է որ կը հալածէ զիրենք , ՚ի
զուր է նոր ապաստանարան բնառել , և նոր դիրք
կազմել :

Ուրեմն ըստ Միասերեանի՝ Եւղինէսս ՚ի .
՚իահանայապետին ձեռքով տարածուած ժողովոյտ
որոշողութեան օրինակներէն չառերական օրինակին
մէջ ամբողջ կը պակսի Փլորենտեան վճույն հին-
գերորդ մասը , յորում կը խօսի Հռովմայ ՚իահանա-
յապետին յԱստուածուստ աւանդեալ իշխանու-
թեան և Պատրիարքաց կանոնական կարգին վրա :
Ուրեմն ի՞նչ բանի վրա կը հիմուի , Գեր . Պա-
շանձեանին գոհուին և գոհութեն ուշնորութենը , զոր
Պատրի և Սրեւելեան Պատրիարքունք ըրեր են
կըսէ Փլորենտեան ժողովոյն մէջ . քանզի այն մա-
սը ըստ Վեր , Միասերեանի ՚ի Գայն պահուած չառե-

բուհն օրէնակին մէջ ամբողջ չէնց . ըսել է որ նաեւ ըստ
Միասերեանի՝ ոչ վաւերական և անդոյ հիման վրա
կանգներ է Վեր . Գաղանճեան իր չէնքը : (Մէնք
ալ արդէն՝ յԱկնարկութեան եր . 17 . բայց ուղիղ
սկզբամբ և ճիշդ հետեւութեամբ առաջ գրա հէնեւ
իսրաւել չն+ անուանած էնք անոր դրութիւնը , և
ինքնահնար և երազեալ յորջորջեր էնք անոր՝ մէջ
բերած դաշնագրական ձեւը) :

Ուրեմն Վեր . Միասերեանի՝ իր տետրակին
մէջ եր . 8-11 . ըսածները՝ աւելրդաբանութենէ
և զրախօսութենէ ուրիշ արդիւնք մը չունին . ու-
րովէնետեւ ըստ իւր իսկ խօստովանութեան ոչ վա-
ւերականի և անդոյի վրա է այն խօսածները :
Բայց երբ ինքը այսպիսի անզուգական և չնաշ-
խարհիկ գիւտ մը ունէր , ի՞նչու մէկէն՝ ի մէկ
զայն մէջ տեղ չի հանեց , և այն անցարմար և
անալի զրախօսութիւնները ընել յանձն առաւ՝ ի
ձանձրութիւն ընթերցողաց : Ուրեմն անդոյ է նաև
այն դաւանութիւնը զոր կը գնէ ինքը իր տետրա-
կին 15 . երեսին ստորոտը : Անհիմն և անդոյ էր
արդեօք այն դաւանութիւնը զոր սեզանոյն պաշ-
տօնեայ եղած ատենը տուեր էր , յորում Փլորեն-
տեան վճռոյն այն մասը մեր նշանակած կեր-
պով ընդունեցաւ և դաւանեցաւ . զոր և տակա-
ւին յամի 1870 Հոկտ . 14/28 , կը վկայէր իր ըս-
տորադրութեամբը թէ բնաւ չէ մերժած (թուղթ
Ք. առ Բլուիմ) : Այսա՛ փ սկեպտիկեանութիւն :
Սակայն դիտնայ Վեր . Միասերեան որ ասոր վրա

բնաւ չենք զարմանար , վասն զի աղէկ համոզուած
ենք որ՝ ուղղափառ ճշմարտութենէ շեղովին ճամ-
բան անվրէպ դէպ ՚ի Սկեպտիկեանութիւն կեր-
թայ : Ապա թէ ոչ եթէ Միասերեան կը հաւա-
տայ որ կայ յեկեղեցով ճշմարիտ հաւատք և ան-
մոլար վարդապետութիւն , ի՞նչ հարկ կայ ընդ-
վայր ասդին անդին յածելու . հարցնէ Եկեղեց-
ւոյ և ահա հինգ-վեց հարիւր չարք Վատիկանու՝
Գերագոյն Պլիսոյն հետ կը սորվեցնեն թէ ո՞րն է
Փլորենտեան վճռոյն Հռովմայ Քահանայապետին
գլխաւորութեան վրա հաւատոյ վճիռը (Ժողով-
Վատիկ . նիստ Դ. Պ. Պ.) որ ըստ ամենայնի այն
է զոր մէջ բերած ենք :

Վեր Միասերեանն ալ՝ ինչպէս նշանակեցինք ,
նոյն կերպով զայն կընդուներ և կը դաւանէր Փլո-
րենտեան ժողովոյն՝ Հռովմայ (Քահանայապետին)
գլխաւորութեան վրա հաւատոյ վճիռը . և թէ նոյն
Քահանայապետը գերագոյն դլուխ է Եկեղեցւոյ :
Իսկ հիմակ կը վերջացնէ իր խօսքը ըսելով թէ
Հռովմայ Քահանայապետն ունի միայն զառաջնու-
թիւն յԵկեղեցին : 32 ամիս վերջը ինչէ՞ն առաջ
եկած է այս փոփոխութիւնը :

Վեր “ էական քարբերունիւն դրին էական եղանակին
մէջ ” եւայլն խօսքը , էակ խօսքը և հիմ շանունիւն-
թեան կանուանէր Վեր Միասերեան իր տետրա-
կին սկիբը և կըսէր որ՝ — Եթէ Արեւելցիք և եթէ Ա-
րեւմտցիք՝ Հռովմայու Եպիսկոպոսին Քահանայապետական
իշխանութեանը նկատմամբ ունեցած կախումներուն մէջ՝ ոչ

էթէ էական, այլ և ոչ իսկ պատահական տարրերութիւնն ունին և կրնան ունենալ:

Ի՞նչ է արդեօք այն Քահանոյապետին իշխանութիւնը. — մըայն ունել զառաջնութիւն յեկեղեցին: Առաջին ըլլալէն ի՞նչ կախում յառաջ կուզայ: Ապա ուրեմն Փլորենտեան վճռոյն — Քահանայապետն Հռովմայ է Յաշորդ Երանելոյն Պետրոսի իշխանին Առաքելոց և փոխանորդ Քրիստոսի, և համօրէն եկեղեցւոյ Գլուխ և ամենայն Քրիստոնէից Հայր և Վարդապետ, որում 'ի Յիսուսէ Քրիստոսէ աւանդուած է լիուլի իշխանութիւն արածելոյ, ուզելոյ և կառավարելոյ զընդհանուր Եկեղեցին — խօսքերը արդեօք Հռովմայ Քահանայապետին Պատրիարքական իշխանութեանը համար միայն ըսուած են, որոնց — Արքեւէցչիւն սարտարակութիւն — : Հռովմայ Եպիսկոպոսին իշխանութիւնը՝ ըսելուն իմաստը ի՞նչ է, արդեօք անիկա վերատեսչութեան պաշտօն մեջ կուղէ ըսել. և ոչ եթէ կորդասոր, ճշաբառակիւն Եպիսկոպոսին և անդիշական իշխանութիւն 'ի վերայ համօրէն եկեղեցւոյ միանգամայն և ուրոյն ուրոյն առեալ:

Ի զուր ուրեմն կը զրպարտէ Վեր. Միասերեան թէ Ակնարկութեան Հեղինակը մտքերը շրփոթել կուղէ և կաշխատի: Ակնարկութեան Հեղինակին ըսածները հաստատեց ինքն իսկ առաւելքան զառաւել և շիտակը խօսելով Անիկա չէր կարծեր որ Գեր. Գաղանճեանին դրած տարբերութիւնը այսչափ մեծ և ընդարձակ է եղեր:

Եւ ցարդ իսկ՝ չենք կրնար դիւրաւ համոզութիւն որ Գեր. Գաղանճեան՝ գոնէ ըստ ամենայնի հաւանի Քահանի մը խօսք տետրակին հեղինակէն իր խօսքերուն տրուած մեկնութեանցը:

Միասերեան տարբերութիւն չի կայ և չի կրնար ըլլալ ըսելով՝ պիտոք կրնայ արդեօք դոցել ուղղափառ վարդասկետութեան և իր մէջը բացուած ահաղին վիճը. — անկարելի բան: Մենք ցուցինք թէ իրօք էական տարբերութիւն կար վերջնական պատասխանուոյն մէջ, զոր առաւելքան զառաւել լայնցուցեր և խորացուցեր է ինքը:

Հոս կը լմնայ ինչ որ վերջնական տետրակին և Ակնարկութեան մէջ եղած վիճաբանութեան նիւթին ուղղակի կամ անուղղակի վերաբերութիւն մը ունի: Բայց որովհետեւ Վեր Միասերեան յուղուած խնդրոյն նիւթէն բոլորովին դուրս ուրիշ քանի մը դէպքեր և վկայութիւններ ալ ուզեր է մէջ բերել. վասն որոյ կարեւոր կը դատինք անոնց վրա համառօտ ակնարկութիւն մը ընել գործոյս Երբորդ մասին մէջ, ինչպէս խոստաշած եմք 'ի Յառաջաբանութեան:

Վեր . Միասներեան Փլորենտեան ժողովը և
անոր մեծահռչակ սիւնհոդոսական վճիռը՝ քիչ մը
առաջ տեսնուածին պէս՝ ձգելէն ետեւ , աճապա-
րանօք կը դիմէ 'ի Բասիլէա իրեն նոր դիրք մը
կազմելու , և կը յիշէ պատմական դէպք մը՝ որ
բոլորովին դուրս է մէջ խնդրէն : — Չհունան+ կըսէ
այն վէճը , ո՞ն որ ուշէ ունեցեր էր Եշէնէս Պ. Պատին և
Պաշտէան Տիեզերական ժողովն հարց էջ— : Բայց որ-
չափ որ ուզէ ինքը ուրիշ կերպով նկարել յիշեալ
դէպքը , պէտք է գիտնայ որ , նախ՝ նոյն ժողովը ,
Տիեզերէան չէ . և երկրորդ հետեւեալն է անոր հան-
գամանքները :

Եւգինէոս Պ. յամի 1431 առանձին կոնդակով կո-
չեց նոյն ժողովը , բայց լսելով որ եկողները խիստ
քիչւոր են և վախ կայ Հուսեանց դարանակալութե-
նէն , միանդամայն ժողովքի հրաւիրեալ Յոյնք կը
խնդրէին որ՝ Խտալիոյ ծովեզերեայ քաղաքներէն
մէկուն մէջ ըլլայ այն , վասնորոյ իր միտքը յայտնեց
որ՝ կուզէր նոյն ժողովը փակել և ուրիշ մը բանալ
ի Պոլոնիա : Բասիլեանք ընդդիմացան պատճառանք
պատճառելով թէ ժողովը օրինաւոր է կանոնա-
կան կերպով կոչուած ըլլալուն համար են : Ուստի
և երբոր յաջորդ տարւոյն սկիզբը փակման կոն-

դակը հասաւ , հաստատ կեցան իրենց յամառու-
թեանը մէջ : Եւ թէպէտ բոլորը դեռ 14 եպիս-
կոպոսունք (ետքէն ատեն մը շատցաւ այս թիւը
և գարձեալ նուազեցաւ) միայն ժողովուած էին ,
այսու ամենայնիւ համարձակեցան ժողովը շարու-
նակելու , և մէջ բերելով կոստանդեան ժողո-
վոյն (1) մէկ վճիռը , (որ ուրիշ պարագայով և

(1) Կոստանդեան ժողովը 1414 ին վերջերը՝ գումարուե-
լով , մինչեւ 1418 ին դէպ 'ի կէսը տեւած է . Մարտինոս Ե-
ֆահանայապետը վերջի շորս նիստերուն գահերէց նստաւ ,
յորս Վեկլեփի և Հուսի հերետիկոսական մոլորութիւննե-
րը երկու կոնդակով կրկին դատապարտեց , ու եկեղե-
ցին բարեկարգելու համար սահմանադրութիւններ հրատա-
րակեց : Խոկ այն սկզբունքներուն դէմ զոր ոմանք ցձանձ-
րոյթ կը կրկնէին հակառակ գերագոյն իշխանութեան Փա-
հանայապետին . հետեւեալ հանդիսական որոշումն ըրաւ և
վճռեց որ՝ —մէկու մը երբէք իշխանութիւն չի կրնար տըր-
ու ուիլ , որ Առաքելական Աթոռէն կարենայ ուրիշ տեղ մը
» բոլորեւ , կամ նոյն Աթոռին 'ի հաւատոյս տուած վճիռ-
» ները մերժել , Վերջին նիստին մէջ հաստատեց ու օրի-
նաւոր հրատարակեց ինչ որ նոյն ժողովոյն մէջ հաւատոյ
նիւթերու վրայօք և օրինաւոր կերպով (conciliariter) յա-
ռաջագոյն որոշուած էր : Խոկ ինչ որ խոռվայոյզ և աղմկա-
լից գժտութիւններով , այս է՝ ալորինաւոր կերպով (tumul-
tualiter) առանցնական գումարուներու մէջ , կամ եկեղեցական
բարեկարգութեան նկատմամբ որոշուած էր՝ չի ճանշաւ և
չի հաստատեց : Անոր համար կոստանդեան ժողովը Մարտի-
նոս Ե . բորգէն հրաարակուած սահմանադրութիւններուն
կամ Անկէ հաստատուած մասնական որոշումներուն մէջ տիե-
զերական կը ճանչուի , խոկ ընդհանրապէս առեալ Տիեզերա-

ուրիշ իմաստով և առանձնական դումարման մը
մէջ տրուած էր) կը կրկնէին զայն, լրտար էմցաւած
մը տալով անոր, ինչպէս պիտոր տեսնենք ետքը.

Խնդիրը երթալով վնասակար կերպարանք մը
կառնուր, և խիթալի էր մեծ հերձուած մը. մա-
նաւանդ որ աշխարհական իշխանք ալ միջամուխ
էին 'ի նպաստ Բասիլեանց, և ծանր պատճառներ
և վտանգներ կը տադնապէին զբահանայապետը.
որ թէ առ ահի մեծասաստ սպառնակաց և թէ յու-
սալով դարման մը ընել վերահաս չարեաց. 'ի
տագնապ ժամուն խոհեմութիւն դատեց զիջանիւ
ի նորոգութիւն ժողովոյն, որ ինչպէս սկսաւ՝ նոյն-
պէս շարունակուի. բայց սակայն բնաւ ամենեւին
տեղի չի տուաւ անոնց մոլար դրութեանը որով
կուղէին Քահանայապետը Տիեզերական ժողովոյն
ստորակարգել, ինչպէս կը զրէ ինքնին առ Փրան-
կիսկոս Փոսկարինի դուքս Վենետիկոյ — Աւելի յան-
ճըն կառնութիւնք կըսէ՝ այս Առաքելական Արժա-
նապատւութիւնը և Մեր կեանքն ալ վրա դը-
նել, քան թէ հաճութիւն տալ պատճառ և ըս-
կիզբն ըլլալու, որպէս զի Քահանայապետական
Արժանապատւութիւնը և Առաքելական Արժո-
ուոյն իշխանութիւնը ստորակարգուի ժողովոյ՝

կան չէ, և ոչ իսկ կը հաշուի 'ի թիւ միւս (ԺԹ.) Տիեզերա-
կան ժողովը : Արդ այն վճիռը զոր ըստ Միասերեանի կը
նորոգէին Բասիլեանք՝ զործ էր ոոյն (Կոստանդնուպոլիս) ժողովոյ
չըրորդ համատար ժողովունքունք :

„Հակառակ ամենայն կանոնաց և օրինաց, որ ոչ
“երբէք եղած է առաջուց, ոչ Մեր Նախորդնե-
նը մէկը ըրաւ և ոչ իսկ Անոնցմէ ինդրուած
“կայ— . (Ուայնալ. յամ 1433. թիւ. 19.).
Ուստի և նոյն նորոգութեան վճռովը յայտնի պայման
դրած էր որ՝ Յիշեալ ժողովը նախ վերցնէ
“ամենայն և իւրաքանչիւր արարք և դործք ընդ-
“դէմ իշխանութեան իւրոյ (Քահանայապետին),
“և յետս իր նախկին վիճակին դառնայ— : (Կոնդակ
նորոգութեան ժողովոյն՝ որուն սկիզբն է սկսմ)
Եւ երբոր Բասիլէա խրկեց Սբալաթիոյ Արքեպիս-
կոպոսը — Որպէս զի ընդունի յետս կոչումն այնմ
“ամենայնի՝ զոր նոյն ժողովքը ըրեր կամ գործեր
“էր հակառակ իշխանութեան և ազատութեան
“Անձին իւրոյ և Առաքելական Աթուոյն, շնոր-
“հեց բասիլէան ժողովոյն հարց՝ որ իրենց առա-
“ջին վիճակը դառնան, իբր թէ (ժողովոյն) լու-
“ծումը եղած չըլլար— . (Հարտուին ժող. Բասիլ.
Հաւաք. 1587): Եւ այս փոփոխութիւնը եղաւ,
— Միւնհոգոսը խոստմունք տալով, և իշխանք ապա-
“հովութիւն՝ որպէս զի պահուի իր Մրբութեան
“և Առաքելական Աթուոյն պատիւը— . ինչպէս
կը հաստատէ Թուրքէքրէմաթա ժամանակակից
կարդինալը (Բով. զեկեղ. Գիրք. Բ. Գլ. ձ.) :

Եւ արդարեւ Բասիլէանք տակաւ զդաստանա-
լով՝ յայտնի խոստմունքներ արուեցան՝ որպէս զի
Քահանայապետին Անձին և իշխանութեան դէմ
եղած թշնամական որոշմունքները արձանագրու-

թեանց մէջէն ջնջուին և ոչնչացուին . և Քահանայապետական փոխանորդները՝ արդեամբք ժողովոյն գահերեցութիւնը ընեն : Այս կերպով բարեկարգուելով ժողովը՝ կը յուսացուէր որ՝ իր կոչմանը պատասխանէ : Բայց աւազու, որ քիչ տեւեց այն բարի ակնկալութիւնը . և Բասիլեանք դարձեալ իրենց առջի աղմկալից վիճակին դառնալով կուղէին օրէնսդիր հանդիսանալ Քրիստոսի Փոխանորդին և Եկեղեցւոյ Գերադոյն Գևայն վրա : Քահանայապետական փոխանորդները յայտնապէս դէմ դրին յայն ժողոհողներուն՝ որք ընդ ամենայն էին 10 Եպիսկոպոսունք և 13. Աբբայք: Իսկ Եւդինէս Պ. տեսնելով որ՝ չէ հնար զանոնք կարգի և ուղղութեան բերել, նոր Կոնդակով մը ժողովը՝ ի Փերրարա փոխադրեց . և պատուիրեց իր փոխանորդաց որ յետս դառնան, և հրաման ըրաւ ամենուն՝ ի մամնաւորի Բասիլէա գտնուողներուն՝ ընդպատժով բանադրանաց և զրկման, որ՝ ի պայմաննեալ միջոցի գումարուին՝ ի Փերրարա, ուր յամի 1438.

(8. յունուար) բացուեցաւ ժողովը, և շուտ մը 160 Եպիսկոպոսունք ժողովեցան՝ որոց ոմանք Բասիլէայէն եկած էին՝ հնազանդելով . Քահանայապետական հրամանին :

Անդին՝ տակաւին Բասիլէա մնացողները իրենց յամառութեան մէջ շարունակելով՝ կը ջանայիննաև դՅոյները իրենց կողմը որսալ: Բայց անոնք, ինչպէս նաեւ բոլոր Արեւելցիք (Յոյնք, Հայք, Ասուբեր, Մարտիք, Եւթովպացիք և Քաղդէացիք)

ըստ հոչակաւոր Ամբրոսեան Առածին . ՈՒՐ ՊԵՏՐՈՍ, ԱՆԴ ԵԿԵՂԵՑԻ (ubi Petrus, ibi Ecclesia), արհամարհելով անոնց հրապոյը կը դիմէին անդ (ի Փերրարա և՝ ի Փլորենտիա)՝ ուր կը գտնուէր Պետրոս՝ յանձն յաջորդին իւրոյ Եւգինէսս Պ. Քահանայապետի, և ոչ անդ (ի Բասիլէա)՝ ուր առանց Պետրոսի կը կարծէին Եկեղեցի մը կաղմել:

Այս է ահա Բասիլեան ժողովոյն համառօտպատմութիւնը, որ օրինաւոր կերպով (այս է՝ կանոնական հրաւիրմամբ Եւգինէսսի Պ. ի) սկսելով՝ աղմկալից շփոթութեամբ առաջ դնաց . Ետքէն բարեկարգուելով՝ քիչ ատեն աղէկ ընթանալէն ետեւ՝ դարձեալ անկարգ գնացք մը ունեցաւ, վասնորոյ և փոխադրուեցաւ՝ ի Փերրարա և անկէց ի Փլորենտիա . սակայն Բասիլէանք (ըստ մասին) չի հնազանդելով այս փոփոխութեանը՝ Երբոր իրենց խելքովը կը կարծէին շարունակել զայն՝ դարձաւ եղաւ շարութով, հերձուածուական, ճորժուացին, և առանց ամիսեցն էլեան :

Գալով նոյն ժողովոյ վճիռներուն . Եւգինէսս Պ. զանոնք չի հաստատեց, ինչպէս ինքնին վկայեց նոյն Քահանայապետը Փլորենտեան ժողովոյն մէջ, ըսելով՝ — Իսկ մենք (Բասիլեան) ժողովոյն շարութեանը հաւանեցանք, կամելով՝ որ շարութեան կուի ինչպէս որ սկսած էր . բայց անո՞ք չէ իւնեւ « չի հաստատեցն — (Կարդ. Թուրբէքը. Բով. զԵկեղ. Գլորք. Բ. ՊԼ. Ճ.) : Եւ ոչ այսչափ միայն, այլ և նոյն Բասիլեան ժողովոյն՝ հակառակ իշխանութեան

Հոռվմէական Քահանայապետին և Սուաքելական Աթուոյն տուած վճիռները և զայն՝ որով կուզէր հաստատել թէ Տէւէրակն ժողովը Քահանայապետին բերադոյն է, դատապարտեց հետեւեալ կերպով՝ ի Փլորենտեան ժողովի : — Նոյն նախադասութիւնները՝ ինչպէս վերը ստորագրուած են՝ Բասիլեանց չարաշար իմացուածոյն համեմատ, ինչպէս արդեամբք կը տեսնուի, իբրեւ հակառակ Սուրբ Գրոց և Ս. Հարց, և ճարաց նորին խէ կոստանդնէտն ժողովն, իբրեւ ամբարդշտ, դայթական, ինչպէս նաեւ յայտնի հերձիչ, և ամեն եկեղեցական կարգերը և Քըրիստոնէական Պետութիւնը վրդովելու ձկտող, ո հաւանելով նորին սուրբ ժողովոյն (Փլորենտիոյ)՝ կը դատապարտենք և կը հերքենք և դատապարտեալ և հերքեալ կը հրատարակենք . (սահմանադր. Moyses vir Dei, 6. սեպտ. 1439 : Նոյն նախադասութիւնները դատապարտուեցան նաեւ Լատերանեան (Ե.) ժողովէն և հրատարակուեցան հերձուածողական, ապստամբեցուցիւ և ամենեւին անուզը (Նիստ. ԺԱ.):

Միասերեան փոխանակ բոլոր պատմութիւնը աչքէ անցնելու դրգին մէկ երեսը միայն կարդացերէ. հանգոյն Մակարայ Անտիոքացւոյ, թէ « ես զայն քանն միայն ժողովեցի ՚ի գրոց Հարց (և Միասերեան ՚ի պատմութենէ ժողովոյն Բասիլոյ) որք իմոց խորհրդոց և կարծեաց օդնականք էին » : (Ակնարկ. եր 32.) : Եթէ Եւգինէոս Քահանայապետը ժամանակին ծանր պարագաները նկատելով խո-

հեմոթիւն դատեց զի՞ոզոթիւն մը ընել որ ժողովը՝ իբր ոչ գաղարեալ, առաջուան պէս շարունակէ . ասով Աստուածուսափիրեն աւանդուած իշխանութենէն չի մերկացաւ : Ուստի և երբոր դարձեալ պատշաճ դատեց, փոխադրեց ժողովը ՚ի Փերրարա և ՚ի Փլորենտիա, և սփիւռք աղդաց իրեն հրազանդեցան . հրամայեց նոյն Բասիլեանց եւս՝ որ թողով յիշեալ քաղաքը՝ պայմանադրեալ ժաման Փերրարա դան, և թէ՝ ով որ անոնցմէ՝ ժողովոյն յետս կոչուելէն ետեւ՝ Բասիլէա կենայ կամ ժողովական դործոց մասնակցի՝ բանադրեալ ըլլայ, և զրկեալ յամենայն աստիճանէ ՚ի պատւոյ և ՚ի բարերարութեանց, և իբր հերձուածող և ապստամբընդ Կորիսայ, Գաղանայ և Սքիրոնի ըլլայ ՚ի կորուստ յափիտենական դատաստանի : Եւ դատապարտեց անոնց իբր ճշմարտութիւն հաւատոյ հրատարակած մոլար նախադասութիւնները, զօր իբրենց երկրորդ նատին մէջ նորոգած էին, և երրորդու երկստասաններորդ նիստերուն մէջ կը կնչած, ինչպէս կը զրտացէ Միասերեան : Եթէ Սըբազոն Քահանայապետը այսպէս էւժուունեան ոէր չէր ճանացուէ՝ ինչպէս ասոնք ամենը ըրաւ՝ ոչ յառանձնութեան, և ոչ ազմկալից աղաղակներով և մոլեգին ապերասանութեամբ իբրեւ զիմասիլեանս . այլ ՚ի Սուրբ Տիեզերական ժողովին Փլորենտիոյ, և — հասանելով նորին Արքոյ ժողով — : Արդեօք հոս ալ հուսկ ուրեմն պիտոր համարձակի ինքը՝ — Եւքինէոս Դ. Քահանայապետ Փլորենտիոյ Հարց բերանուլը այլանէ աւետարանեց — ըսեւ

լու . ինչպէս Պիռս Թ . Քահանայապետին համար ըստ է (եր . 16.) : Թողունք մէկ դի միւս աղջաւատանքները :

Բայց արդարեւ՝ ի՞նչ պասճառաւ արդեօք Միասերեան սոյն Բասիլեան ժողովրին գործքերը մէջ բերեր է : Վասնզի անիկա ոչ երկու ուրոյն եկեղեց , ոչ Սուբդուտեան մի Արեւելքան եկեղեցոյն և անոր անշատնելէ , անբանաբարելէ , իշխանեն են , են յատկութեանցը և կամ անձակուն նույրապետական գլուխ անուանեալ , ամեռուց վրա բան մը խօսան է . ոչ Պատրիարքական անուոյ էւխանունեան սուրբելիքնեւու նկատմամբ զրոյցը մը ըրեր է . և ոչ իսկ Գեր . Գաղանճեանի Փլորենտեան ժողովոյն ընծայած գոփեակի և գոփեակի տաշտրունեան վրայօք ձեռնտուութիւն մը կը մատուցանէ : Ուրեմն ի՞նչ կրնայ ըլլալ Միասերեանի նոյն գործքերը յիշելուն պատճառը . ուրիշ բան չէ արդարեւ , բայց եթէ ջանալ որչափ հնար է ՚ի նուազութիւն իշխանութեան Քահանայապետաց Հռովմայ , հանդոյն Բասիլեան ժողովոյն՝ որ բարի և բարձր նպատակի համար հրաւիրուած ըլլալով փոխանակ անոր համեմատ ընթանալու , յաւէտ աշխատեցաւ ՚ի վնաս և ՚ի նուազութիւն Աստուածատուր իշխանութեան Քահանայապետաց . և հուսկ ուրեմն ՚ի չարաժողով փոխուեցաւ , և արժանապէս դատապարտուեցան ՚ի Փլորենտեան և ՚ի Լատերանեան (Ե) ժողովոյ՝ անոր մոլար վարդապետութիւնները : Միասերեան այսպիսի ժողովոյ մը դիմելով յայտնի կընէ որ՝ իր վախճանը աղջային իրաւունք

պաշտպանել չէ , այլ դատապարտեալ նախադատութիւնները նորոգել : Բայց լսենք և այն զարմանալի հետեւութիւնը զոր ինքը կը հանէ յիշեալ ժողովոյն գործքերէն . —ուրեմն ասոնց առաջնորդ միանգամայն կը հաստատեն մեզի եթէ , եկեղեւոյ մէջ թէ որ Քահանայապետական իշխանութիւն կայ , կան նաև Տիեզերական ժողովը և Եպիսկոպոսական և Պատրիարքական իշխանութիւնք . « Եւ զորս ետ Աստուած յեկեղեցով այս են , նախ՝ զառաքեալս , երկրորդ զմարդարէս , երրորդ զվարդապետս , ապա զօրութիւն են . » — (Ղ. Կող . ԺԲ. 28).

Նո՞ր բան , այս է եղեր իր բոլոր թնդմանց , զընդմանց և գոնչմանց հետեւութիւնը . պարապաշխատութիւն , և անօգուտ ժամանակ վատնել : Այս՝ կայ յեկեղեցով Քահանայապետական իշխանութիւն , կայ Եպիսկոպոսութիւն , կայ Տիեզերական ժողովը , և նաեւ Պատրիարքութիւն . ո՞վ ուրացեր է զասոնք : Բայց զիտնայ Միասերեան որ Բասիլեանք Պատրիարքութեան վրա խօսք չեն ըրած . և Կորնթացւոց թղթէն առաջարմար է հոս տեղ . և Քիինկ առջ Աստուածաբանին խօսքն ալ՝ բոլորովին անտեղի և պարունակող մոլար վարդապետութեան և դատապարտեալ նախադատութեան , ինչպէս տեսանք (մասըն Բ. Յօդ. Ա.) . և համառօտ , իր խօսքերը հոս բոլորովին իրենց կապը և կապակցութիւնը կորսընցաւցեր են . ցաւալի բան : Արդարեւ կը ցաւինք , ակնելով թէ՝ յուզմունքը և տագնապը շփոթեր են իր դաղափարները , որով խօսելի և դատապարտեալ վարդապետութիւնները՝ Առը գրոց

խօսքերուն հետ իրար անցնելովինքնահնար և ըլռունազրօսեալ հետեւութիւններ հանելու կը նկրտի , և կուզէ (մեր հասկյածին համեմատ) ըսել որ՝ Հռովմէական եկեղեցին կամ Հռովմէական վարդապետութիւնը , Քահանայապետական իշխանութենէ դուռը կոխարդուհին էւխանութիւններ միայն իր հանչայ , Արքելով յատուի կարգութը էւխանութիւններն , և ասով յօդա աշորադներ շնելով կը յիշէ Սարելեան , Եւտիքական և Միակամադաւան հերետիկուաց շփոթութիւնները .

Բայց հարբաւոր էւխանութիւններ ըսելով՝ եթէ իրօք կարգաւոր իշխանութիւնը կիմանայ , այս է՝ Եպիսկոպոսականը , ի դուր կը զրովարտէ . բաւական էր իրեն ընթեռնուլ Վատիկանեան ժողովցն վճիռը , և ահա նոյն ընդ նոյն կը տեսնէր իր մեծ սիսալմունքը : Բերենք հսո զայն — Այլ քաւ լիցի ասել՝ թէ « սոյն այս ծայրագոյն Քահանայապետին իշխանութիւնն միանալ ինչ գործիցէ այնմ Եղիսկողոսահին ԿԱՐ » ԴԱՒԹՈ և անօթչ էտն էւխանութիւնն էրտաքանութիւնն , ու « ըով Եպիսկոպոսունք՝ որը եղեալը ՚ի Հոգւոյն » Արբոյ յաջորդեցին ՚ի տեղի Առաքելոց , իբրեւ « ճշմարիտ հովիւք զ՚ի հողս նոցա զյանձնեալ « Հօսո իւրաքանչիւր ոք զիւրն հովուեն և կատա « վարեն , նա՛ զի զայս իշխանութիւնն նոցա զերա « դոյն և ընդ համուր Հովիւն (Քահանայապետան) — « հատատէ , զօրացուցանէ և պաշտպանէ — ևն (ժող. Վատիկ . նիստ . Պ. Գլ. Պ.) : Հասկցաւ հիմա ըրած զրադարձութեան սարութիւնը և անի-

ըաւութիւնը : Սակայն եթէ հորդուոր իշխաններ ըսելով կուզէ իմանալ նաև Պատրիարքական , Մետրոպոլտական ևն իշխանութիւնները , կը վրիպի և կը մոլորի . որովհետեւ անոնք իբր եկեղեցական սահմանադրութիւն չեն հորդուոր :

Ուստի Սարելեանց Եւտիքականաց և Միակամեայց պէս շփոթողը չէ թէ Հռովմէական Եկեղեցին և անոր Գլուհարտած պահուած սաւրէ Հարբաւադնեան է , այլ ինքն Միասերեան և որոնք իրեն պէս կը խորհին :

Միասերեան յախուռն յառաջ վարելով իր խօսքը կը յիշէ նաև հատուած մը ներկայ Արքազան Քահանայապետին յամի 1848 . առ Արեւելեայս ուղղած շրջաբերականէն (որ կըսկսի ու սորտում) , յուսալով զուցէ նպաստ մը գտնելւ : Բայց իր հանել ուղղած հետեւութեան որչափ անդէպ և անհիմ ըլլալը իմանալու համար՝ բաւական է միայն ընթեռնուլ յիշեալ հատուածը (ըստ Ճիշդ և հարազատ թարգմանութեան)՝ որ է այս — Զեր վրա « ուրիշ բեռն չենք գներ (կը խօսի Քահանայապետը առ չմիացեալ Արեւելեայս) , բայց եթէ « սա կարեւոր եղածները , այս է՝ որ ՚ի միութիւն « դառնալով ՀԱՄԱՀԱՅԱՅԻՑ Մեջի Հեծ Հեծ ՚ի դաւանութիւն ճշմարիտ հաւատոյ , զոր ունի և կուտուցաւ « նէ Կաթողիկէ Եկեղեցին , և այս Եկեղեցւոյ ու « սոյն Պետրոսի Գերադոյն Աթուոյն հետ հաղորդ « դութիւն պահէք : Խոկ ձեր նուիրական ծեսերուն « վրաբերելներ պահուին , դուրս ձգելով միայն

» զամոնք՝ որ գուցէ յիշեալ ըստանման ատենք
» սպրդած ըլլան հակառակ նոյն կաթողիկէ հա-
» ւասոց և միութեան— : Հոս ալ՝ ինչպէս Բենե-
» գիկոս ԺԴ բորդէ առնուած հատուածին մէջ (տես
» եր . 10 . ևն .) խօսքը ծեսէ վրա է , իսկ Միասեր-
» եանց բնտուածը ծեսերէն առելէ ծանը և կենական բաներու-
» և բարերունեներուա վրա կը կայանայ (վերջ . Պիտ .
» եր . 5 .) . սրուն հետքն անդամ չի գտնուիր բերուած
» վկայութեան մէջ : Բայց տես թէ որպիսի վրիպակ
» և մոլար հետեւութիւն կը հանէ անկէց ինքը — Ե-
» յիրաւի՝ կըսէ՝ այս էր եկեղեցոյ միութեան սահմանը ,
» ընդհանուր եկեղեցոյ հետ համաձայնիլ՝ ի ճշմարիտ դաւա-
» նութեան , և եկեղեցեաց հետ յիսրում կարգի հաղորդիւ— :
Ոչ . ասիկա չէ Սրբազն Քահանայապետին ըստածը՝
» ինչպէս յայտնի է անոր խօսքէն , որ կըսէ թէ՝ — Դ-
» չէ հետ համացանէ+— , և չկայ բնաւ տարբերութիւն
» մը Անոր այս՝ և հետեւեալ կանդակաց մէջ . բա-
» ւական է մտադիւր ընթեռոնուլ զանոնք :

Միասերեան իր անկապ խօսքը շարունակե-
» լով ինքնահնար ենթագրութիւն մը կընէ , իբր
» թէ մարդու Աստուածական բնութեան յատկու-
» թիւն սեփականուած ըլլայ (շիտակը չի կրցանք ճշգիւ-
» իմանալ թէ ինչ կուզէ ըսել հոս) , և կը յաւելու
» շուայլել անինայ շուայլ հայնութիւն , հասպարաւութիւն ,
» ներեւութիւն , և հերիութեանութիւն բառերը : Արդեօք
» ո՞լու դէմ . . . իրեն միայն է զիտելի : Եւ
» հուսկ ուրեմն կը վերջացնէ իր անէ ըս եւսերը , ըսե-
» րդ — Ուսորի Համել (Քաղաքը) և Համբայ Քահանու-

» յառեւոք ըստ Փլութենտեան ժողովոյն առնէն մոյն զուռազնութիւն
» յեւեղեցին , ըստ այս բարակու , որ ի է բործ Տիեզրակոն ժո-
» ւ Եւ և է սբազն իսուն բովանդակին — : Փլութենտեան
» վճռոյն այս կերպ չըլլալը՝ լիովին ցուցինք 'ի մասն
» Բ . և մէջ բերինք զայն յեր . 82 . բայց ինքը այս
» իր ինքնահնար ձեւը կանուանէ — Ռուզանդա հաստոք
» և բարեւութիւն , յորմէ՝ կըսէ՝ ոչ ոք կրնայ խախտել , թէ
» և յերկնեց հրեշտակ ըլլոյ — : և այսպէս լիովին կը հաս-
» տատէ մեր ըստածը (յԱկնարկութեան եր . 29:) :
» Գեր Գաղանճեան — Գայն իրը Պապ և իրը ընդհանուր
» Եկեղեցւոյ նախագահ կը ձանչնար և կը պատուէր — իսկ
» Վեր . Միասերեան անկէ առաջ երթարլով կըսէ ,
» թէ — Հառվմայ Քահանայապետը ունի Գայն զառաջնութիւն
» յեկեղեցին — ուստի կը հաստատէ առաւել քան զա-
» ստել զայն , զոր իր տետրակին սկիզբը կուզէր
» Ժխտել իւր իսպորճան և հէն նշութեան անուանելով :
» Եւ ոչ այսչափ միայն այլ և կը համարձակի յանդու-
» գըն ժպիհութեամբ այլաշ աւետարանուն անուանելու
» Վատիկանեան Տիեզերական Առուրբ սկսնհոգոսին
» վճիռները , որպէս թէ Եկեղեցւոյ Գերագոյն Գլու-
» խը հակառակ խստմանն Քրիստոսի պահանջան է հա-
» ստու և ընդ նմա բոլոր Եկեղեցին Քրիստոսի , և
» Միասերեան մը միայն մնաց ուղղափառ հաւատքը
» և դաւանութիւնը յայտնելու :

Այսպէս ահա ինքնին իսկ յայտնաբարբառ կը
» քարոզեն եթէ Աղգային իրաւանց և սովորութեանց
» սլաշտպանութիւն ըստածը՝ դարձուած մըն է բա-
» նից և կեղծ պատրաստէ մը՝ առ 'ի պատրել զբարե-

միտս . իսկ բուն նպատակն է մաքառիլ ընդդէմ
Աստուածաւանդ իշխանութեան Քահանայապետին
Հռովմայ՝ ինչպէս յայտնի կը տեսնուի մինչեւ ցայս
վայր զրուածներով : Բայց պէտք է մտքէ չի հանել
Յիսուսի Քրիստոցի Տեաւն մերոյ անդարձ վճիռը
— Ամենայն որ ընդ հարցի ընդ վէճս ընդ այս փըշ-
րեսցի , և յոյր վերայ անկցի հոսեացէ զնա — (Ղուկ.
թ. 18.) . իննեւտասն գարու պատմութիւնը կը հա-
ւաստէ մեզի այս զարմանալի խօսքին սոսկալի հե-
տեւութիւնները :

ԱԿՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ

U. 2.

No 4773

